



ՆՈՅ ՆԱՀԱՊԵՏԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԻՊԱՇԱՐ

ՆՈՅ ՆԱՀԱՊԵՏԸ
(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԻՊԱՇԱՐ)

Աշխատասիրությամբ՝ Կարեն Հովհաննիսյանի



Երևան 2024

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ

Գիտական խմբագիր՝ Բ.Գ.Թ. Տորք Դալայան

ՀՏԴ 398
ԳՄԴ 82
Հ 854

Հովհաննիսյան Կարեն
Հ 854 Նոյ նահապետը (ժողովրդական վիպաշար) / Կ. Հովհաննիսյան. –
Եր.: ՀԱԻ հրատ., 2024. – 128 էջ:

Գիրքը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում ներկայացված են
Նոյ նահապետի և համաշխարհային ջրհեղեղի մասին ժողովրդական
ավանդազրույցները՝ որպես մեկ ընդհանուր վիպական շարք: Գրքի
երկրորդ մասը պարունակում է Նոյի և ջրհեղեղի մասին գիտական
հետազոտություն. ժողովրդական զրույցների համեմատությունը
աստվածաշնչյան համապատասխան դրվագների հետ, տեղական
առանձնահատկությունները, քրիստոնեական–եկեղեցական ընկա-
լումները:

ՀՏԴ 398
ԳՄԴ 82

ISBN 978-9939-886-63-3
© Կ. Հովհաննիսյան, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ.....	5
ԱՌԱՋԱԲԱՆ	8
ՄԱՍ ԱՌԱՋԻՆ (Բնագրեր)	
ՆՈՅ ՆԱՀԱՊԵՏԸ (Ժողովրդական վիպաշար)	13
ՆԱԽԵՐԳԱՆՔ.....	13
ԴՐՎԱԳ I	
ՋՐՀԵՂԵՂԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ.....	16
ԴՐՎԱԳ II	
ԼԵՌՆԵՐ	23
ԴՐՎԱԳ III	
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ	33
ԴՐՎԱԳ IV	
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ.....	40
ԴՐՎԱԳ V	
ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՎ ԹՈՂՈՒՆՆԵՐ.....	45
ԴՐՎԱԳ VI	
ՏՈՆԵՐ ԵՎ ԱՄՍԱՆՈՒՆՆԵՐ	58
ԴՐՎԱԳ VII	
ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԷԱԿՆԵՐ	62
ԴՐՎԱԳ VIII	
ԾԵՍԵՐ ԵՎ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	64
ԴՐՎԱԳ IX	
ԽՐԱՏԱԿԱՆ.....	68
ԴՐՎԱԳ X	
ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆԸ ԵՎ ՄԾԲՆԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱԿՈԲԸ	79
ՀԱՎԵԼՎԱԾ	85
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	93
ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ	
ՆՈՅ ՆԱՀԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԻՊԱՇԱՐԸ (Հետազոտություն)	101
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	119

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Մարդկության նախասկզբի և համընդհանուր նախահոր մասին պատկերացումը ստեղծվել է հնագույն ժամանակներից՝ աշխարհի տարբեր ծագերում և տարբեր ժողովուրդների ավանդական գրույցներում: Բազմաթիվ ավանդույթներում մարդիկ իրենց տեսակի սկզբնավորումը պատկերացրել են փուլային տարբերակով՝ հատկապես երկփուլ, ընդ որում առաջին փուլի ավարտն ազդարարել է համաշխարհային մեծ աղետը, տարբերակների գերակշիռ մասում՝ ջրհեղեղը, որից փրկված միակ մարդն ու նրա ընտանիքը դարձել են երկրորդ փուլի նախահայր(եր)ը: Սովորաբար իբրև ջրհեղեղի պատճառ նշվում են մարդկանց ամբարտավանությունը, ծիսական և բարոյական տաբուների խախտումը¹: Համաշխարհային ջրհեղեղի օվկիանոսից մարդության վերածնումը նմանեցվել է նախասկզբնական քառասյին ջրերից կյանքի առաջացմանն ու աշխարհի արարմանը²:

Ետջրհեղեղյան նախահայրը տարբեր անուններ ունի տարբեր ավանդագրույցներում՝ *Զիոսուդրա*, *Քսիսուսպրոս*, *Այրա-Հասիս*, *Ուր-նասպիշտի*, *Դեկալիոն*, *Նոյ* և այլն: Որպես կանոն, այդ հերոսը կառուցում է փայտե տապան կամ նավ, որի մեջ համաշխարհային ջրհեղեղի ժամանակ փրկվում են ոչ միայն մարդկության միակ արդար ներկայացուցիչն ու իր ընտանիքը, այլև կենդանի մյուս էակների տեսակները և անգամ բույսերի սերմերը: Կյանքի մանրատիեզերքն (միկրոկոսմ) ամփոփող այս նավը ջրերի մեջ օրեր, շաբաթներ կամ ամիսներ շարունակ տարուբերվելուց հետո կանգ է առնում տվյալ տարածաշրջանի՝ ենթադրաբար ամենաբարձր գագաթի վրա (*Նիցիր*, *Պառնաս*, *Մասիս*, ևն):

Համաշխարհային ջրհեղեղի մասին պատմող հայկական ավանդագրույցներն ունեն կարևոր մի առանձնահատկություն. դրանք սերտորեն կապվում են Հայկական լեռնաշխարհի տեղանուններին՝

¹ Հմմտ. Емельянов В.В., Мифологема потопа и шумерская историография// Петербургское востоковедение/ St.Petersburg Journal of Oriental Studies, 1994, vol. 6, с. 232-233.

² Woolley L., Stories of the Creation and the Flood//The Flood Myth (ed. Alan Dundes), Berkley-Los Angeles-London, University of California Press, 1988, p. 89-99; Leeming D., Flood//The Oxford Companion to World Mythology, Oxford University Press, 2004, p. 1382.

հատկապես լեռնանուններին: Մյուս կարևոր գիծն այն է, որ տապանը հանդես է գալիս որպես խոսուն արարած, ով երկխոսության մեջ է մտնում իրեն «հանդիպած» յուրաքանչյուր լեռնագագաթի հետ: Այսինքն՝ ի տարբերություն կանոնիկ տեքստերի, ժողովրդական բանավոր ավանդությունը չի առանձնացրել միայն *Ազադ Մասիսը* (Մեծ Արարատը). ջրհեղեղի «դասական» տարբերակում դա է տապանակիր լեռը, որի վրա գալիս հանգրվանում է Նոյան տապանը՝ ջրերի մեջ երկար դեգերելուց հետո:

Հայ բանահյուսական տեքստերում, գեղարվեստական հնարքի միջոցով, այլ լեռներ նույնպես սկսում են հավակնել տապանակրի տիտղոսին, և այդպես տապանի ետջրհեղեղյան նավարկումն ու տարբեր լեռնագագաթների հետ «բանակցությունները» դառնում են ջրհեղեղի մասին վիպաշարի սյուժեի հիմնական բաղկացուցիչ մասերից մեկը: Սա անուղղակիորեն կարող է պայմանավորված լինել նաև նրանով, որ ըստ Աստվածաշնչի և նրա համար հիմք ծառայած միջագետքյան ավանդության՝ տապանը կանգ է առնում Հայաստանի լեռներում, որը միջագետքյան լեզուներում շարունակում էր կոչվել Արարատ, իսկ լեռներն էլ՝ համապատասխանաբար Արարատի կամ Արարատյան լեռներ (8, 1-4): Հետևաբար, տապանը կարող էր ընդունել ցանկացած լեռ, որ կհամարվեր ամենաբարձր կամ կունենար այլ նպաստավոր հատկանիշներ՝ վիպական մտածողության համաձայն:

Պատմական Հայաստանի ամեն մի գավառի կամ նահանգի ժողովուրդ իր երկրամասի նշանակալից լեռնագագաթ(ներ)ը ձգտել է որևէ կերպ առնչել տապանի դեգերումներին, դրանով իսկ տեղական նշանակության գագաթներին ոչ միայն համագգային, այլև համաշխարհային դեր է վերագրվել: Որպես կերպարներ ներգրավվելով այս վիպաշարի մեջ՝ լեռներից յուրաքանչյուրը, կարծես, միջագգային ասպարեզ է դուրս գալիս ժողովրդական այս ասքերի միջոցով:

Որպես «երկրորդ Ադամ»՝ Նոյի կերպարը սկսում է առնչվել նաև աշխարհի արարմանը, այս միտման շնորհիվ բազմաթիվ առասպելաբանական տարրեր են թափանցում Նոյի վիպաշար, ինչպես՝ երկնային որոշ երևույթների (օրինակ՝ ծիածան), որոշ կենդանիների (կատու, լու, ոջիլ ևն) և արհեստների/գբաղմունքների (օրինակ՝ խաղողագործություն և գինեգործություն) առաջացումը, տոմարային կողերը (օրինակ՝ 40 օր ու գիշեր տևող անձրևը, 40 օր Արարատի լեռների վրա կենալը, 7 օր հետո աղավնու վերադառնալը, 365 օր

տապանում մնալը) ևն: Անգամ տապանն ինքը վերածվում է աշխարհի մանրակերտի, ինչը տեսնում ենք տակավին աստվածաշնչյան ավանդույթում, որտեղ տապանի երեք յարուսները խորհրդանշում են տիեզերքի երեք հորիզոնական շերտերը և դրանց բնորոշ էակներին (ներքևից վերև՝ սողուններ և կենդանիներ, մարդիկ, թռչուններ):

Սույն գիրքը նպատակ ունի մեկ ամբողջական ժողովածուի տեսքով ներկայացնելու համաաշխարհային ջրհեղեղի շուրջ հայերի մեջ պատմվող և տարբեր ժամանակներում գրառված բոլոր հայտնի ավանդագրույցները, որոնք դասակարգված են ըստ ժամանակագրության և ըստ թեմաների: Հեղինակը կարողացել է ոչ միայն տարատեսակ տպագիր և անտիպ աղբյուրներից քաղել ու ի մի բերել այդ պատումները, այլև գտնել դրանք ընդհանուր տրամաբանական շղթայի մեջ զետեղելու վիպաբանական սկզբունքները:

Ընտրված եզրույթը՝ *վիպաշար*, լավագույնս բնորոշում է վիպական այս պատումների ամբողջությունը: Վերնագիրը՝ «Նոյ նահապետը», որոշված է ըստ գլխավոր գործող անձի, ով հանդես է գալիս որպես մարդկության «երկրորդ նախահայր»: *Ժողովրդական վիպաշար* ժանրային անվանումը հստակ ցույց է տալիս այս ստեղծագործության բանահյուսական բնույթը՝ անկախ նրանից, թե այն ի սկզբանե արդյո՞ք գրական հիմքեր է ունեցել, թե՞ առավել հին բանավոր պատումներն են ավելի ուշ ենթարկվել գրական-կրոնական ազդեցությունների: Գրքի հեղինակը խնդիր չի դնում միանշանակ պատասխան տալու այս հարցին, սակայն սյուժետային ընդհանրություններն ու տրամաբանական շղթաները հուշում են, որ բանագիտության մեջ առաջին անգամ վերականգնվող այս վիպաշարը այս կամ այն չափով գոյություն է ունեցել բանավոր ավանդության մեջ: Բնականաբար, ինչպես և կամայական այլ վիպական համահավաք պատում, «Նոյ նահապետը»-ը բանագիտական սկզբունքներով համակցված արհեստական վիպական ստեղծագործություն է, որը, սակայն, ունի հստակ ժողովրդական հիմքեր և տեսականորեն միանգամայն հնարավոր է, որ այն ինչ-որ մի ժամանակ որևէ տարածաշրջանում կարող էր պատմվել որպես առանձին բանահյուսական վեպ:

Տորք Դավալյան, ք. գ. թ.

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն,
Բանագիտության բաժնի վարիչ

ԱՌԱՋԱԲԱՆ

Նոյի հետ է կապված աշխարհի ամենաէական իրադարձություններից մեկը՝ համաշխարհային ջրհեղեղը: Այդ ջրհեղեղի ավարտից սկսվեց նոր աշխարհը, և գլխավոր դերակատարումն ուներ Նոյ նահապետը: Նոյ նահապետն աստվածաշնչյան ամենասիրելի կերպարներից մեկն է ոչ միայն քրիստոնյա, այլև մուսուլման ժողովուրդների մեջ: Նրա մասին ջրհեղեղից առաջ և հետո պատմվում են բազմաթիվ ավանդազրույցներ տարածաշրջանի (Առաջավոր Ասիայի) ժողովուրդների մեջ: Պատահական չէ, որ Նոյան տապանի և համաշխարհային ջրհեղեղի մասին աստվածաշնչյան պատմությունն [Ծննդ. 9-10] ունի իր բազմաթիվ ժողովրդական-պարականոն¹ տարբերակները:

Նոյ նահապետի մասին զրույցները շատ տարածված էին և են նաև Հայաստանում: Ջրհեղեղն ընկալվում էր որպես իրականում տեղի ունեցած իրադարձություն, այսինքն պատմական իրողություն էր: Այն ուներ մի գլխավոր հերոս՝ Նոյ նահապետը, որի շուրջ միավորված էին նրա կինը և որդիները, լինելով մեծ իրադարձության՝ ջրհեղեղի ժամանակակիցն ու մասնակիցը: Որդիներն էլ՝ Սեթը, Քամը և Հաբեթը, ունեին իրենց ձյուղերը, թեև ոչ ընդարձակ:

Նոյի մասին հայկական ավանդազրույցները հիմնականում վերաբերում են Մասիս լեռանն ու շրջակա գավառներին, թեև հայտնի են պատմական Հայաստանի գրեթե ամբողջ տարածքից: Հայաստանի գրեթե ամեն նահանգ ուներ պատմություններ, որ տապանը դեպի Մասիս ընթանալու ժամանակ փորձել է հանգրվանել նաև տվյալ նահանգների կամ դրանց գավառների հայտնի, սրբազան լեռների վրա՝ Գրգուռ, Սիփան, Մուկավետ, Մարաթուկ, Նավս, Արտոս, Առնոս և այլն:

Հայաստանի տարբեր գավառներից մեզ հասած՝ ջրհեղեղի և Նոյ նահապետի մասին ավանդազրույցները վերաբերում են ջրհեղեղի սկսվելու պատճառներին, ընթացքին և ավարտին՝ նոր աշ-

¹ Եկեղեցու կողմից ոչ վավերական, կանոնական չհամարվող: Հունարեն *αποκρυφος* (ապոկրիֆ՝ գաղտնի, ծածուկ) բառի հայերեն համարժեքը: Պարականոն են կոչվում քրիստոնեական գրականության այն գրվածքները, որոնք բովանդակությամբ առնչվում են Աստվածաշնչին, սուրբգրային անձերին, սակայն եկեղեցու կողմից մերժվել են և դուրս մնացել Աստվածաշնչի կանոնից:

խարհի ձևավորմանը: Ավանդագրույցներից յուրաքանչյուրը վիպական բանահյուսության ավարտուն մի ստեղծագործություն է: Սակայն եթե դրանք փորձենք դիտարկել իրար հետ, ապա կտեսնենք, որ դրանք լրացնում, շարունակում, ավելի ընդարձակում են միմյանց:

Աշխատանքի համար նյութեր հավաքելու ընթացքում Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում հայտնաբերվեց աշուղական մի ստեղծագործություն (Աշուղ Ծաղկալի), որը հակիրճ ներկայացնում է Նոյի մասին մեր կողմից որպես վիպաշար դասավորված գրեթե բոլոր ավանդագրույցները միասնաբար՝ շարակցելով և միավորել որպես սյուժե (դիպվածաշար) (Հավելված, Ա.): Սա վկայում է, որ 20-րդ դարի սկզբներին արդեն իսկ որոշ ստեղծագործողներ Նոյի մասին ավանդագրույցները դիտարկում էին որպես միասնական մի պատմություն կամ հնարավոր էին համարում դրանք միավորել:

Սույն աշխատանքում փորձ է կատարվել՝ հնարավորինս տրամաբանորեն իրար միացնել, կապել ավանդագրույցները, դասավորել դրանք այնպես, որ մի ամբողջական պատմություն ստացվի: Ավելին, այդ ստացված ամբողջական պատմությունն իր էությանը կհամապատասխանի «վեպ» կամ «վիպական շարք» եզրին:

Ըստ Նոր բառգիրք հայկազեան լեզվի՝ *«վէպ – հին գրոյցք՝ իրական կամ սրայօղ. պատմութի արձակ կամ քերթողական. լուր՝ բանիւ կամ գրով»*¹:

«Վեպ» բառի բացատրությունն ավելի ընդարձակ է ներկայացնում Ստ. Մալխասյանը: Ըստ նրա՝ *«Վէպ – գրոյց՝ աւանդութիւն պատմական քովանդակութեամբ, արձակ կամ ոտրանաւոր, սրոյգ կամ մտրացածին, մեծ մասամբ ամենահին ժամանակների անձերի կամ անցքերի վերաբերյալ»*: Մեր դեպքում Նոյ նահապետի մասին ավանդագրույցների միավորումը և վեպի տեսք տալը կհամապատասխանի Մալխասյանի ժողովրդական վեպին տրվող բնութագրմանը (միակ տարբերությամբ, որ այս դեպքում գործ ունենք արհեստական վեպի կամ Նոյի մասին ավանդագրույցների համահավաքի հետ)՝ *«Ժողովրդական վէպ, ժողովրդական պատմական անձերի մասին սովորաբար արձակ և անպաճոյճ լեզուով»*²:

¹ Աւետիքեան և այլք 1981, 819:

² Մալխասյան 1945, 337–338:

Ըստ Մ. Աբեղյանի՝ վեպի նյութը պատմությունն է, բառի լայն իմաստով՝ լինի իսկական թե կեղծ: Աբեղյանը հղում է Մովսես Խորենացուն, որի երկում վեպ նշանակում է «պատմություն», վիպագրել՝ «պատմել», իսկ վիպագիր՝ «պատմագիր»: Վեպն իր մեջ կարող է պարունակել առասպելական գրույցներ, հրաշալի պատմվածքներ, իսկական պատմական եղելությունները կարող են մասամբ առասպելական երանգներ ստանալ: Այսպես առաջ է եկել առասպելական վեպը: Քանի որ վիպասաններն ու նրանց ունկնդիրներն իսկական պատմություն էին համարում նաև առասպելները, ապա նրանց համար վիպասանությունն իր ամբողջությամբ մի պատմվածք է եղել անցյալում կատարված եղելությունների¹:

Իր մեկ այլ աշխատության մեջ Մ. Աբեղյանն էլ ավելի է ընդարձակում և հստակեցնում «վեպ» եզրը: Ըստ նրա՝ բանահյուսությունը, դարերի ընթացքում փոփոխվում է, և անջատ ավանդագրույցները հետզհետե հարակցվում են միմյանց: Հին գրույցներին ավելանում են նոր մանրամասներ, որոնց պատճառով դրանք որոշակիորեն ներքին փոփոխության են երնթարկվում, այլ ոչ թե մեքենայաբար կցվում են իրար:

Այսպիսով Նոյ նահապետի մասին ավանդագրույցներն ամբողջության մեջ համապատասխանում են Աբեղյանի «վեպ» իմաստի չափանիշներին:

Աշխատանքը պատրաստելիս օգտագործվել են արխիվային (Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվներ) և դաշտային նյութեր, որոնցից մի քանիսը տպագրվում են առաջին անգամ: Բազմաթիվ ավանդագրույցներ քաղվել են մամուլից: Մեծաքանակ նյութ է հանվել «Ազգագրական հանդեսից», հատկապես Երվանդ Լալայանի և Բենսեի հավաքած նյութերից: Շուրջ երկու տասնյակ ավանդագրույցներ դուրս են բերվել Մեսրոպ Թադիադյանի ուղևորությունների գրքից², Արամ Ղանալանյանի «Ավանդապատում»-ից³ և Անուշավան Եպիսկոպոս Ժամկոչյանի «Աստվածաշունչը և հայ բանավոր ավանդույթը» գրքից⁴: Անուշավան Եպս.

¹ Աբեղյան 1966, հ. Ա, 94-96:

² Թադիադեանց 1847:

³ Ղանալանյան 1969:

⁴ Ժամկոչյան 2012:

Ժամկոչյանն է դեռևս հնարավոր համարել, որ Նոյի մասին վիպական շարքը կարելի է դիտարկել որպես առանձին վիպական ստեղծագործություն¹:

Որոշ գրույցներ ունեն մի քանի տարբերակներ, որպեսզի միջամտությունը հասցվի նվազագույնի, հարկ համարվեց բոլոր տարբերակներն ընդգրկել՝ առանց նախապատվության: Անփոփոխ են թողնված բոլոր պատումների ոչ միայն բարբառները, այլ նաև գրանցողների և մշակողների հեղինակային խոսքը:

Ավանդագրույցները խմբավորված են ըստ սյուժետային խմբերի և դասավորված լատինական թվահամարով նշված «դրվագի» ներքո, յուրաքանչյուր դրվագ-խումբն ունի համապատասխան վերնագիր: Յուրաքանչյուր դրվագի ավանդագրույցները բաժանված են հայկական թիվ-գլխատառով, եթե միևնույն սյուժեն ունեցել է մի քանի տարբերակ, ապա առանձնացվել են հայկական թիվ գլխատառով և փոքր արաբական թվահամարով (օր. Զ յ): Այն դրվագները, որոնք պարունակում են մի քանի խումբ ավանդագրույցներ, երբ իրադարձությունը նույնն է, սակայն տարբեր է պատճառկամ հետևությունը, ապա դրանք բաժանված են արաբական թվահամարով միևնույն դրվագի ներքո: Դրվագները հնարավորինս շարունակաբար դասավորված են մեկը մյուսի ետևից այնպես, որ շարքն ունենա տրամաբանական կառուցվածք՝ սկիզբ, ընթացք և ավարտ:

Լեռնագագաթները (երկրորդ խումբը), բնակավայրերը և տեղանունները տրված են ըստ այբբենական կարգի: Կենդանիներն ու թռչունները բերված են վիպաշարի ընթացքին ու զարգացմանը համապատասխան, ըստ գործողությունների և իրադարձությունների հերթականության: Տոները ներկայացված են ըստ հերթականության, իսկ մնացածը տրված է ժամանակագրական սկզբունքով:

Յուրաքանչյուր ավանդագրույցի սկզբում տրվում են գրանցման վայրը, ժամանակը, բանասացն (եթե բանասացը նշված չէ, նշվում է բանահավաքը) ու նրա ծննդյան վայրն ու տարեթիվը (եթե ամկա են), իսկ վերջում քաղման աղբյուրը:

Մի քանի գրույցներ վերցված են ռուսերեն և գերմաներեն աղբյուրներից, որոնք թարգմանվել են հայերեն և ներկայացվում են

¹ Ժամկոչյան 2012, 72:

բնագրից հետո¹: Մեկ ավանդագրույց ներկայացված է կիլիկյան բարբառով, որի դժվարության պատճառով տրվել է նաև գրական վերծանությունը՝ արված գրանցող բանահավաքի կողմից:

Մեր կողմից որպես նախերգանք վերցված ստեղծագործությունն, ըստ ամենայնի, աշուղական ստեղծագործություն է, որի հեղինակը Հովհաննեսն է, ինչպես նշված է ստեղծագործության նախավերջին տողում: Հաշվի առնելով, որ աշուղական ստեղծագործությունները հաճախ ժողովրդական գրույցների մշակումներ են կամ աշուղներն օգտագործում են ժողովրդական մոտիվներ, ապա նպատակահարմար գտանք այն ևս ընդգրկել վիպաշարում:

Հավելվածում ներկայացված են այն գրույցները, որոնք չեն համապատասխանել վիպաշարի ընդհանուր համատեքստին:

¹ Գերմաներենից թարգմանելու համար շնորհակալություն եմ հայտնում պ.գ.թ. Լիլիթ Սիմոնյանին:

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ (Բնագրեր)

ՆՈՅ ՆԱՀԱՊԵՏԸ (Ժողովրդական վիպաշար)

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Ջրհեղեղ

Գրառվել է՝ 1978 թ., վայրն անհայտ է:
Բանասաց՝ Վոան Բարիդամյան:

Որ ժամ երկինք-գետինք ջուր էր,
Նախ կապեց կամարն, իմացե՛ք:
Կամարն անշարժ ու ամուր էր.
Հրեշտակաց շարն իմացե՛ք:
Հրեշտակներ դիպ միասին,
Չորեքդիմաց Սուրբ Տեր ասին,
Հպարտության երեք դասին,
Թոթափեց աշխարհն իմացե՛ք:
Աշխարհն իջուց անդունդը,
Ստեղծեց հողածնունդը,
Մեջն ընկավ դիվաց բունդը.
Եկավ խափեց չարն, իմացե՛ք:
Չարը խափեց երկուսը միասին,
Ընդեմ մացին, իրար մասին
Մեկմեկու հետ հավախ ասին
Մնացին խավարն, իմացե՛ք:
Խավարում ողբում էին լալով,
Կրկին դրանց մի մոտ գալով.
Իբրև արև նշան տալով՝
Առավ ձեռագիրն, իմացե՛ք:

Ձեռագիրը առավ-տարավ,
Տիրոջ սիրտը չդադարավ,
Տերն ասավ. – էդ ո՞վ արավ
Մեկմեկու պատճառն իմացե՛ք:
Մեկմեկու պատճառ բերեցին,
Ադամը՝ կին, կինն էլ օձին.
Երեքն էլ անեծք վերուցին,
Բուսավ տատասկ խոտն, իմացե՛ք:
Մեկ բույսով՝ փուշ, երկրորդը՝ վարդ.
Մեկ եղավ հովիվ, մեկը ցանեց արտ,
Իբրև եղյալ տասանորդ, մարդ
Ջոկեց քամվե դարն, իմացե՛ք:
Քամվե դարը չընդունեց Տերը,
Որժամ ասեց նրանց սերը,
Կայենն սպանեց Ափելն,
Արնի ահու զարն, զարն իմացե՛ք:
Արյուն ձեն տվավ հողեն,
Կայեն՝ Ափել սպանողեն,
Յոթը պատիժ այն տեսնողեն
Դողում էր անդադարն, իմացե՛ք:
Անդադար անձը դողում էր
Եղավ բազում տղայոց տեր,
Ուստր, դուստր, չարության սեր՝
Նրանց խաղացած պարն իմացե՛ք:
Պար բռնելով, ելան անապատ,
Ճգնավորներ որսացին շատ,
Երկուսը մնացին ազատ –
Նոյ և Նոյենզարն իմացե՛ք:
Նոյ և Նոյենզար, Սեթա ցեղեն,
Հեռու փախան մեղաց տեղեն,
Ազատվեցան ջրհեղեղեն,
Այնպիսի նավարարն իմացե՛ք:
Նավարարը շինեց նավը,
Որ քաշեն աշխարհի ցավը,
Բայց հասել էր մեղաց բավը,
Չգտավ հնարն, իմացե՛ք:
Հնարագետ ինքը Տերը

Ազատեց լուսեղեն մարմինքը,
Պատառեց երկինք-գետինքը,
Ջրի ելած դարն իմացե՛ք:
Ջուրն ելավ դարիվ դարիվ բավ,
Սկսեց,բերավ-տարավ նավ,
Յոթ ամսվա մեջ դադարավ,
Արարատյան սարն իմացե՛ք:
Արարատյան սարն հանգչի իր տեղ:
Նոյն նախ շինեց Ակոռի գեղ,
Ազգը բազմացավ ցեղոց ցեղ
Մինչև վեց հազարն իմացե՛ք:
Վեց հազարը վեց դար դարձավ,
Հիսուս կույսեն մարմին առավ –
Չարչարվեց անոթի, ծարավ,
Որո՞նա՞ծ ոչխարն իմացե՛ք:
Որո՞նա՞ծ ոչխարն Ադամին
Բերավ խառնեց իր երամին,
Տերը խաչվեց երրորդ ժամին
Խաչելության ճարն իմացե՛ք:
Խաչը սլացավ երկինքը,
Ազատեց լուսեղեն մարմինքը,
Տերը բազմեց, կգա Ինքը,
Այնպիսի ավուր ճարն իմացե՛ք:
Ճարը մնաց Տիրոջ կամքին,
Մեղան գոչին, Տեր, ընդառաջիդ,
Հովհաննեսն եմ քո արյան գին,
Վարպետ էր, մարմառն իմացե՛ք:
Գալստյան (դաշտ.) 1978, 20ա-22ա:

ԴՐՎԱԳ I

ԶՐՀԵՂԵՂԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

1. [Հարսը և թոնիրը]

Ա.

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Բորչալուի գավառում (այժմ՝ Լոռու մարզի հյուսիսային շրջանները):

Բանասաց՝ անհայտ:

Նոյ նահապետի ժամանակ, երբ սա տապանն էր շինել տալիս, մի պառաւ հարցրել է Նոյին, թէ ջրհեղեղը կ՞րբ պիտի լինի:

– Երբ հարսը սկեսրոջ հետ խօսի, – պատասխանել է Նոյը:

Մի առ ժամանակից յետոյ մի օր այս պառաւը հարցնում է իւր հարսին.

– Թոնիրը կար չընկա՞մ (չվառուեց):

– Ուր ա թա կար ընկաւ, էնքան փչել եմ, գլուխս տրաքում ա, – պատասխանում է հարսը:

Պառաւը սրա պատասխանից հասկանում է, որ ջրհեղեղի օրը հասել է, ապա էթ ոչ՝ հարսը իւր հետ չէր խօսի. մօտենում է թոնիրին, տեսնում է ջուր է դուրս գալիս, վազում է Նոյի մօտ ու խնդրում, որ իրեն էլ վերցնի տապանի մէջ, սակայն սա մերժում է, ասելով, թե միայն մատաղահասներից պիտի վերցնի:

Լալայեան 1903, 125-126:

Բ.

Գրառվել է՝ 1960 թ. ԼՂԻՄ Ստեփակակերտի շրջ. Դաշբուլաղ գ. (Արցախ):

Բանահավաք՝ Միքայել Առաքելյան:

Սկեսրայրը հարսին ուղարկում է թոնիրը վառելու, որ հաց թխեն: Հարսը գնում է, բայց չի կարողանում վառել, որովհետև թոնրի տակից ջուր էր դուրս գալիս: Սկեսրայրը ձայն է տալիս հարսին, թէ՛ «Այ հարս, ի՛նչ է պատահել, ինչո՞ւ չես վառում»: Հարսը չխոսկան լինելու պատճառով չի կարողանում պատասխանել: Սկեսրայրը գալիս է թոնրի մոտ, նորից հարցնում հարսին, թե ինչու նա չի վառում:

Հարսն այլևս չի դիմանում և ասում է, որ թոնրից ջուր է դուրս գալիս: Չխոսկանության օրենքը խախտելու համար Աստված պատժում է մարդկանց, թոնրի տակից դուրս եկող ջուրը վարարում է, դառնում մի մեծ գետև ծածկում է աշխարհի երեսը:

Ղանալանյան (կազմ.) 1969, № 789, Գ, 333-334:

Գ.

Գրառվել է՝ 1975 թ. Իջևանի շրջ. Լուսաձոր գ. (այժմ՝ Տավուշի մարզ):

Բանասաց՝ Խանում Քոչարյան (ծնվ. Սևքար գ., 1904 թ.):

Մեկ էլ մեկին Աստվածն ասել ա, որ.

– Մեծ հարսըտ հետըտ կխոսա, տո՛ւ էն ժամանակ քու քոչը կքաշես կհեռանաս:

Կեսրարը քյնացել ա չո՛ւթ վարի, հարսն էլ հաց ա թխըմ, թորոնը ճո՛ւրը լցվել ա, քանի սրըփել ա կըռցրել, ճուրը լըցվել ա, լըցվել ա:

Կեսրարը եկել ա, որ.

– Խի՞ չես հաց պիրըմ:

Ասել ա.

– Հայրիկ, – ասել ա, – թորոնը ճո՛ւրը լըցվըմ ա, չեմ կարըմ թխեմ:

Էտեղից էտ մարթն իրան մատը կծել ա, իրան քոչը տո՛ւս տարել, նորից որ ճըրհեղեղ ա ըլել:

Շունը մի ցորեն ա քըթել, ոռնացել, ցորենը տըվել ա շանը, կյո՛մեշն էլ ճըրի իրեսին երգա՛՛ր ծեն հանել, տըռընգացել, կյո՛մշին էլ տրա մհար հետ ա տվել:

Խենյան (կազմ.) 2008, № 4 (174), 265:

2. [Զրհեղեղ Աստծո բարկության պատճառով]

Ա.

Գրառվել է՝ 20-րդ դ. սկիզբ, Մոկսում (այժմ՝ Թուրքիայի Վանի իլի Բախչեսարայ շրջան):

Բանասաց՝ անհայտ:

Մարդեր վըր ինկան վէր աշխրին, շատ չարացան, Աստուածոթեն պարկացաւ: Նօ արդար էր մէջ (մարդկանց):

Ասաց.

– ՆՕ, ասաց, կեամի՛ մ՛ շինան, քու քուրֆաթ զմէկ առնիս. հնէն ինչքից թէ խաւք կայ, թէ օխչար կայ, թէ ձի կայ, էրունք–թռչունքից ... մէկ որց մէկ էգ առնիս նէրս:

Նօ էլաւ, տապան շինեց, կպրեց, զուր տղէկներ, զուր խարսներ, էրունք–թռչունքից մէկ էգ–որձ առաւ նէրս:

Աստուածութիւն էրկինք գետինք խառնեց յիրար, էրկնուց ան–ձրն էրի, գետնից սև ճիւր էտու տիւս – նան Լալազար, Թուխ, Սև գետ: Իրեք օր, իրեք գիշեր մնաց էնպէս, զմեն խելստուան: Նօհա տապան մնաց ճրիւ յերես, լող էտու գնաց մէջ Սիս Մասիս կանգնաւ:

Նօ ասաց.

– Սի՛ս, ան զիս:

Սիսը խետ զրիցեց, ասաց.

– Մասիս պանցր է քան զիս:

Տապան գնաց Մասիս կլեօխ կօռեց, զտապան առաւ վըր ոտ գլխուն: Էն յապով կ՛ասին Ակրի տաղ:

Իրեք օր թմըմաւ, սև ճիւր քաշուաւ գնաց ծով, ախշար լիացաւ: Էն սև ճիւր ինչ քաշուաւ գնաց, էն սարեր էխան երեւան. վըր տեղ ինչ կուզէր, քաշուաւ գնաց, ուրինց տեղ մնաց ձոր: Վըր ինչ սար էր մնաց:

Նօ տապանի տիւռ էպաց, զխաւքեր, զանասուն զըմեն էթող, զուր տղէկներ, զուր քուրֆաթ էճաւ սարից տակ: Նոր թաքրդան ուրենց տուն շինեցին, զուրենց տեղ աւելցուցին, էրունք թռչունք էլ յաւելացան...

Չիթունի [1910–ական թ.], 106:

Բ.

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Բուլանըխում: Ի մի է բերվել Լենինականում (այժմ՝ Շիրակի մարզ):

Բանասաց՝ անհայտ:

Աստված ասեց Նոյին.

– Քըզի տապան մը շինի, ջրհեղեղ պիտի հանին, զմարդիկ կորցում: Մեղք շատցեր է աշխրդկի վրա:

Վարպետները գիշեր–ցերեկ աշխատում էին: Նրանց գործիքները ձայն էին հանում և մարդոց ապաշխարության հրավիրում: Բայց անօգուտ:

¹ Նավ:

Եվ երբ ջրհեղեղ եղավ, մարդիկ փախնում էին ծառերի վրա և իրար առաջարկներ անում. «Քու աղջիկ չե՞ս տա իմ տղին»:

Աստված պատվիրել էր Նոյին, որ տապանի մեջ անկողնու պաս էլ պահեն: Նոյի տղաներից մեկը գնաց իր անկողին, և նրանից ծնածը սև դուրս եկավ: Արաբները (ուզում են ասել՝ նեգրերը) այդ սևի սերունդն են...

Բենսե (դաշտ.) 1935, 164–164ա:

Գ.

Գրառվել է՝ 1968 թ. ԼՂԻՄ Ստեփանակերտի շրջ. Խնձրիստան գ. (Արցախ):
Բանասաց՝ Լուսիկ Գաբրիելյան:

Վրեր շատ թոռ ա եկալ, կյետերը վըրարալ ա, ծուվերեն ձիրերը տեղան պիցրացալըն, մին մարթ ըրագումը տեսած ա ինում, վրեր Աստուծը ուրան մուտանում ա, ասում.

– Ճիրհեղեղը ա իննական, ամեն հիյվանա, ամեն շունչա մին ճոխտ էր կալ, մին տապան շինի՛, տու քու կնգանավըտ, քու խուխոցավըտ, մինգյել էտ հիյվըննեն, գազաննեն լոխ տըղվարեն տապանումը, հանցու վրեր ձիրհեղեղ ինի, պիցրանաս ձիրին իրեսը,– մինգյել վրեր ձիրերը ցըմաքեն, նորից գյանքը ըսկսվե երգյիրին իրեսեն:

Էտ մարթը տի յէլ անում ա, ամմըեն շունչա, ամմըեն հիյվանա, գազանա մին–մին ճոխտ յոր ա օնում ուրան նհետ, լոխ տըղպանումը տըղվարում, վրեր ձիրերը կյամ ըն սաղ աշխարքըս օնում, ինքյն ուրան տապանեն նհետ պիցրանում ա ձիրին իրեսը, լեղ տալավ քյինամ, քյինամ, տուս կյամ մին պեցուր սարու կըլոխ, տըղ էնքան կենում, վրեր ձիրերը ցըմաքում ա, նորըմինան էտ հիյվնեն, էտ դուշերը, օցերը, գազաննեն ըսկսում ըն ճոտեր հանելը, նորըմինան սաղ ըշխարքումըս ըսկսում են ապրելը, իտի մինչև մեհենգյ էլ ամմեն տըղ ապրում ըն, լոխ էլ էտ մարթին փառք տալավ: Տա յէլ մնամ ա էտ պեցուր սարեն կըլխեն, ըտեղ ուրան կնգանավը, ուրան խուխոցավը կենում:

ՀԺՀ–7 1979, 166 (№ 45 «Ճիրհեղեղը»):

Գ. Նոյի նահապետի մասին

Գրառվել է՝ 1974 թ. Ռոստովի մարզ Սյասնիկովսկի շրջ. Չալթր գ.:
Բանասաց՝ Խաչերես Նասիայան (ծնվ. Չալթր գ., 1884 թ.):

Հին վեկը¹ էղիլ է չորս հազար ժեք² հարու քրսանհինգ տարի: Իտախայիկ³ ժամանակվան մեչը մաշդիկ խիստ գեշացիլ ին: Ամենը ուսումնական էղած չին, մեմեծկի սիրած չին:

Ադ մաշդոցը մեչեն մեքատ ուսումնական մաշդ էլլիլ է՝ Նոյ անունով: Իդա մաշդը հասկըցիլ է և ասիլ է, որ ախպար ախպոր պես ապրեցեք, սիրեցեք, չարութին մի անիք աշխարհքիս էրեսը՝ գեշ բան է: Դուք լըսիլ իք, կասե, որ չարին ճամփան կարճ կըլա: Բայց մաշդիկը մըտիկ արած չին Նոյին:

Նոյը ինքը հասկըցիլ է, որ մեմ ալ տահա մաշդուս վերջաբանությունը ըլա նը, հին վեկին, շտե, ջուրով պիտ լա: Ադոր համար սկսիլ է կեմի⁴ խոշթել⁵, մեքատ նավակ: Խոշթած սային⁶ ալ կասեր ժողովրդին. «Մաշդիկ, դարձի էկիցեք, փեռատ⁷ բան է արածներըդ, նայեցեք, գըլխովներըդ բան կուգա»: Չէ, չէր լըսեին:

Նոյը կեմին խոշթած տեղեն կողի կելլեր նը՝ պակասութինի էր, չէ ուտելու էր, ադ ժամանակը կաղտոտեն կուգային և կամ քըշերը, և կամ ցորեկը, փեռատ բան կուլեին մեչը, շտե չոռչոփներ-բաներ: Մըսխըլ⁸ կանեին:

Էկավ ժամանակը, Նոյը կեմին խոշթից, հազիր արավ: Ամեն մեկ սուրբ կենդանիներեն յոթ-յոթ ճուվթ, անսուրբերեն քիչիմը քիչ՝ շտե ժեք է, չորս է կառնու, տավարներ կառնու և երեք որդուն հարսերով, թոռներով, կըմուտնուն կեմին, կըգոցին: Տըղոցը անունը չիմոռնամ ասելու՝ Սեմ, Քամ, Հաբեթ էր:

¹ Ռուսերեն «бек» (դար) բառն է, այստեղ կիրառված է ժամանակաշրջան իմաստով:

² Երեք:

³ Այս բառի իմաստը չկարողացանք պարզել: Գուցե՞ վրիպակի արդյունք է: Մշո բարբառում կա սրան մոտ «իտահախ, իդահադ» բառը, որ նաշանակում է «այդ ժամանակ, այդ անգամ»:

⁴ Նավ:

⁵ Պատրաստել:

⁶ Ընթացքում:

⁷ Այլատեղված, վատ:

⁸ Ծաղր:

Կեմին կրնուտնուն, կըպաշլայե¹ թաթավը²: Թաթավը գալեն-գալեն Նոյ նահապետին կեմին կըբաձրնա: Չուրը շատցած սային կըբաձրնա, կըբաձրնա, կեմին ալ գալեն-գալեն, կուգա Արագած-Մասիս սարին թեփեն³ կըկայնի:

Թաթավը վագ կուգա, նոմայ⁴ ժամանակ ալ կանցնի, Նոյը Արագած-Մասիս սարին թեփեյեն առչինը խառղային⁵ կապուլտա⁶, նայինք մենը ինչ կանե տեին: Խառղան դեպի ետ կուգա: Էրկուսու-մը աղվենիքին կապուլտա: Աղվենիքն ալ կնստի լեշերուն վըրան մաշոցը, արունտ կըլան ոտքերը, հանգստանալու տեղ չէղած դեպի ետ կուգա:

Քիչիմ ադեն տահա ժամանակ կանցնի, Նոյը նորեթեն խառղային կապուլտա: Խառղան աս տապրա դեպի ետ չի գալ: Դեպի ետ չի գալ նը, Նոյը կիմանա, որ ջուրը քաշվիլ է, կընչընի կեմիեն, աստծու հետ դագավոռ⁷ կանե, որ մեմ ալ տահա ասպես բան ըլլալու լա նը, ջուրով լալու չէ, հապա կըրակով պիտ լա:

Շահինյան (դաշտ.) 1974, 292-293:

Ե.

Գրառվել է՝ 2011 թ. Արարատի մարզ Ներքին Դվին գ.:

Բանասաց՝ Գեղամ Մալխասյան («Մաշտոց պապի», ծագումով մոկացի, ծնվ. Ներքին Դվին գ., 1919 թ.):

Երկնքում կա յոթ խումբ, յոթ դաս հրեշտակներ: Երկրի վրա կա երեք խումբ. սատանաներ, մարդիկ և Կեցո մեզ ոգիներ:

Նոյն ուներ տասներկու տղա, տասներկու աղջիկ: Երկրի վրա մարդիկ շատ էին հպարտացել, ժողովուրդը Բաբելոնի աշտարակ էին սարքում, որ կովեն Աստծո դեմ: Լեզուները բաժանվեցին, աշտարակը մնաց կիսատ:

¹ Սկսեց:

² Անձրև:

³ Գլուխ, կտուր, կատար:

⁴ Շատ:

⁵ Ազոավ:

⁶ Արձակել, բաց թողնել:

⁷ Պայման կապել, ուխտել: Ռուսերեն «договор» (պայմանագիր, դաշնագիր) բառն է:

Գաբրիել հրեշտակը գնաց Նոյի մոտ, որը միակ արդար մարդն էր երկրի վրա: Նոյին ասում է.

– Մեկ-մեկ արու ու էգ կենդանիներ վերցրո՛ւ գետնի վրայից ու գետնի տակից: Մի նավ սարքի՛ր ու նրանց մեջը դի՛ր քո ընտանիքի հետ: Քառասուն օր ջրհեղեղ է լինելու:

Նոյն ասում է.

– Ո՞նց պատրաստեմ այդպես մեծ նավ, որ քսանչորս երեխա, ես ու կինս, այդքան էլ կենդանի մեջը տեղավորվի:

Գաբրիելն ասում է.

– Հրեշտակները կօգնեն քեզ:

Հրեշտակների օգնությամբ Նոյը սարքում է նավը ու ընտանիքն ու զույգերով կենդանիները դնում մեջը:

Քառասուն օր անընդհատ անձրև է գալիս. վերևից անձրև, ներքևից էլ գետնի տակի ջրերն են դուրս գալիս: Տապանը ելնում է ջրի երես ու լողում: Հասնում է Արարատի գլուխ:

Ջուրն աշխարհը պատել էր: Նոյն ագռավին ուղարկում է, որ ցամաք գտնի: Ագռավը ցամաքը գտնում է ու նստում է լեջ ուտելու, ետ չի գալիս: Նոյը աղավնի է ուղակում: Աղավնին գնում է ու կանաչ ձյուղը կտուցին վերադառնում–նստում է Նոյի ուսին:

Նոյն օրհնում է աղավնուն, որ միշտ մարդու կողքին մնա, ու մարդը նրան չվնասի:

Միսոնյան (դաշտ.) 2011, 47–49 րր.:

ԴՐՎԱԳ Ի ԼԵՌՆԵՐ

Մուտք. [Ինչո՞ւ տապանը պետք է հանգրվաներ Մասիսի վրա]

Գրառվել է՝ 19-րդ դ. առաջին կես, Երևանի նահանգում:
Բանասաց՝ անհայտ:

Nach der armenischen Sage hat hier das Paradies gelegen und der feuerspeiende Ararat ist das Flammenschwert des Engels geworfen, welches den Eingang desselben, Adam und seiner Nachkommenschaft gegenüber, bewahrte. Die Sündflut löschte das Flammenschwert des Ararat und zerstörte den Garten Eden, aber eben deshalb mußte das Menschengeschlecht zum zweiten male von diesem Punkte ausgehen. Hier erblickte Noah den Regenbogen der Versöhnung, hier fand er einen Rest der edeln Früchte des Paradieses, den Weinstock, und verpflanzte ihn auf unsere Erde. Darum gab der heilige Gregor der neugebauten Kirche den Namen von dem Herabkommen des Eslösers, was Edtchmiazin bedeutet. von Haxthausen 1856, 255:

Թարգմանություն

Ըստ հայկական ավանդագրույցի՝ այստեղ է գտնվել դրախտը (խոսքը Մասիսի և Արագածի միջև ընկած տարածության՝ Արարատյան դաշտավայրի և Էջմիածնի մասին է), իսկ հուր ժայթքող Արարատը հրեշտակի այն հրեղեն թուրն է, որով Ադամից ու նրա սերունդներից պաշտպանվում էր դրախտի մուտքը. Մեղքերի ջրհեղեղը հանգցրել է Արարատի հրեղեն թուրը և ավերել է Եդեմի այգին, բայց հենց այդ պատճառով է, որ մարդկությունը երկրորդ անգամ պետք է դուրս գար այս կետից: Այստեղ է, որ Նոյը տեսել է հաշտության ծիածանը, այստեղ է նա գտել դրախտի ազնվական պտղի մի մնացորդը ու տնկել է այն մեր երկրի վրա: Ահա թե ինչու սուրբ Գրիգորը նորակառույց Եկեղեցուն տվել է Փրկչի Վայրէջք՝ Էջմիածին անունը:

1. [Ճամփորդություն լեռնագագաթներով] [Սիփան, Գրգուռ, Մասիս]

Ա.

Գրառվել է՝ 19-րդ դ. երկրորդ կես, Վասպուրականում (այժմ՝ Թուրքիայի Վանի իլ):
Բանասաց՝ անհայտ:

Նոյա տապանն եկավ ի Սիփան,
Ասաց.

«Սիփան, ան զիս, ան զիս»:

Սիփանն ասաց.

«Գրնա՛ ՚ի Մասիս, գրնա՛ ՚ի Մասիս,

Որ մեծ է քան զիս, որ բարձր է քան զիս»:

Տապանն Կորդուաց լեռներեն գալով առ Սիփան՝ Գրգուռա գլխով անցեր և քավելով կամ գրգովելով այս լեռան սուրուխ գլուխը տաշեր անցեր է եղեր:

Սրվանձտյանց 1978, 53:

Բ.

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Բուլանըխում (այժմ՝ Թուրքիայի Մուշի իլի Բուլանիկ շրջան):

Բանասաց՝ անհայտ:

Մասիսն առանձին երկյուղածությամբ էին հիշատակում իբրև Հայաստանի սրբազան սարը և նրա հետ կապված ջրհեղեղի լեգենդը, թե ինչպես Նոյան տապանը Գրգուռ լեռան վրայով անցնելիս դիպչել է նրա գագաթին և նրանից լեռը ձայն է հանել և ստացել Գրգուռ անունը, ապա լողալով գնացել է Սիփան սարի մոտ՝ ասելով.

– Սիփան, ան զիս, ան զիս:

– Գնա՛ մըտ Մասիս,

Որ բանձր է քան զիս:

– Մասիս, ան զիս, ան զիս:

– Դե թո՛ղի վըր վզիս,

Թո՛ղի վըր վզիս... – պատասխանել է Մասիսը, և տապանը հանգչել է Մասսի գլխին, ուր և մնում է մինչև այսօր:

Ոչ ոք չի կարող բարձրանալ Մասսի վրա, ասում է ժողովուրդը, և տեսնել տապանը:

Բենսե 1972, 49:

[Միփան, Միս, Մասիս]

Գ.

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Մոկսում (այժմ՝ Թուրքիայի Վանի իլի Բախչեսարայ շրջան):

Բանասաց՝ անհայտ:

Ատամօք, ճրխոք դէն՝ առնաուտի ախշարք էղեր, ախշարք զըմէն դերստան էղեր, իսան էլ էղեր լե փալէվան էղեր: Ատամօք դես՝ չիս իսան էղաւ ախշարք:...

Յան ժամանակ ինչ ճրխեղեղ էղաւ, մարդեր զփետէ ոտ շինեցին որ ճիր չէլնէր զուրինք ծածկեր (ան ժամանակէն է մնացեր փետե-նոտ). դեոր որ տեսան փետէ ոտով մջալ չեղաւ՝ փախան էլան սարեր: Ճիր որ էգեր, պճղքեր կփախեն, էլ կպանցրնէր: Ճար չեղաւ՝ էլան սարերու քլխներ: Ճիր որ էրէ էլաւ սարերու քլխներ՝մեր զտղէն կոնէր գետին՝ կէլներ վար տղի սոտին թ՝ինչկի ճիր չգանի, չէր պնի, լէ ճիր պնեց զմեն, ախշարք ըմեն կըրաւ ծով, մնակ Միս Մասիս, Միփան մնաց քլխներ տիւ:

Նօ մտաւ գիամին, Նօյայ գիամին էլ էրկու խազար վաթսուն ուսթա ի շինած: Քեանի օր շինեցին – 146 օր, մնաց վար ծովու իրեսին: Գընաց Միս: Ըսաց.

– Միս, ա՛ն զիս:

Ըսաց.

– Գընա՛ ու Մասիս, պանցր ի քեան զիս:

Գընաց Մասիս, ըսաց.

– Մասի՛ս, ա՛ն զիս:

Առեց:

Մնաց Մասրսայ գլլեօխ չուր եօթ տարի, դեօր կորկ ճամխեց, չդառցաւ, տեօր էղւրնիկ ճամխեց:...

Էն է կըսի.

Անառակ խօսք,

Անգիր թուխթ,

Անխիմ քեաղաք՝

Իրի մանչ ախշրքին,

Ան ո՛րն ի:

Ան էղւրնկու լեգիւն ինչ կորկ կտրեց՝ էղաւ անառակ խօսք, էն կանանչ ինչ փաթթեց պիւլոր վզին՝ անգիր թուխթ, Նօյայ տապան էլ՝ անխիմ քեաղաք, ուր էկաւ էղւրնէկ:

Չիթունի [1910–ական թ.], տետր ԻԲ, 102, 105–106:

Գ. [Գրգուռ, Սիփան, Սիս, Մասիս՝ Նորդուզ]:

Գրառվել է՝ 1980 թ. Արագածոտնի մարզ Վերին Սասնաշեն գ.։
Բանասաց՝ Պճուկ Հարությունյան (ծնվ. 1912 թ.):

Նոյան տապանն, ըստ ավանդության, հասել էր Գրգուռ լերը։ Գրգուռ լեռը չէր ընդունել նրան, ասել էր. ես փոքր եմ։ Գնացել էր Սիփանալեռ, նա էլ չէր ընդունել։ Գնացել էր Սիս, նա էլ չէր ընդունել։ Ասել էր. Գնա Մասիս, բարձր է, քան զիս։ Նոր Մասիսի գագաթին Նոյան տապանը հանգստացել ա։ Էդ տարածքները շատ սիրուն են եղել՝ ավաիական մարգագետիններով, սառնորակ աղբյուրներով, ծառ ու կանաչով։ Այդ տարածքներն անվանել են Նորդուզ՝ քրդերեն նշանակում ա՝ Նոյը գողացել ա, դրել իր ազդրի տակը։

Խաչատրյան (դաշտ.) 1980, ձայնգր. 6:

Ե1. [Գրգուռ և Մասիս]:

Գրառվել է՝ 18-րդ դ. վերջ, Տարոնում (այժմ՝ Թուրքիայի Մուշի իլ):
Բանասաց՝ անհայտ:

... Մինչև բնակչաց երգ դնել զսա յետ Մասիս լերին. նաև յարմարել բանս իբրև զրոյցս նախնեաց ՚ի դիմաց տապանին Նոյի, որպէս թէ յայս լեռոն պատահեալ տապանին նախքան զգնալն ՚ի Մասիս, ասել առ լեռոն. «Գրգո՛ւռ, ա՛ռ զիս» և լերին պատասխանեալ. «Գնա՛ ՚ի Մասիս, զի բարձր է, քան զիս»:

Ինճիճեան 1806, 178:

Ե2.

Գրառվել է՝ 2012 թ., Հովիվուդում։
Բանասաց՝ Կարո Յակոբեան (Տարոն):

«Ջրհեղեղն որ կտրաւ, Նոյ Տապան ջրերու հետ վեր վար քաշուեցաւ ու դէպի Գրգուռ առաջանալով՝ ասաց.

– Էկիր քու դուռ

Տիրաշէն Գրգուռ,

յօթելւյան մ'ի՛նձ տուր.

Գրգուռ կ'ասէ.

– Յորի՞ էկար յիս,

գնա՛ ի Մասիս,
որ բարձր է քան զիս»:

<https://asbarez.am /տարօնի-տոհմիկ-օր/>

Ջ1. [Մարաթուկ]:

Գրառվել է՝ 10-րդ դ.:

Գրառող՝ Գէորգ Կիարացի:

... Հոն կը վերջանայ Միջագետք և ուր կը գտնուին Տաւրոս ու Բաղէշի կապանն և կը սկսի հիւսիսային կողմը Մեծ Հայք. և այս աշխարհին մօտ՝ Տաւրոսի կողմը բնակող երկու ժողովուրդներէն մին կը կոչուի Խութեցիք և երկրորդը Սանասունք: Հոս կը գտնուի բարձր լեռ մը՝ Մարաթկէն անուն, ուր կըսուի թէ Նոյի տապանն ալիքներէն բերուելով բախեցաւ լեռան կատարին և այս կը պատմեն տեղացիները մինչև այսօր:

Ինգլիզեան 1947, 84-85:

Ջ2.

Գրառվել է՝ 20-րդ դ. առաջին կես, Սասունում (այժմ՝ Թուրքիայի Բաթմանի իլի Սասուն շրջան):

Բանասաց՝ անհայտ:

Մարաթուկ լեռան վրայ անդունդ մը կը գտնուի, որուն մէջ դարերու ձիւնն ու սառոյցը դիզուած են, որ Նոյի տապանի յիշատակին համար դարերէ ի վեր տապան կանուանուի: Կը պատմուի թէ Նոյի տապանը Միտկանի Խալան լեռնակատարէն Կռան կանցնի. վերջինս սակայն տապանին կըսէ. «Գնա ի Մարաթուկ»: Աս ալ կը յարէ. «Գնա ի Մասիս, զի բարձր է քան զիս»:

Ինգլիզեան 1947, 84-85:

Ջ3.

Գրառվել է՝ 20-րդ դ. առաջին կես, Սասունում (այժմ՝ Թուրքիայի Բաթմանի իլի Սասուն շրջան):

Բանասաց՝ անհայտ:

Մարաթուկի արևմուտքում կա մի խոր հովիտ, որը կոչվում էր «Տապանակ»: Նոյի տապանի այդտեղից անցնելու ժամանակ,

վրայից տախտակի մի կտոր պոկվել, ընկել է այդ ձորի մեջ և անու-
նը մնացել է տապանակ:

Կարապետյան 1962, 121:

Է. [Առնոս, Սիս, Մասիս]

Գրառվել է՝ 2011 թ. Արարատի մարզ Ներքին Դվին գ.:

Բանասաց՝ Սերոբ Վարդանյան (ծնվ. Ներքին Դվին գ., 1961 թ.):

Ջրխեղեղ որ կըսկսվի, Աստված կըկյա Նոյին տես ու կասի.

– Ջրխեղեղ կանեն, ամեն տեսակ ջանավարե մեյ ջուխտ վերց:

Նոյ կխավաքյի, կլցի իրա տապան: Խո տապան չէր, մեյ կյեղի
չափ կըլեր տապան: Խեղեղ որ կըլնի, ջուր կբանցըրնա, տապան
գետնեն կտրի: Տապան ջրի էրեսով կեթա, կեթա...

Կեթա դեմ կառնի Առնոսին, կասի. «Ա՛ն Նոյս» (լեռան անունը
չի իմանում): Առնոս չվերց նրան, որովհետև կլոխ մեյ պստիկ տեղ
կերևար:

Կըգա դեմ կառնի Պստիկ Սիսին ու կասի. «Ա՛ն գիս»: Սիսն կասի.
«Չէ՛, Մասիս ջոջ է քան գիս»: Նոր կերթա դեմ կառնի Մասսին:

Շատ ծեր մարդկանց ասում էին. «Նման կուտա Նոյի պուպուզ»:
Սիմոնյան (դաշտ.) 2011, 1ժ. 15ր.–1ժ. 17ր.:

Ը. [Տապանասար (Գյամի–Ղայա)]:

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Գողթն գավառում:

Բանասաց՝ անհայտ:

Վերջինիս մասին պատմում են, թե Նոյի տապանն ընդհարուել
է սրան և մի քանի տախտակներ կտորուել մնացել են սրա վրայ և
իբր թե սա էլ ասել է. «Ե՛րթ ի Մասիս, նա բարձր է քան գիս»:

Լալայեան 1904, 324–325:

2. [Լեռնագագաթներ]

Ա. [Արձիէս (Արգեոս)]

Գրառվել է՝ 1691 թ.:

Գրառող՝ Երեմիա Քյոմյուրձյան:

Արձիէս լեռան, յաուրս ջրիեղեղին առաջ այսմ գլուխ երևիցաւ
ցամաք: Միշտ անպակաս ձյունն ի վերա:

Սլահոցիան 2000, թ. 753:

Բ. [Արտոս և Առնոս]

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Վասպուրականում (այժմ՝ Թուրքիայի Վանի իլ):
Բանասաց՝ անհայտ:

Նոյեան տապանը լողալով գնացել է Կոռաշապ լերան մօտ և կամեցել է սրա վրայ հանգչիլ, սակայն սա «կօռուելով» (կռանալով)՝ ճանապարհ է տուել դէպի հանդիպակաց լեառը, և սա մօտենալով ասել է. «Ա՛ռ զՆոյս», որից և յառաջացել է նրա անունը՝ Առնոս:

Լալայեան 1916, 195:

Գ.

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Վասպուրականում (այժմ՝ Թուրքիայի Վանի իլ):
Բանասաց՝ անհայտ:

Նոյ նահապետի տապանը երբ հասել է Արտոս լերանը, Նոյը արտասուել է, ուստի և այս լեռը կոչուել է Արտոս, և երբ հասել է Շատախի լերան, Նոյը ասել է՝ Առ Նոյս, ուստի և այս լեռն էլ կոչուել է Առնոս:

Լալայեան 1914, 23:

Դ. Գոհանամբ:

Գրառվել է՝ 19-րդ դ. երկրորդ կես, Կարին-Երզնկայում (այժմ՝ Թուրքիայի Էրզուրում և Էրզինջան իլեր):
Բանասաց՝ անհայտ:

Կարնոյ դրացի նշանաւոր լեռներէն յԱրևելակողմն Ս. Նշան լեռնագօտին, ոյր վերայ մատուռիկ մի կայ, և որոյ անուամբ լեռնագօտին կ'անուանի. նոյնպէս Գոհանամբ լեառն որ նախընթացի շարունակութիւնն կրնայ համարուիլ. սոյն վերջի լերան նկատմամբ կ'ավանդեն թէ «Երբ Նոյայ Տապան ջրոյ երեսը կը ծփայր և ջուրերն տակաւ առ տակաւ իջնալոյ վրայ էին, տապանն քսուած է այս լերան և Նոյ Նահապետ «Գոհանամբ Արարչին» ասելով փառք կը տայ և ց'արդ լերան անունն մնաց «Գոհանամբ լեռ»»:

Միրախորեան 1885, 137:

Ե. Կամք քո է:

Գրառվել է՝ 19-րդ դ. երկրորդ կես, Ագուլիսում:
Բանասաց՝ անհայտ:

[Ագուլիս] Քաղաքը նման է այգու, ճակատով ուղղուած դէպի Արաքս... միւս կողմից Կամք քո է անունով սարն է:

Այս սարի մասին աւանդութեամբ պատմում են, թէ ջրհեղեղի ժամանակ Նոյ նահապետը այդ տեղ հարցրել է իւր կնոջը, թէ նա կը ցանկանամք արդեօք իջնել այդ սարի վերայ: Կինը պատասխանել է. «Կամք քո է», իսկ տապանը լողացել է դէպի Մասիս:

Նուրիան 1874, 3: Никитин 1882, 132.

Զ1. [Նավս (Նավսալեռ)]:

Գրառվել է՝ 2017 թ. Կապանի շրջ. Շիկահող գ. (Սյունիքի մարզ):
Բանասաց՝ Գրիշա Սմբատյան (ծնվ. Շիկահող գ., 1953 թ.):

Նոյան տապանը էկել է, բազմել Նավսի վրա, բայց երբ ջուրը նորից բարձրացել է, թողել գնացել է դէպի Մասիս:

Միմոնյան (դաշտ) 2017:

Զ2.

Գրառվել է՝ 14-րդ դ., Սյունիքում:
Գրառող՝ Գրիգոր Տաթևացի

Ագռան զի՛նչ եղև. – Ոմանք ասեն թէ խեղդեցաւ ի ջուրն. և ընդ բերանն յղացեալ էր գուգակիցն: Եւ կամ ի գէշք մարմնոյ կենդանոյ ինչ: Կամ որպէս ասեն թէ՝ Ներսէս անուն արուեստաւոր տապանին՝ շինեաց իւր տուն իվերոյ կողմանէ. և զի ո՛չ էր հրամանաւն Աստուծոյ՝ սատակեցաւ նա՛ անդ, և գնորա գէշն ուտէր ագռան:

Գրիգոր Տաթևացի 1729, 294:

Զ3.

Գրառվել է՝ 1951 թ. Զանգեզուրի շրջ. Ծավ-Շիշկերտ գ. (այժմ՝ Սյունիքի մարզ):
Բանասաց՝ անհայտ:

«Նոյ նահապետը իր նավը շինելու համար հրավիրում է Ներսես անունով մի ճարտարապետի: Սա տապանի վերևում իր համար մի

սենյակ է շինում և որովհետև դա Աստծո հրամանով չէր, ուստի այնտեղ էլ մեռավ Ներսեսը և նրա դիակն էր, որ Նոյի արձակած ագռավն ուտում էր:

Խանգաղյան 1980, 218

Է. Նպատ–Նոյապատ:

Գրառվել է՝ 19-րդ դ. առաջին կես, Ծաղկոտն գավառում (այժմ՝ Թուրքիայի Ադրի իլում (Վիլայեթ)):

Բանասաց՝ անհայտ:

Նոյապատ (Նպատ) լեռնն հույ առ Մասիս և կից ընդ Ծաղկոտն, ուստի բղխեն ակունք եղեմաբուխ գետոց աշխարհիս՝ առաջին ամարանոց Նահապետիս մերոյ սրբոյ: Քանզի այր հինգհարիւրամեան նախ քան զհեղեղն եղեալ Նոյի՝ լսէր արդեօք կամըն թեռնոյր զտեղոյ դրախտին Ադամայ, և հույ յայն տեղի փափագէր բնակել՝ գէթ զամիսս ինչ տարւոյն:

Թաղիադեանց 1847, 178:

Ը. [Սուկավետ]:

Գրառվել է՝ 20-րդ դ. առաջին կես, Ներքին Բասենում (այժմ՝ Թուրքիայի Էրզուրում իլի (Վիլայեթ) Փասինլեր շրջան):

Բանասաց՝ անհայտ:

... Երբ Նոյի տապանը Բաբելոնի կողմերից ջրհեղեղը քշել, բերել է Հայաստան, մի պահ կանգ է առել Քոսադաղի (Սուկավետ) վրա և ապա Աստծո հրամանով շարժվել դեպի արևելք՝ Մասիս լեռան վրա հանգչելու համար:... Ժողովուրդը Մասիս նվիրական հսկա լեռը համարում էր ընդհանուր մարդկության երկրորդ ծնող, քանզի այս սարի վրա էր հանգչել Նոյան տապանը:

Հակոբյան 1974, 250-251:

Թ. [Օձասար (Վիշապասար, Իլան–դաղ)]:

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Նախիջևանում:

Բանասաց՝ անհայտ:

Въ то время, когда земля была еще покрыта водою, ковчегъ Ноя, плывя въ ночное время по этой мѣстности, ударился объ эту гору.

Ударъ былъ такъ силенъ, что гора раздвоилась, а въ ковчегѣ образовались значительныя поврежденія. Ной, въ порывѣ справедливаго гнѣва своего, въ виду угрожавшаго ему потопленія, проклялъ эту гору и повелѣлъ населить ее змѣямъ и драконамъ. Съ тѣхъ поръ гора осталась раздѣленной, заселилась разными чудовищными гадами, драконами, змѣями и стала называться змѣиной-горой (Илантъ-Дагъ).
Никитин 1882, 108.

Թարգմանություն

Ջրհեղեղի ժամանակ Նոյի տապանը գիշերով խփվում է այս լեռանը: Հարվածն այնքան ուժգին էր, որ լեռը ձեղքվում է երկու մասի, իսկ տապանը էսպես վնասվում է: Նոյն, արդարորեն զայրանալով, քանի որ տաապանը սպառնում էր խորտակվել, անիծում է այս լեռը և հրամայում այն բնակեցնել միայն օձերով և վիշապներով: Այդ օրվանից լեռը մնում է երկփեղկված և բնակեցված սարսափելի սողուններով՝ վիշապներով և օձերով և կոչվեց Օձասար (Իլան-դաղ):

ԴՐՎԱԳ III

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ

Ա. Ակոռի:

Գրառվել է՝ 19-րդ դ. առաջին կես, Նախիջևանի գավառում:
Բանասաց՝ անհայտ:

Արկ ոռի, այսինքն տնկեաց ուռ: Խաղողի մատին՝ արգատ կամ ուռ ասենք: Արդ այս առաջին և հնագույն բնակարան ազգի մարդկան յետ ջրհեղեղին, անկանի ՚ի հիւսիսային կողմանէ ոտանն Մասսեաց. ուր տնկեաց Նոյ զուռ որթոյ՝ առանց որոյ այգին ո՛չ լինի: Ասացի առաջին բնակարան. նախ՝ զի բնականաբար Նոյ իջեալ ՚ի լեռնէն՝ աստ պատահել պիտէր. և վասն բնակութեան ուրն ոգւոց միայն՝ երկար ճանապարհ երթալ բնական իմն չէր: Երկիրն բաւական էր, ո՛չ եթէ ուրից՝ այլ՝ յաւէտ քան զուրն հազարաց: Մանաւանդ զի և դաշտավայրք դեռ տամուկք էին. և Երասխ անցանել պիտէր ամենայն ախիւքն, եթէ որ ուզենային գնալ ՚ի Նախիջևան քաղաք՝ կամ յայլուր: Անդ՝ ուր տնկեաց Նոյ զայգին, անդ արք և ՚ի գինույն: Քանան կամ լաւ ևս՝ Խըն Հայերէն, իբր արմատ խընդ, խանդ, և ծաղր բառից՝ ծաղր արար գնաւ. և անէծս ընկալեալ մերժեցաւ յերեսաց նորա. և բնակեցաւ ՚ի Քանաքեր:

Թաղիադեանց 1847, 175-176:

Բ. Աղանէտուն:

Գրառվել է՝ 19-րդ դ. առաջին կես, Էջմիածնի գավառում:
Բանասաց՝ անհայտ:

Արձակեաց Նոյ զաղանին՝ որ դադար ո՛չ գտեալ դարձաւ. բայց զկնի աուրց կրկին արձակեալ՝ այլ ո՛չ ևս դարձաւ: Անուն սորա, բնաւորութիւն աղանույ, դրութիւն գեղջս (ակնյանդիման Արարատ լերին) և այս անցք, զարմանալի եղանակաւ հաղորդին իրերաց: Բայց ինքնին երևան լինի աստանօր և միւս խնդիր. զի որ ինչ անուանի սուրբ և յիշատակաց արժանիք գործեցան, ՚ի Հիւսիսոյ Մասսեաց լերինն յիշատակին. և որ ինչ անախորժ, ապերախտ և դժամնելիք՝ ՚ի Հարաւոյ նորա: Եւ եթէ չիցէ այս ծագեալ ՚ի մտաց

Նախաշտարակեան նահապետաց՝ իբր յարհամարհուրթին աշտարակին՝ որ ՚ի Հարաւոյ Մասսեաց և շինողացն:

Թաղիադեանց 1847, 178-179:

Գ. Արևշատ:

Գրառվել է՝ 1976 թ., Լենինականի շրջ. Արևշատ գ. (այժմ՝ Շիրակի մարզ):
Բանասաց՝ անհայտ:

Գյուղի նախկին անունը եղել է Եկանլար: Ինչո՞ւ Եկանլար: Պարսկահայոց Մարանդ գավառում երկու Եկան հայի գյուղեր են եղել, որ հիմա չկան: Ասում են, թե անվան ծագումը «Եկանք» բառից է, որ Նոյի կինը, ջրհեղեղից հետո, եկել-հասել է այս առաջին կայանքն ու ասել. «Դե, եկանք»:

Խանգաղյան Ս., 1984, էջ 580-581:

Դ. Եղվարդ:

Գրառվել է՝ 19-րդ դ. առաջին կես, Կոտայք գավառում:
Բանասաց՝ անհայտ:

Ջրավարեալ նախահարք՝ անհամբեր սպասէին զիջանելոյ ջուրց և երևելոյ երկրի. ապա զկնի աւուրց ինչ՝ իբրև տեսին զստորոտ լեռին Արայի բացեալ, գոչեցին. «Եղև՛ արդ». այսինքն՝ արդ եղև դարունն ջուրց:

Թաղիադեանց 1847, 173:

Ե. [Երևի (Երևան), Կուզի-Նուհ, Նախիջևան, Մայր անդ (Մարանդ)]:

Գրառվել է՝ 19-րդ դ. առաջին կես, Երևանի գավառում:
Բանասաց՝ անհայտ:

Der Name Eriwan oder richtiger Erawan bedeutet in armenischer Sprache: “htbar”. Die Sage behauptet, Noah habe, als er nach der Flut zuerst vom Ararat aus hier die Erde erblickt, gerufen: sie ist htbar! und davon habe Gegend und Ort den – 171 – Namen. In diesen Gegenden stößt man überall auf Sagen von Noah. Die Perser nennen den Ararat Ruhi-Nuh, d. i. der Berg des Noah, die Armenier nennen ihn Massis, d.

i. Mutter der Welt. Die Gegend um den östlichen Fuß des Berges heißt Archnoioda, d. i. der Fuß des Noah, weil er hier ausgestiegen. Das Dorf Agorhi, Akhori, Arghari, d. h. arg = er hat gepflanzt, und uazi = die Rebe, war seine Wohnung, hier pflanzte er den aus dem Paradiese mitgebrachten Rebstock, der noch jetzt gezeigt wird, allein er trägt seine weingebenden Trauben her, der Sünden der Menschen halber. Die Kirche steht an der Stelle wo Noah's Altar gestanden. Die Stadt Nachidtchirran heißt: Der erste Ort des herabsteigens Noah's (Flav. Joseph. nennt den Ort Apobatorium). Der Ort Marard bedeutet: Die Mutter liegt dort, weil das Weib Noah's dort begraben.

von Haxthausen 1856, 170-171:

Թարգմանություն

Էրիվան, կամ, ավելի ճիշտ, Էրավան հայերեն նշանակում է «տեսանելի». Ավանդությունը պնդում է, որ երբ Նոյը ջրհեղեղից հետո Արարատի վրայից նկատեց հողը, բացականչեց. «այդ երևում է», և այստեղից էլ տարածքի, վայրի անունը: Մեկ այլ ավանդության համաձայն, քաղաքը կառուցել է Էրվար անունով մի հայ թագավոր: Այս վայրերում ամենուր հանդիպում են Նոյի մասին ավանդազրույցներ: Պարսիկներն Արարատը կոչում են Ռուհ-ի-Նուհ, այսինքն, Նոյի սար, իսկ հայերն այն անվանում են Մասսիս, որ նշանակում է, Աշխարհի մայր: Լեռան արևելյան ստորոտի տարածքը կոչվում է Արխնոյոդա (Առնոյոտն), այսինքն, Նոյի ոտք, քանի որ նա այստեղ է դուրս եկել: Ագոռի, Ախորի, Արգարի գյուղը, այսինքն, «արգ» = «նա տնկեց» և «ուազի» = «վազը», նրա բնակատեղին է եղել, այստեղ է նա տնկել դրախտից բերված խողողի ճյուղը, որը դեռ այսօր էլ ցույց են տալիս, և բավ էր, որ բերեր իր գինեվետ խաղողը, և մարդկային մեղքերը կես եղան: Եկեղեցի է կանգնված այն վայրում, որտեղ Նոյը զոհասեղան է դրել: Նախիջիրան (Նախիջևան) նշանակում է «Նոյի իջման առաջին տեղը» (Հովսեփոս Փլավիանոսն այդ վայրն անվանում է Ապոբատորում): Մարանդ տեղանունը նշանակում է «Այստեղ է պառկած մայրը», քանիոր այնտեղ թաղված է Նոյի կինը:

Ջ1. Երևան:

Գրառվել է՝ 19-րդ դ. առաջին կես, Երևանի գավառում:
Բանասաց՝ անհայտ:

Իսկ ստորագրությունն հին Հայաստանի անյոյս եղեալ ի պատմութեանց՝ յառաջ բերէ զաւանդութիւնս բնակչացն: Եւ այնպէս զանուանադրութիւն քաղաքիս տարեալ հասուցանէ ցՆոյ նահապետ՝ իբր ի նմանէ անուանադրեալ, քանզի, ասէ, ցամաք այսր կողման նախ և յառաջ ել յերևան ի նուագիլ ջուրցն յետ ջրհեղեղի, վասն այնորիկ ի նմանէ կոչեցաւ Երևան:

Շահխաթունեանց 2014, 296:

Ջ2.

Գրառվել է՝ 19-րդ դ. առաջին կես, Երևանի գավառում:
Բանասաց՝ անհայտ:

Նոյ, յորժամ բացեալ զտապանն և տեսեալ զբարձրութիւն լեռանց Կոտէիցն և ասաց. «Ահա երևան»:

Թաղիադեանց 1847, 123:

Է. Կոշ (Կուշ):

Գրառվել է՝ 19-րդ դ. առաջին կես, Արագածոտն գավառում:
Բանասաց՝ անհայտ:

Իսկ որդի նորա (Քանանի) Քուշ անցեալ յարևմուտս կոյս յոստինչ Արագած լերին՝ ՚ի տեղի շրջապատեալ լերամբք՝ բնակեցաւ անդ, և անուանեաց զայն Քուշ կամ Կոշ, զոր ոմանք աղաւաղելով Կուաշն կոչեցին զնա:

Թաղիադեանց 1847, 177:

Ը. Մայր անդ (Մարանդ):

Գրառվել է՝ 19-րդ դ. առաջին կես, Խոյ գավառում:
Բանասաց՝ անհայտ:

Անկանի յարևելից հարաւոյ Նախչուանայ. և ուղիղ ընդ արևելս Զարուանդայ և Հեր կամ Խոյ գաւառի. այսպէս կոչեցեալ՝ ՚ի սակս

Նոյեմբարայ կնոջ Նոյի, և մօր հանուր մարդկութեանս՝ անդր թաղեալ լինելոյ:

Թաղիադեանց 1847, 181:

Թ.1. Նախիջևան:

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Նախիջևանի գավառում:

Բանասաց՝ անհայտ:

Эриванская губернія у армянъ считается самымъ первымъ мѣстомъ возражденія человѣчества послѣ всемірнаго потопа. Сами они считаютъ себя прямыми потомками Ноя, который говорилъ по-армянски... Нахичеванъ, что означаетъ первое мѣсто переселенія или первое пристанище, Նախ-չուարան կամ Նախ-իջևան, считаютъ мѣстомъ переселенія, смерти и погребенія Ноя.

Зелинскій 1882, II, 1-2:

Թարգմանություն

Երևանի գուրերնիան հայերի մոտ համարվում է առաջին այն վայրը, որտեղից սկսվեց մարդկային վերածնունդը՝ համաշխարհային ջրհեղեղից հետո: Ժողովուրդն իրեն համարում է Նոյի անմիջական սերունդը, ով խոսում էր հայերեն... Նախիջևան, կամ Նախ-չուարան անվանումը մեկնաբանում է որպես Նոյի առաջին բնակության, նաև մահվան և հուղարկավորման վայր:

Թ.2.

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Նախիջևանի գավառում:

Բանասաց՝ անհայտ:

Այս քաղաքը, եթե մտիկ տանք հին հայ աւանդութեան, ջրհեղեղից յետոյ առաջինն է աշխարհիս վերայ, որովհետև Նոյ տապանից դուրս գալով նախ այստեղ իջևանեցաւ և մինչև այսօր էլ գիւղացիք պարծանքով ցոյց են տալիս այժմեան հարաւակողմեան մի փոքրիկ մատուռ, որը իբր թէ Աստուածահաճոյ Նոյ Նահապետի գերեզմանն է, ու ամեն տարի Կանաչ Կիւրակէ օրը քաղաքից և շրջակայքից դիմում են ուխտաւորների խառն բազմութիւն:

Սելճուկ 1875, էջ 3:

Ժ. [Ողջաբերդ]:

Գրառվել է՝ 2014 թ. Կոտայքի մարզի Ողջաբերդ գ.:

Բանասաց՝ Գյուլվարդ Միքայելյան (ծնվ. Ողջաբերդ գ., 1933 թ., նախնիները Վահից):

Երբ ջրհեղեղ է եղել [աժարտվել է], մարդ է ուղարկել Նոյը, որ նա տեսնի ի՞նչ է մնացել, ի՞նչ է ավերվել: Այդ մարդը եկել է այս գյուղը և սեպագրով գրել է, որ «Ողջ է բերդը»:

Սիմոնյան, Հովհաննիսյան (դաշտ.) 2014, 1Ժ. 13ր.:

ԺԱ. Ուշի:

Գրառվել է՝ 19-րդ դ. առաջին կես, Արագածոտն գավառում:

Բանասաց՝ անհայտ:

Իբր թէ տեղին՝ զոր յՈւշի ունէին, իբրև զվերջին կիտանիչ զիջանելոյ ջուրցն՝ բացաւ, երևեցաւ: Ստուգաբանութիւնք անունացս ո՛չ միայն անվրէպ հաստատութիւնք են Տապանին Նոյի իջանելոյ ՚ի Հայաստան, այլ մանաւանդ թէ՛ և Դրախտին Եդիմայ անդր լինելոյ: Թաղիադեանց 1847, 174-175:

ԺԲ. Քանաքեռ (Քամաքեր):

Գրառվել է՝ 19-րդ դ. առաջին կես, Կոտայք գավառում:

Բանասաց՝ անհայտ:

Անկանի ՚ի հիւսիսոյ Կոնդին Երևանայ, և յարևմտից ուսոյ Կոնեզանն՝ ուր գերեզմանոցն է Երևանայ: Անարգեալն ՚ի Հօրէն Քամկամ Քանան, գտվա քերեալ բնակութիւն արար յՈւտի մեր նահանգ: Թաղիադեանց 1847, 177:

ԺԳ. Օշական:

Գրառվել է՝ 19-րդ դ. առաջին կես, Արագածոտն գավառում:

Բանասաց՝ անհայտ:

Թէպէտև երևումն Եղուարդայ յոյս մեծ ծնանէր յոգի նախահարց. սակայն տակաւին զդաշտն մեծ ծովացեալ ջուրքք զառաջեաւ տեսեալ՝ ոչ ինչ կարէին համարձակել ՚ի փոփոխումն վիճակի իւրեանց: Բայց իբրև վերստին հայեցեալ տեսին զբլուրն ծիրանա-

փայլ չեչաքարանց, որ մինչև ցայսօր բոսորափայլ երանգէ զավանն Օշականայ՝ զուարճացեալ խրախուսանօք իմն ձայնեցին. «Օշական, Օշական. այսինքն է՝ երանի աչաց մերոց՝ զի տեսաք և զայս բացեալ»: Յերևել Օշականայ թէպէտև հնար էր աշխարհին բնակել ՚ի մարդկանէ՝ սակայն և այնպէս դեռ վերջին աստիճան բարձրութեան ջրոյն զամենայն դաշտ բերրի և զպտղաւէտ ծածկեալ ունէր. մինչ երևեցաւ Ուշին աւան առ Քասաղ գետով:

Թաղիադեանց 1847, 174:

ԴՐՎԱԳ IV

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ա. Ագոստոսի քար:

Գրառվել է՝ 19-րդ դ. առաջին կես, Զարևանդ (՝) գավառում:

Բանասաց՝ անհայտ:

Նոյ զագոստոսն արձակեաց. և նա գնացեալ ո՛չ եկն վերստին ՚ի տապան անդր: Վասն զի ընդ հարաւ գնաց. և լեառն՝ ուր նստաւ և բոյն արար՝ կոչի մինչ ցարդ Ագոստոսի Քար: Եւ է կրկին. մին որ բաժանէ զԶարևանդ ՚ի հին Գաբեղենից գաւառէն և յինքն ընկղմէ զՏիգրիս գետ... Եւ երկրորդ՝ ՚ի Կարդուաց աշխարհին, ՚ի հիւսիսոյ Կապուտակ ծովակին՝ որ տանի ՚ի Դավրիժոյ...:

Թաղիադեանց 1847, 180:

Բ. Նոյի գերեզմանը:

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Նախիջևանի գավառում:

Բանասաց՝ անհայտ:

Ավանդությունը հաստատում է, որ Մասիսի գագաթի ժամանակավոր բնակիչը՝ Նոյ Նահապետը, հավիտենական քնով ննջում է Նախիջևանում: Վերը հիշված ավերակների մեջ դուք կտեսնեք մի փոքրիկ կրապատ մատուռ, այնքան փոքր, որ գլուխդ դիպչում է կամարին: Սրա մեջտեղը դրված է մի անարձանագիր տապանաքար, և հենց դրա տակ հանգստանում են իբր Նոյան ոսկերոտիքը: Ճանապարհորդները հետաքրքրությունից շարժված գալիս են այցելության՝ գերեզմանին լոկ այցելելու համար, իսկ տեղական բարեպաշտ հայերը խունկ են ծխում նրա վրա և խնդրում նրա բարեխոսությունը: Ծանր քարերի տափակ կտորտանքը, որ երբեմն կաչում է մատուռի պատին, ապացույց է աղոթողի մաղթանքի արժանավոր ընդունելությանը: Նոյան 5039 տարեկան ոսկերոտիքը այժմ տալիս են Նախիջևանի հոգևոր կառավարությանը մոտ 25 ռուբլի տարեկան հարկ:

Քաջբերունի 2003, 55-56:

Բ 2.

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Նախիջևանի գավառում:
Բանասաց՝ անհայտ:

Նոյեան տապանը, որի մօտ է Հայոց գերեզմանատունը և որը միննոյն ժամանակ ուխտատեղի է Հայերի համար: Ահա այս տապանով ժողովուրդը Նախիջևանի հաստատում է, թէ մեր Նոր Նահապետը շինեց Նախիջևանը իւր Մասիս սարից իջելուց յետոյ և ապա երբ մեռաւ թաղեցաւ այնտեղ: Նոյեան տապանը քաղաքից բաւական հեռու է գտնվում, բայց և այնպէս նորանից յետոյ էլ դեռևս շարունակվում են ւաւերակները: Նոյեան տապանի մօտ գտնուած ամրոցը, որի շուրջը ահագին փոս է փորուած, երբեմն երևի թշնամիներից պաշտպանուելու նպատակաւ, Երեխորան հին եկեղեցին, որ շինած է Երրորդութիւն անունով եկեղեցու մօտ ու նորանից բաժանուում է միայն մի նեղ անցքով: Այս Երեխորան եկեղեցին, որոյ մէջ թէև իւր անհաստատ և խախտուտ շինութեան պատճառով ժամերգութիւն չէ լինում, բայց այնուամենայնիւ ժողովրդեան համար ծառայում է իբրև աղօթատուն, այդ եկեղեցին, որի յարկը բոլորովին անհաստատ կերպով է կպած իւր պատերին, շատ տեղ ահագին աղիւսի, կրի ու հողի կտորներ մի քանի բարակ եղէգներով են միայն պահպանուած, շատ վտանգաւոր է, պատճառ, որ այդ աղիւսի, կրի ու հողի կտորները անկասկած վաղ թէ ուշ թափուելով մահ պիտի պատճառեն եկեղեցու մէջ եղողներին. ուստի այդ պատճառաւ իսկ կօխպուեցաւ մի ժամանակ, բայց յետոյ կրկին անգամ ժողովուրդը իր խնդրանօք բացեց և ուր յաճախում է միշտ թողնելու իւր մեղքերը, գուցե և մի օր՝ իւր կեանքը:

Ժողովուրդը աւաղութեամբ ասում է, որ իբրև թէ Նոյի երեք հարսները՝ Նազանը, Հերիքնազանը, Զարմանազանը թաղուած են այս երեք խորանների տակ:

Քաղաքիս աւերակներից ուշադրութեան արժանի է շատ և այն լայնածաւալ ու պտղատու այգին, որ «Նախնական» անունն է կրում. սորա մասին ասում են աւանդութեամբ, թէ իբրև Նոյի տնկած այգին է: Այս վերոյիշեալ այգուց սկսում են և Նախիջևանի միւս մնացեալ այգիները:

Տէր Սարգսեան 1873, 2:

Բ 3.

Գրառվել է՝ 19-րդ դ. երկրորդ կես, Նախիջևանի գավառում:
Բանասաց՝ անհայտ:

... Այդ բերդից դէպ'ի արևելք գտնվում է Նախիջևանի հանգստարանի մի մասը, Նոյատապան անուամբ: Այս հանգստարանում գտանվում է ինչպէս ասում են, մեր Նոյ Նահապետի գերեզմանը, որի վերայ մի փոքրիկ մատուռ է շինած և որը հաւասար է գետնին, այնպէս որ այդ մատուռը գետնի մէջ է [մի մասը, բայց միւս կողմից բաց է: Այդ մատուռը շատ ժամանակ չէ, որ գտած է. առաջ դորա ուխտը կատարում էին քաղաքի դէպի արևմուտք եղած հանգստարանում, որին կոչում էին «Քեօյլաբաբա»: Այնտեղ կար մի մատուռ, այդ էր կոսպաշտների քրմապետի մատուռը, որ Նախիջևանցիք ընդունում էին Նոյի գերեզմանը, որովհետև ասանդութիւն կար, որ Նոյի գերեզմանը Նախիջևանումն է: Յետոյ տեղեկացան Էջմիածնի վարդապետներից, կարդալով հին զանազան գրուածներ, թէ Նոյ Նահապետի գերեզմանը պէտք է որոնել բերդի մօտ եղող հանգստարանում և ահա որոնելով գտել են այդ մատուռը:

Սովորութիւն կայ ժողովրդի մէջ, երբ կմտնին և կը համբուրեն այդ գերեզմանի քարը ու մի կամ երկու քար կըպցնեն պատին կամ առաստաղին, եթէ կպցրած քարերը կպան, կնշանակէ՝ սորա արած ուխտը կատարվեցաւ, իսկ եթէ ոչ, կնշանակէ՝ ընդունելի չէ: Նոյեատապանի ուխտը լինում է սովորաբար Նոր կիրակի կամ Կրկնագատկին, որտեղ ժողովում է մեծ բազմութիւն, թէ՛ Նախիջևանից և թէ՛ սորա շրջակայ գիւղերից, թէ՛ կանայք թէ՛ մարդիկ և այս օրը այստեղ յիշատակ մեռելոց են կատարում՝ գերեզմաններ օրհնելով: ...

Յակովբեանց 1873, 2:

Բ 4.

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ-20-րդ դ. սկիզբ, Նախիջևանի գավառում:
Բանասաց՝ անհայտ:

... Հնագիտական յիշատակարաններից ամենահինը Նոյի գերեզմանն է, որ բարձրանում է հին Նախիջևանի քաղաքատեղում, շրջապատուած բազմաթիւ շէնքերի որմնապատերով, և մի ընդարձակ գերեզմանատնով:

Սա 10 ոտնաչափ տրամագծով ութանկիւնի մի շէնք է, գմբեթա-

ծածկ, մեջտեղում մի սին: Ունի մի ցածր դուռ: Ոչ միայն հայերը, այլ և հրէաներն ու մահմեդականները հաւատում են այն աւանդութեան և յաճախ, մանաւանդ զատկի մեռելոցին, ուխտ գալիս այստեղ:

Աւանդութիւնը ցոյց է տալիս նաև Նոյի քրոջ գերեզմանը, այստեղից փոքր ինչ հեռու մի բլրի գագաթին. – սա քարերի մի կոյտ է և մի աղիւսէ պատ, որ համարում է մատուռի մնացորդ:

Լալայեան 1906, 139:

Գ 1. Նոյեմզարի գերեզմանը:

Գրառվել է՝ 19-րդ դ. երկրորդ կես, Նախիջևանի գավառում:
Բանասաց՝ անհայտ:

Տեսած եմ Հին Նախիջևանու գերեզմանատան մեջ մի ցած կամարով ծածկված շատ հին գերեզման, զոր հայք և պարսիկք Նոյի գերեզման կ'անվանեն: Նույն օրինակ մի գերեզման ևս Մարանդ քաղաքի մեջ կա, ուր բնակիչք բոլորովին պարսիկ են. բայց ճրագլուսով կը պատվեն այն շիրիմը և կը պատմեն թէ Նոյա կնոջ գերեզմանն է, ինչպես որ մեր հնագետքն ալ Մարանդ անունը կ'ստուգաբանեն Մայր Անդ:

Սրվանձտյանց 1978, 74:

Գ 2.

Գրառվել է՝ 19-րդ դ. երկրորդ կես, Խոյ գավառում:
Բանասաց՝ անհայտ:

Հայ պատմագիրք աւանդելով, որ Նոյ նահապետի կինն այստեղ է թաղուած, Մարանդ բառն «Մայր անդ» բառի կրճատումն են համարում: Բայց թէ իրօք Նոյի կինն այստեղ մեռաւ և այստեղ թաղուեց, այդ իրողութիւնը դեռ կարօտ է պատմականապէս լուծուելու և ստուգուելու, թէ և աւանդութիւնն, պատմութեան այդ մտերիմ օգնականն, դարուց 'ի դար կտակել է զայն Հայերին և սոքա իրեանց ժառանգներին: Եւ իրօք թուրքերը այսօր իսկ ցոյց կը տան քեզ մի մզկիթ, որոյ միջումն կայ մի գերեզման, որ մեծ ուխտատեղի է, և այդ է – ինչպէս ասում են իրենք – Նոյ նահապետի կնոջ՝ Նոյեմզարի շիրիմն: Անշուշտ ժամանակաւ Մարանդ հայի քաղաք է եղել և եկեղեցիք է ունեցել, որոց տեղ այսօր բարձրանում են մզկիթներ: Փոքր ինչ հեռու քաղաքից թուրքերն ցոյց են տալիս մի մեծ սարակի

վերայ նոյնպէս մի ուխտատեղի, որ դարձեալ «իմանազադէ» կամ օջախ անունն է կրում, ով գիտէ դուցէ Նոյի որդիքներից կամ թոռներից մինն է թաղուած այնտեղ:

«Մեղու Հայաստանի» 1875, № 46, 1:

Գ. Նոյի տապանից ընկած քարը (Ձյունահարս լեռ):

Գրառվել է՝ 20-րդ դարի կեսեր, Զանգեզուրի շրջ. Քաջարան ք. (այժմ՝ Սյունիքի մարզ):

Բանասաց՝ անհայտ:

Ասում են, թե այստեղ մի վճիտ աղբյուր կա՝ մեջը հազար ձեռք կպած մի մուգ սև քար: Այդ քարը ընկել է Նոյ նահապետի տապանից, երբ նրա նավն այս կողմերով անցնում էր դեպի Մասսի կատարը:

Երաշտ է եղել ձորերում ու տափարակներում: Մարդիկ թափոր առ թափոր բարձրացել են մինչև Ձյունահարսի վճիտ աղբյուրը, Նոյի քարը հանել աղբյուրից ու զոհեր մատուցելով նրան, երգեր հնչեցնելով, տարել, ման են ածել երաշտից խանձվող արտերում, որ երկնքի աչքը քաղցրանալով՝ թացանա, ամպ ու անձրև ուղարկի հողին:

Խանգադյան 1965, 67-68:

Ե. Սեմի աղբյուր:

Գրառվել է՝ 20-րդ դ. երկրորդ կես, Շարուրում (Նախիջևան):

Բանասաց՝ անհայտ:

Սեմի սառնորակ աղբյուրը գտնվում էր Շարուրի Կարաբաղլար գյուղի մոտ: Ավանդության համաձայն, այդ աղբյուրը մոտակա լեռան լանջից այստեղ էր բերել Նոյի որդի Սեմը:

Այվազյան 1995, 33:

Զ. Նոյան տապանի տեղը:

Գրառվել է՝ 19-րդ դ. երկրորդ կես, Արարատյան դաշտում:

Բանասաց՝ անհայտ:

Մեծ Մասիսի արևմտեան ծայրում մի տափարակ տեղ կայ՝ ձիւնածածկ: Համարում են, որ դա Նոյի տապանի տեղն է:

Աթանասեանց Յ., 1877, էջ 1:

ԴՐՎԱԳ V

ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՎ ԹՌՉՈՒՆՆԵՐ

Ա. Զատիկ միջատ:

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Չմշկածագ գավառի Պարտիզակ գ. (այժմ՝ Թուրքիայի Թունջելի իլի Չեմիշգեզեկ շրջ.):

Գրառող՝ Վ. Տեր-Միանսայան:

Դրախտի այն հաւիկն է, որ Նոյի տապանին մէջ առաջին անգամ հաւկիթ մը անցնել է, զոր Նոյ գգուեր, պագեր ու փայփայեր, ծոցիկն է դրեր, և ահա այս հաւկիթէն ծներ է ժժի մը, խատուտիկ, սիրունիկ, պըպըտիկ, որ լեզու է ելեր, աւետեր է Նոյի. «Քրիստոս յարեան»: Նոյ ցնծացեր և խելայեղ եղեր և անուն է դրեր այդ ժժին – Զատիկ, իբր Աստուծոյ մէկ զատ տուրքը, շնորհքը, իրեն և իրեններուն համար զատ, զուտ մէկ աւանդ ու յիշատակ:

Տեր-Միանսեան 1904, 166:

Բ. Գոմէշ:

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Լոռիում:

Բանասաց՝ անհայտ:

Նոյ նահապետը բոլոր կենդանիներից առաւ, տապանի մէջ մի-այն գոմէշին մոռացաւ: Երբ ջրհեղեղն սկսուեց, և տապանը լողաց ջրի երեսին, գոմէշը կիսախեղդ վազեց դեպի տապանը և «Նոյէ, Նոյէ» բղաւեց: Նոյը նայեց, տեսաւ գոմէշին, խղճաց և օրհնեց, որ լաւ լող տայ՝ ազատուի: Եվ այդ օրից ի վեր գոմէշը սիրեց ջուրը և շարունակեց «Նոյէ» կանչել՝ բառաչել:

Լալայեան 1903, 193-194:

Գ. Կատու:

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Գանձակի գավառում:

Բանասաց՝ անհայտ:

Նոյի տապանում ապաստանած միջոցին՝ առիծը փոնջտացել է և նրա քթից ընկել է կատուն: Այս պատճառով էլ սա նրան սաստիկ նման է:

Լալայեան 1900, 343:

Գ. [Օձն ու ծիծեռնակը]:

Գրառվել է՝ 13-րդ դ., վայրն անհայտ է:

Գրառող՝ Վարդան Այգեկցի:

Յորժամ Նոյ ի տապան էր, ասացել են թէ տապանն ծակեցաւ և ասաց Նոյ. թէ ի կենդանեացտ ով որ կալնու զծակն, յորժամ ի դուրս ելանեմք, զորն ի կենդանեացս ուզէ, ես իրեն կերակուր տամ և օձն կալաւ զծակն, և յորժամ ելան ի տապանէն, ասաց Նոյ. Խնդրեայ, զորն կու խնդրես: Եւ օձ ղրկեց զգոռեխն և ասաց. թէ տես, թէ որու արին անուշ է և ինձ ասայ. և զնաց զամէն կենդանեացն տեսաւ և գիտաց, զի մարդոյն շլնէցն արին անուշ է և յորժամ գայր խապար բերել, ծիծառն՝ սգօն հաւ է և ասաց. թէ ես և դուն եղբայր ենք. ինձ ասայ, թէ ո՞րն է անուշ. և նա ասաց, թէ մարդոյն շլնէցն. և ասաց, թէ զլեզուս ի բերանս ած, որ տեսնեմ, թէ ըղորդ ես. և կտրեց զլեզուն ի տպակ և հասեալ օձին ասաց. Ջի՛նչ է. և սկսաւ գռեալ. և գիտացեալ օձին և փախաւ ծիծէտն. և օձին զհետ մտեալ էխած զագին և կտրեաց. և մնաց ագ ծիծռոն խոռ: Եւ սատակեալ օձն այն... և այն է, որ խայթէ զմարդն՝ վասն խոստման Նոյի:

Մառ 1894, մաս 2, 316-317:

Ե. Օձ, բզէզ ու ծիծեռնակ:

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, վայրն անհայտ է:

Բանասաց՝ անհայտ:

Ջրհեղեղը սաստիկ, երկինք պատռած հեղեղ կը հոսէ մեղքերուն մէջ ապականուած մարդուն գլխուն՝ զայն սրբելու համար աշխարհ ամբողջ վայն է պատեր: Կարծես երկնքի հրեշտակներ իրենց յորդ արցունքով սրբել ուզած էին մեղքերու մէջ կորսուած մարդը:

Երկինք կու լար, ու լուսաւորներ ալ կուլային: Իսկ մարդը. խենձ մարդը, ի՛նչ ըներ, ի՛նչ ըսեր: Պիտի աղօթէր՝ աղօթքն էր մոռցած, պիտի աղաչէր՝ աղաչելու կերպը կ'անգիտանար: Սիրտը քարացած, հոգին կուրացած: Կորսուած էր հոգով ու այսօր կորսուելու վրայ էր մարմնով ալ: Պիտի մեռնէր, այս էր Աստուածային անդառնալի վճիռը:

Իսկ Նոյ, անչափ մարդերուն մէջ միմիակ արդարը, Աստուծոյ միակ բարեկամը, տապանին մէջ հանդարտ ու լուրջ նայուածքով մը բարձունքէն կարեկցաբար կը դիտէր իր ոտքին տակ թաղուած ամբողջ կենդանի աշխարհի մը գերեզմանը:

Հեռուէն նշմարուեցաւ Մասիսի կատարը, որ մեծ ուրախութիւն ձգեց տապանին բնակիչներուն մէջ: Եւ մինչ տապանը սուր թռիչքով կը սաւառնէր «դէպի Մասիսի ալեգարդ կատարը», յանկարծ շլացուցիչ վայնասուն մը իրոտքերուն տակ պառկող ջուրերուն նման տժգունեց Նոյի պահ մը առաջ ուրախութեամբ փայլող գուարթ ու վեհ դէմքը, ու իր գլխուն վերև լացող սև երկընքին նման սև ամպ մը անցաւ աչքերուն առջևէն:

Նոյն միջոցին Նոյի կինը գլխուն մազերը փետտելով. «Կորսուեցանք» կը գոչէր, ու էրկանը վրայ կը վազէր: Ա՛լ կենդանիներուն իրարանցումը, վայնասունը, ողբն ու կաղկանձը նկարագրել չի կարելի: Ամբողջ կորսուող աշխարհին մանրանկարը կը ձևացնէր այդ հսկայ տապանը: Այդ բարձունքէն գահավիժելու վտանգն անբացատրելի սարսափով պատած էր ամենքը:

– Ի՞նչ կայ, ի՞նչ կայ, – պոռաց Նոյ, նստած տեղէն կանգուն մը վեր ցատկելով:

Նոյն միջոցին շունը, հաւատարիմ պահապանը իր տխուր «հաւհաւ»ներով մօտալուտ վտանգը կը գուժէր՝ դէպի տապանին յատակը բացուած բաւական խոշոր ծակ մը վազելով՝ ուսկից ջուրը արագ արագ ներս կը խուժէր:

Տապանին մէջ յանկարծ կարգ ու կանոն անյետացած էր, և վախը, ընդհանուր սարսափը կը տիրէր ամէն կողմ: Վայրի գազաններ նորէն ձեռք առած էին իրենց հին բնաւորութիւնը, վերջին անգամ մ'ալ գոհացում տալու համար իրենց գազանական վայրագութեան և առաջին անգամ Նոյի ու իր կնոջ սպառնալով: Աղուէսը, այդ երկչոտ խորամանկը ապշած մնացած էր խորհրդաւոր լռութեան մը մէջ: Ամենէն աւելի ուրախ էին ծովային կենդանիները, բայց այդ ուրախութիւնն ալ չափաւոր էր:

Նոյ ճարահատած՝ ժողով գումարեց բոլոր կենդանիները՝ խորհրդակցելու և ապա իր վերջին հրաժեշտը տալու համար: Յետին ճիգն մըն ալ ընելով՝ ոտքի ելաւ ու բարձրաձայն խոստացաւ կատարել որ և է փափաքը անոր որ կը յաջողէր վտանգին առաջքն առնել:

Օձն, որ ժամանակէ մը ի վէր Եւայի ամբաստանութեան վրէժը լուծելու յարմար առիթի մը կը սպասէր, յանկարծ գլուխը վէր առաւ և յանձն առաւ մօտալուտ վտանգին առաջքն առնել: Անմիջապէս գալարուեցաւ, ոլորուեցաւ, կսկլոր խցան մը եղած, այնպէս որ յաջողեցաւ ծակին բերանը ամրախէս փակել ու քիչ մը ետքը նակին

հանդարտութիւնը կը տիրէր ամէն կողմ. վտանգը անցած էր. տապանը բազմած էր փրկութեան լեռան վրայ:

Նոյ գլուխը տապանէն դուրս հանեց և փրկութեան լեռը նշմարելու ազատ շունչ մը առաւ «Փանք քեզ, Աստուած» գոչելով:

Նոյ փրկուած էր իր տապանին հետ:

Նոյ առաջարկեց օձին՝ ներկայացընել իր խնդիրքը, և օձը քանի մը օր պայմանաժամ խնդրեց: Օձը իր յաղթանակին վրայ չափազանց հպարտ՝ կարծէս ամէն դէմը ելլողին «կեանքդ ինծի կը պարտիս» ըսել կ'ուզէր. մանաւանդ իր առած խոստումը չափ ու սահման չէր դներ իր ուրախութեան: Ինչ ըսէր, ինչ խնդրէր, ինչ որ ուզէր պիտի կատարուէր. ալ բոլոր աշխարհի իր կամքին հպատակ, ամէն բախտ իրեն կապուած կրնար որ և է բանի մը կեանքը կամ մահը վճռել. ո՞վ ալ ըլլար, այսպիսի պարագայի մը մէջ մէկէն ի մէկ չպիտի կրնար որոշման մը յանգիլ, օձն ալ ապշած, շուարած՝ բզէզը կանչելով, հրամայեց՝ որ երթայ շրջի ամբողջ աշխարհը ու տեսնէ թէ ինչ է ամէնաքաղցր բանը այս երկրագունտին վրայ:

Բզէզը թռաւ, և շուտ մը անհետացաւ տեսութենէ:

Բզէզը շրջեցաւ շատ տեղ, թառեցաւ ամէն հանդիպող մարմնի վրայ, ամէն առարկայի և ամէն կենդանիի վրայ, և երբ իր կարգին կնձիթը՝ սուր խայթոցը մարդուն մորթէն ներս թափանցեց, արիւնին քաղցրութենէն զգլխաց՝ անմիջապէս որոշումը տուաւ մարդկային արեան վրայ, ալ անկէ աւելի քաղցր բան չէր կարելի գտնալ, նոյնիսկ երևակայել: Իր այս որաշման իբր ապացոյց լեզուն արիւնով ներկեց և իսկոյն ճամբայ ելաւ դէպի օձը, որ իրեն կը սպասէր:

Բզէզն իր ընտրութեան մէջ չէր սխալած, և անշուշտ օձն ալ պիտի գնահատէր իր ճաշակին փափկութիւնը եթէ... ահա այս «եթէ»ն է, որ այսպիսի նեղ պարագաներու մէջ երևան կը հանէ «նախախնամութեան» մատը, և ճակատագիրներ կը փոխուին:

Բզէզը իր պաշտօնին բերմամբ պիտի մատնէր մարդը... եթէ նոյն պահուն նախախնամութիւնը ծիծեռնակ մը չը հանէր անոր դէմ:

Երբ ծիծեռնակը հարց ու փորձ ըրաւ, բզէզը յայտնեց իր պաշտօնը ու մանրամասնօրէն պատմեց եղելութիւնը՝ միևնոյն ժամանակ ցոյց տալով իր լեզուն. ծիծեռնակը սարսռաց. խնդիրը անմիջապէս ըմբռնեց ամէն կողմերովը. ուստի չհաւատալ ձևացընելով՝ աղաչեց բզէզին, որ թոյլ տայր իրեն քչիկ մը լիզել իր արինամուխ լեզուն և ըստ այնմ գնահատել իր ճաշակին փափկութիւնը: Բզէզը հաւանեցաւ և լեզուն երկարելն ու ծիծեռնակին ալ զայն խաճնել-փրցնելը վայրկեանի մը գործ եղան:

Բզէզը լեզուն կորսնցուցած էր. ծիծեռնակը յաղթահարած էր. խնդիրը վերջացած էր:

Ծիծեռնակը իր դերը յաջողապէս կատարած ըլլալով՝ թռավ գնաց:

Իսկ բզէզը. ինչ ընէր, ինչ ըսէր, ալ լեզու չունէր, խուլ բզզիւնէ մը զատ ձայն չէր կարող հանել. այլ սակայն պետք էր երթալ, պետք էր եղելութիւնը իմաց տալ: Բզէզը յուսախաբութեան վրայ ցավէր՝ թէ լեզուին վրայ. ցմիշտ համր պիտի մնար:

Օձը, խորամանկ սողունը, շուտով կռահեց եղելութիւնը, բայց ինչ օգուտ, եղածը եղած էր: Ահա այն օրէն խուլ պայքար մը սկսաւ մարդուն ու ծիծեռնակներուն դէմ: Ծիծեռնակը միշտ կ'ապաստանի մարդուն՝ բոյնը շինելով տուներու մէջ և տանիքներու քիւերուն տակ, միշտ մարդու հսկողութեան ներքև, և այսպէս՝ մարդը իր արեան գինն եղող երախտագիտութիւնն կը յայտնէ գարնան սիրուն թռչնակին:

Արսլան 1900, № 23, 347-349:

Ջ. Լվերու և ոջիւներու սկզբնապատճառը:

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Ջավախքում:

Բանասաց՝ անհայտ:

Աստծու հրամանով օր Նոյը տապանը մտնի կը՝ մե քանիմ օրեն մե տեղմ ծակի՝ ջուրը նես լցվի կը: Նոյը ինչով կալնե չի ըլլի, կենսա ջուրը քանդե նես լցվի կը: Օձը դառնա ատոր կսե կը թը՝ ադատ չէ դու չես կրնը ատ ծակը կալնե. ինչ կուտաս օր ես կալնեմ: Նոյը թը՝ ինչ կուգես: Ակյար կալնեցի, – կըսե կը օձը, – թող օր ջանես քիչմ արուն խմեմ: Նոյի հոգուն էր հասե, տեսնի կօր չի ըլլի, օձը գուլուլի բաթաթ կըռոի կու, կալնե կը ծակը: Քանիմ օրեն հետև՝ ջուրն օր քիչմ կիջնի, օձը գելլե ծակեն, կերթա կը Նոյի քովը, կըսե. Տեսար, ծակը կալնեցի, տը թող օր ջանես արուն խմեմ: Լավ, – կըսե Նոյ նահապետը, – քիչմ կեցի: Աս կըսե կու, կերթա մե դոճա կրակմ վառե կը, բռնե աս օձին ցկե կը բոցերուն մեջը: Օձը վառի, մոխիր կռոի կը: Մոխիր օր կռոի կը, Նոյ նահապետը մոխիրը լըլե կը բուռը, փչե կու, կըսե. Տիա արունս խմել կուգեիր՝ լու դառի, խմե: Օսահաթ ատ մոխիրեն պըզտի-պըզտի կարմիր ճիճուներ գլլին, լցվին կը Նոյի վրա: Լալայեան 1892, 48:

Ձ 2.

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Վարանդայում (այժմ՝ Ֆիզուլի):
Բանասաց՝ անհայտ:

Մուկը ապաստան գտնելով Նոյի տապանում, կրծեց և ծակեց տապանը: Ջուրը սկսեց ներս լցուել: Նոյ այս տեսնելով՝ բարկացավ մկի վրայ, որ գնաց մի անկիւնում թաք կացավ: Յետոյ Նոյ առաջարկեց կենդանիներին, որ փակեն ծակը, սակայն ոչ ոք չկարողացավ: Վերջապէս օձը ոլորուելով տարածուեց ծակի վրայ և ծածկեց այն: Երբ ջրհեղեղը անցավ, Նոյ առաջարկեց օձին վարձատրութիւն խնդրել մատուցած ծառայութեան համար և սա հանելով իւր լեզուն, մարդու արիւնն ուզեց: Այդ ժամանակ ծիծեռնակը, որ Նոյի ոտի վրայ նստած էր, յարձակուեց և օձի լեզուն կծեց: Եւ այս է պատճառը, որ դեռ այժմս էլ օձի լեզուն միջից կտրուած է: Օձն էլ իսկոյն յարձակուեց ծիծեռնակի վրայ, սակայն կարողացավ միայն նրա պոչից կծել: Ուստի և՛ նրա պոչը երկուսի բաժանվեց: Օձի խայթած տեղից երկու կաթ արիւն ընկավ, մինը Նոյի վրայ, որ անմիջապէս ոջիլի փոխարկուեց, միւսն էլ գետին, որ լու դառձաւ և թռաւ:

Լալայեան 1897, 205-206:

Ձ 3.

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, վայրն անհայտ է:
Բանասաց՝ անհայտ:

Ջրհեղեղի ժամանակ՝ երբ տապանը ջուրերու վրայ կը տատանէր, յանկարծ, չեմ գիտեր ինչպէս, տապանին ձեղունին վրայ փոքրիկ ծակ մը կը բացուի, ուսկից ջուրը ներս խուժելով՝ տապանը կ'ողողէ:

Նոյ տեսնելով զայս և վախնալով թէ մի գուցէ տապանը ջրով լեցուելով ընկղմի և զինքն վտանգէ, կը սկսի այդ ծակը գոցելու հնարք մը խորհիլ: Երկար խորհելէ վերջ, չկրնալով զայն գոցելու կերպ մը գտնել, և յուսահատութենէն մտատանջ և խելացնոր՝ տապանին մէջ ասդին անդին պտղտելու ժամանակ, օձը ներկայանալով կը յանդիմանէ զանի, և կը յայտնէ թէ մեծ ամօթ է իրեն – Աստուծոյ պատկերի նման ստեղծուածի մը – այնչափ մտատանջուիլ այդպիսի չնչին բանի մը համար, մինչդեռ ինքն իսկ կրնար զայն գոցելու հնարք մը գտնել, եթէ իրեն օրական մարդ մը տար ուտելու համար: Նոյ թէպէտս ի սկզբան չի հաւանիր այս պայմանին,

սակայն վտանգը մօտալուտ զգալով՝ վերջապէս կը խոստանայ իր ուզածը կատարել ջրհեղեղէն վերջը՝ եթէ օձը կարենար այդ ծակը գոցել: Այն ատեն օձը գալարուելով ծակին վրայ՝ կ'արգիլէ ջուրը ներս մտնելէ, և հոն կը մնայ մինչև որ ջրհեղեղը կը դադրի:

Ջրհեղեղէն ետքը, երբ Նոյ և իրեն հետ գտնուողները տապանէն դուրս կ'ելլեն՝ օձը կը յիշեցնէ Նոյին՝ ուտելու համար իրեն տապանին մէջ խոստացած օրական մէյմէկ մարդը: Բայց Նոյ կը յայտնէ օձին թէ այդ խոստումն ուրիշ տեղ մը չէր կրնար կատարել, բայց եթէ բաց դաշտի վրայ: Նոյ և օձը կ'ելլեն միասին դաշտը կ'երթան: Նոյ հոն մեծ կրակ մը կը պատրաստէ, և երբ օձը կը կրկնէ դարձեալ իր պահանջը, այն ատեն Նոյ բռնելով օձին պոչէն՝ կրակին մէջ կը նետէ ուր ճարճատելով կ'այրի և բոլորովին մոխիր կը դառնայ և այրելու ժամանակ ծուխը լուերու և մոխիրն ալ ոջիլներու կը փոխուի:

Ահա այսպէս օձը թէպէտև կը յաղթուի իր կենդանութեան ժամանակ, մահուանէ ետք՝ [կյաղթի] ուտելով մինչև զարդ օրական ոչ թէ մէկ մարդ միայն, այլ միլիոնաւոր մարդիկ միանգամայն:

Սինանեան Յ. Կ. 1899, № 24, էջ 375:

Ձ4. Նոյ նավապետն ու Օձը:

Գրառվել է՝ 20-րդ դ. երկրորդ կես, Ախալքալաքի շրջ. Բուռնաշէթ գ. (այժմ՝ Զավախք):

Բանասաց՝ Շուշանիկ Մուրադյան (ծնվ. Բուռնաշէթ գ., 1906 թ.):

Մե սաղ տարիմ թոն կէնէ: Նոյ նավապետը սաղ կենդանիներուն լցնէ կը պարախտոր ու կայնի կը: Սաղ էրկիրը ջրով էր ծածկվէ: Նոյ նավապետը պարախտորով պտտի կը, տեսնի կը օր ջուրը ամեն տեղ մեհավասար է: Մուկը պարախտոր ծակէ կը: Նոյ նավապետը շատ տխրի կը, հնարմ չի գտնի, օր ծակը փակէ: Օձը քուքա, կսէ.

– Ինձի ինսնի արնով կշտացու, ես էտ ծակը փակեմ կը:

Նոյ նավապետը կսէ.

– Էլնենք չորը ես քեզի կշտացնեմ կը, հիմի դու ծակը փակէ:

Օձը ծալլըվավ նստավ, պոչը կոխեց ծակը, փակեց: Սաղ աշխարը պտտան, ջուրը մեհավասար առել էր, հիմի ո՛ր տի էրթան, օր չոր գտնին: Գնացին էլան Սիս:

– Սիս, կառննս գիս:

– Ո՛չ, – ըսավ Սիս, – Մասիսը բարձր է ինձանից:

(Սիսու ճիտը ծուռ է, էտտեղ գլխս է իջուցե): Էլան Մասիսու գլխը, քիչըմ էլի չոր էր: Վեց ամիս էտտեղ կեցան, տորի ջրերը քաշվան, աշխարի շատ տեղը ջուր մնաց, քիչ տեղը՝ չոր: Ժողովրդին էտտեղ բաց թողեց.

– Քնացե՛ք, հրճվեցե՛ք, աշխար կազմեցե՛ք, – ըսավ Նոյ նավապետը:

Օձը էկավ, ըսավ.

– Ինձի ինսնի արնով կշտացու:

Նոյ նավապետը վետոան նըվթ փերեց, լցեց վրան, վառեց ու ըսավ.

– Քամի՛, ուժեղ փչե, օսկոռը լու ըլի, միսը՝ օջիլ, տարածվի կենդանիներուն վրան, ես իտր իշկանն արուն տամ, օր կշտանա:

Օձը տառցավ լու ու օջիլ, տարածվավ կենդանիներուն վրա ու սկսեց ծծել էնոնց արունը:

Վարդանյան 2003, 38:

Է1. [Աղավնի և ագռավ]:

Գրառվել է՝ 2012 թ., Հրազդանի շրջ. Մեղրաձոր գ. (Կոտայքի մարզ):

Բանասաց՝ Թամար Հակոբյան (ծնվ. Մեղրաձոր, 1926 թ.):

Էդ ամեն պաղմուտունը մեր պապերիցը...

Աստված Նոհին ճամփա ցույց տվեց...

Էն կողմերը որ ջրհեղեղ էր էլնում, էս սարերը ծածկում էր: Նոհան վերցնում է, ասում է.

– Աստված, ասում է, ո՞նց կըլնի սենց: Ելած մատաղ սերունդը – ջրհեղեղ ըլնում, ջրի խեղ լողանում-էտում է:

Ասում է.

– Ըտենձ էլ պիտի ըլնի:

Ասում է.

– Ինչի՛:

Ասում է.

– Ժողովուրտը մեղավորձեր է: Պըտի վերանա:

Ասում է.

– Նոհա՛, հըմի ես քեզի հրաման եմ տալում: ... Ժամանակ եմ տալըմ քեզի. էրկու հատ աղունակ՝ մ՛էգ մե որձ, էրկու հատ կառղան՝ մ՛էգ մե որձ, ամմեկ թռչունից մե էգ, մե որձ կվերձընես: Նոհա՛,

գամին կշիկես: Ինչ որ քո ընդանին է, էտքանի տեղ: Էլ հուրիշ ոչ մի բան չեմ ասըմ: Ինչ գայ հրաման կուդամ, ասեմ – Կիրակի գիշերը ջրհեղեղը բանծրնում է – պիտի դու բանծրնաս Նոհա գամին, գնաս Նոհա սարը:

Ասըմ.

– Ո՞նց կըլնի, Տեր իմ Աստված:

Ասում է.

– Կըլնի:

Նոհա գամին շիկըմ է:

– Էդ ի՞նչ ես անըմ: Նոհա՛, էդ ի՞նչ գամի ես շիկըմ:

Ասում է.

– Աստծու հրամանով շիկում եմ, որ էս ընտանիկով պիդի բանծրնամ – միամիտ մարդ իլեր ի – Նոհա սարըն, ջրհեղեղ է էլնում:

Տալըմ են, ծըծաղում են, ծաղր են անըմ, թե.

– Պըդի էտի դու ըստից էլիս, մենք պըդի ժողովուրտով խեղտըվինք, դու պրծընիս:

Ետում են ինադու – մեղայն Աստծու – քաքում են Նոհա գամու մեջը: Քաքում են, լավուտուն էլ չարի՞ն Աստծու հրամանը, որ պըդի տա:

Նոհան ասում.

– Տեր իմ Աստված, էս ի՞նչ արիր:

Ասում է.

– Ի՞նձ էլավ, Նոհա:

Ասում է.

– Ընենց է կեղտոտաձ գամին լցաձ, տեղ–իլլաջ չկա, բա ես ի՞նչ անեմ, ո՞նց անեմ:

Ասում է.

– Ըդուն էլ հնար կա, մի՛ վախեցի:

– Ի՞նչ հնար:

Ասում.

– Ընենց կանեմ, որ իրանք կլվան, էդ Նոհա գալու ջուրը կխամեն: Գըռը թապում է շատվա մըձի ժողովուրտի վըրեն: Ընենձ են գըռի մըձին կորըմ, արնի, թարախի մըձին կորըմ են, ճար ու իլլաձ չկա:

Մի օր մի էրեխա է էտըմ, պուպուգում էդ Նոհա գամու միձին՝ կեղտոտե, գլորում, ընգնում քաքի մեձը: Գլորում, ընգնում քաքի մեձը, հըլնում տեսնում՝ ինձոր օձը շապիկը թողե, վրի էդ ամբողջ

վերք, էն արունը, թառ-թամզնում, էլի նորմալ իր մարմինը: Էլնում հավարը գցում, ասում.

- Ժողովուրդ, փրկություն ելե, փրկություն հասե՛ք, ըսենց բան ելե:

Ժողովուրտը թափում է մանդր ու բետ, ջուրը բերում են, լվում են, լծում են, լողնում են ու քսում են իրանձը:

Ասում է.

- Հա՛, Նոհա՛, գամին մաքրե՛ծի՛ն:

Ասում է.

- Տե՛ր իմ Աստված, հա՛:

- Դե, ասում է, լսի՛, էսօր գիշերան էս ժամին սելավն ըլնեմ, ծածկեմ:

Նոհա գամին նստում ու ըլնում է...

Ախր գնածին մեր ժողովուրդը իրեք-չորս հոգի, գնածին, հասցրին Նոհա գամին տեսան ու իճան...

Էդի բանձրնում, ըլնըմ, ծածկում դար ու դաշտը:

Ինչ իմանա – Արարատա լանջին Նոհա գամին իճուկ, ինկ մըճին: Ասում է.

- Բա ի՛նչ անեմ, ո՛նց անեմ, որ իմանամ, աշխարկը մակրվա՛մվ, հողը մակրվա՛մվ, որ մենկ իճնինք մեր աշխարկը:

Հըլնըմ է, արդեն ըզկըմ է, որ էսի ապրել ամիսն է, էրկու թռչունին թողում, աղունակներին թողում է, ասում է.

- Գնացե՛ք Հայաստան, տեսե՛ք տեղի՛ն է, կանաչն էլե՛ր է, դար ու դաշտը մաքու՛ր է, մեզի խաբար պերեք:

Դե աղունակին ի՛նչ կա, լեզու՛ կա, որ գա հայդնե: Էրկու աղունակը թողում է: Աղունակները գալում են տենում են դար ու դաշտը կանանչ, հարթ, դուրան, յմ, դառղառն էլ նկադում է որ աղունակը պըդի խաբար տաներ Նոհա գամու Նոհային, որ աշխարկը շեն է, թոնի գա, ասում է «ի՛նչ անենք, ի՛նչ չանենք», էն մի դառեն մեկին ասում է.

- Հավս տո՛ւր, թող աղունակը լեզուն հանե, լեզուն կտրե՛, կտրեքցե՛:

Ասում է.

- Ո՞նց պդի ըլի:

Ասում է.

- Ըտենց: Դու արա, ես կանեմ:

Աղունակին ասում է.

– Էտում ես երգի՞րըն:

Ասում է.

– Հա՛:

Ասում է.

– Դե՛ քե՛ լեզուդ հան՛, համբուրեմ, պաչեմ, մեզնից էլ բարև կտանես երգրի յաները:

Աղունակը լեզուն հանում, հասնում դռանը կռպուլում, կտրում է: Որ կտրում, խեղճ աղունակը մնում է անլեզու, ի՛նձ անե: Ի՛նձ անե, ի՛նձ չանե, էլ ճար չէ գդնըմ, էտըմ, կտըցով պժգըմ–պժգըմ կանանչը դնում լիզվի ծերին, բռնում էտըմ է: Տանում հասցնում է Նոհայե, որ արտեն կանանչ են դար ու դաշտը:

– Վա՛յ, ասում է, դառդի սենծը–նենծը:

Սիմոնյան (դաշտ.) 2012, 51–59 րր.:

Է2.

Գրառվել է՝ 2016 թ., Մարտունու շրջ. Լիճք գ. (Գեղարքունիքի մարզ):

Բանասաց՝ Վաչագան Սարգսյան (ծնվ. Լիճք, 1953 թ.):

Աստված Նոյին հրաման կիտա՝ տապան շինա: Նոյ կըսա՝ ես չեմ կրա: Աստված կըսա՝ շինա, ով կենթարկվի՝ կենթարկվի, ով չէ՝ չէ: Հետդ գույգ թռչուններ, սողուններ, գազաններ վերցրա՝ էգ ու որձ: Եթե քո ընտանիք քեզ համ չընգնի, դու նրան էլ կարաս չվերցնես: Օր վախտ գա, դուռն փակա, անցքերը ծեփի, նստի մեջ, քո պաշար վերցրա հետդ: Ով կենթարկվի՝ կգա, ով չէ՝ չէ: Երկու տղեն ու հարսը տեղ կոփվ կենեն, օր էրեխեն օրորոցով կորե՝ Նոյան տապանից իջնելուց էրեխեն օրորոցով կանհայտանա: Հըմի Մասսի վրեն տարին մի անգամ լույս ա կիջնի էդ օրորոցի վրա: Նոյ ձեռն կհանա էդ անցքից, տեսնա անձրև կիգամ: Արև օր կխփա, կտեսնա օր էսի տաքա, արդեն քառասուն օր լռացե: Կըսա՝ հլա թող էդ անիրավ ագռավին թողիմ: Թողա, կըսա՝ գնա, երկիր ման արի, տես, ջրհեղեղը նստե, ինչ է եղե, հետ արի: Նոյն ըդոնց լեզուն իմացե, հասկցե: Ագռավ գնաց՝ չկա, ընգած իրա լեշերով: Աղունիկին բաց կթողա: Կըսա՝ հլա գնա տես, քոռ անիրավ ի՛նչ էղավ: Նոյն ագռավին անիծեր ա. «Ուտիս–չուտիս՝ չկշտանաս, միշտ հպարտ ման գաս»: Դրա համար են ասում՝ ինչի՞ ես կեղտ ուտում, ասում ա՝ նա՛ճար իմ, բա ինչի՞ ա կշորորաս, կըսա՝ հպարտիմ: Ագռավ տենց գոռոզ կենդանի ա, 300 տարի էլ կապրի: Աղունիկին ա բաց կթողա,

կըսա՝ բարի կենդանի, գնա՛, տես ի՞նչ էղավ: Աղունիկ կերթա, կըսա՛ անիրավ, մեր տերն քեզ ուղարկեց, դու էկել ես, ընգե էս ջանդակներ՝ աչքերը կհանիս կուտիս: Ագռավ կըսա՛ տէս, ինչ լավ կանաչ էլե, բերանդ բաց՝ կանաչ դնեմ: Աղունիկ բերան կբանա, ագռավն աղունիկի լիզուն կեսից կկտրա: Դրա համար աղունիկ ջուր խմելուց վերև չնայա՛ Աստծուց խոռված կենդանի ա, դրա համար նշանակած ա եկեղեցական թռչուն: Աղունիկ էլ չի կարա խոսա, կքաղա կանաչ-կարմիր կտուցին ու կիգա: Աղունիկի գալով՝ Նոյն կիջնա Արարատյան դաշտավայր ու կտնգա ծիրան, խաղող ու ցորեն:

Նոյան տապանի կողեր էղել ա քարեր կախած, որ տապանը նավի նման շորորա ալիքներին: Էդ քարերը հըմի շարան Մասսի դոշն ա, որ ցցվուկ ա, ոնց որ հուշարձաններ: Տեսնողները զարմացած՝ էսի ի՞նչ ա: Էդի [տապանի] կողերից պոկվե, ճղթե հանե ընդեղ: Հըմի ցցված են էտի: Դրա հայի ապացույցը ըղեղից ա՛ Նոյան տապանի:

Սիմոնյան և այլք (դաշտ.) 2016, 1Ժ. 16ր-1Ժ. 20ր.:

Ը. Աղավնի:

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Բուլանըխում (այժմ՝ Թուրքիայի Մուշի իլի Բուլանիկ շրջան):

Բանասաց՝ անհայտ:

Աղանին նորա համար չէ կարող երգել միւս թռչնոց նման, որ երբ Նոյ դրկեց ագռաւի յետևից շիւղ բերելու, ագռաւը նախանձելով խաբէութեամբ նորա լեզուի ծայրը կը կտրէ և կը մնայ այնպէս համր:

Բենսէ 1900, 43:

Թ. Նոյի ագռավի պես ոչ հա՛ խաբարն եկավ ոչ՝ չէ՛:

Գրառվել է՝ 20-րդ դ. 50-60-ական թթ., Աշտարակի շրջ. Աշտարակ ք. (այժմ՝ Արագածոտնի մարզ):

Բանասաց՝ անհայտ:

Մեր նահապետ Նոյը, որ ջրհեղեղը դադարեց, մի քանի օրից ետը՝ ագռավին բաց թողաց, որ սա էթա իմանա աշխարքի երեսին ջուր ցամաքէ՛լ ա, թե չէ: Ագռավը թռավ գնաց: Նոյը մնաց մտիկ անելով, աչք ճամփին ջուր կտրեց: Հըլա ագռավը չկա: Տեսավ, որ

շատ եղացավ: Հէքսի օրը աղավնուն բաց թողաց: Աղավնին ձիթե-
նու ճյուղը ձեռաց ետ դառավ, Նոյին խեր-խաբար բերեց, համա
ագռավը ջանդաքով ընկավ: Ոչ «հա՛» խաբարն եկավ, ոչ «չէ՛»:
Նազարյան [1950-60-ական թ.] (դաշտ.), 290:

Ժ. Ճնճուղ:

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Բուլանըխում (այժմ՝ Թուրքիայի Մուշի իլի Բուլանիկ
շրջան):
Բանասաց՝ անհայտ:

Նոյ կենդանիները Տապանի մէջ առած ժամանակ, բոլորի ոտ-
քերը կապած էր. ջրհեղեղից յետոյ երբ մէկ մէկ արձակելով դուրս
կը թողէր՝ ճնճուղը չհամբերելով կապած ոտքերով դուրս թռավ և
մնաց այնպէս միշտ ոստոստող:

Բենսէ 1900, 43:

ԴՐՎԱԳ VI

ՏՈՆԵՐ ԵՎ ԱՄՍԱՆՈՒՆՆԵՐ

Ա. Ծաղկազարդ

Գրառվել է՝ 1989 թ. Երևանի Նոր Մալաթիա թաղամասում:

Բանասաց՝ Մարիամ Բաղդիշյան (ծնվ. Մուսա լեռ, 1909 թ.):

Յեփրը մարթաքը շուտ քօթո՞ւ գըննօն, ասդու՞ճ գընէխէկանու, գուզի բադժա: Ան Նօյ նահաբէդան գօսէ – Տօն աղվուր մծրթ իս, օն քէ մալ-դօվլուր, շինա՞ մէ դաբան, մտա՞ միչը. ալամէն ճըրհէղէղ բըր ուդօմ:

Ճըրհէղէղը գուբաշլիյա. քառսօն ուր, քառսօն իրգօն անծրիվ գուկօ: Ալայ աշխուրը ձուվ գըննօ: Մարթաքը գուխեղդըվան...

Նօյը գըղուրգա մէ դարդա, քի խաբուր պիրա: Ան յիդ չիկօ: Նօյը գօսէ. – Վէլ հասըլ, լաշիր շուդ կըդուվ ուդիլա համուր:

Սօնրա Նօյը մէյ ձիձեռնօյ մը գուղրգա: Ան գուրթօ գէյթունը դիրիվ մը գուպիրա:

Նօյը գօսէ. – Վէլ հասըլ, աշխուրը չօրցիլ ի, ձառիրն այլէ դիրիվ դվիլ ին: Գուպանա դաբանէն տօռը, տուս կուգօ՝ դօվլալթ-անասունն այլէ:

Ադուր համուր գէյթունը դիրիվնիր ին փռիլ, քի Քրիստիսը քալա: Տահ համօ է Ձաղգարթարէն ուրը գէյթունը օրհնվում դիրիվնիր կուպաժնին կէղիցէն միչը, քի մարթաքը աղվըրթէն էնէն, աշխուրէն ալէ խաղաղութէն ըննօ:

Սվազյան 1994, 8 (57), 74:

Թարգմանություն

Երբ մարդիկ շատ չար էին դարձել, Աստված բարկացավ, ուզեց պատժել: Նա Նոյ նահապետին ասաց.

– Դու լավ մարդ ես, վերցրո՞ւ քո ունեցվածքն ու ընտանիքը, կառուցիր մի տապան, մտիր մեջը, բոլորին ջրհեղեղ եմ տալու:

Ջրհեղեղն սկսվում է՝ քառասուն օր ու քառասուն գիշեր անձրև է գալիս: Ամբողջ աշխարհը ծով է լինում: Մարդիկ խեղդվում են...

Նոյն ուղարկում է մի ագռավ, որ լուր բերի: Նա ետ չի գալիս: Նոյն ասում է.

– Երևի շատ դիակներ գտավ ուտելու:

Հետո Նոյը մի ծիծեռնակ է ուղարկում: Նա գնում է, ձիթենու մի տերև բերում:

Նոյն ասում է.

– Արդեն ջրերը ցամաքել են: Ծառերն էլ տերևակալել են, – բաց է անում տապանի դուռը, դուրս է գալիս, ունեցվածքն ու ընտանիքը ևս:

Դրա համար ձիթենու տերևներ են փռել, որ Քրիստոս քայլի: Մինչև հիմա էլ Ծաղկազարդի օրը ձիթենու օրհնված տերևներ են բաժանում եկեղեցու մեջ, որ մարդիկ իրար լավություն անեն, աշխարհին էլ խաղաղություն լինի:

Բ1. Նավասարդ և Վարդավառ:

Գրառվել է՝ 20-րդ դ. առաջին կես, Մալաթիայում (այժմ՝ Թուրքիայի Մալաթյա ք.): Բանասաց՝ անհայտ:

Կը պատմուի թէ Նոյ Նահապետ, ջրհեղեղը դադրելուն պէս՝ տապանէն ելլելով՝ իր հետ եղողներուն երեսը ջուր կը սրսկէ, որ չմոռնան տիեզերաց արարչին ամենակարող զօրութիւնը և աշխարհակործան պատիժը (ջրհեղեղը) և աղավնի թոցնել կու տայ իր զաւակներուն, որոնք ջուրի սրսկումն ու աղանիի թռուցումը կը կատարեն և կ'աւանդեն իրենց ապագայ սերունդին ալ ի գործածութիւն:

Ալպոյաճեան 1961, 1143:

Բ2.

Գրառվել է՝ 20-րդ դ. առաջին կես, Ներքին Բասենում (այժմ՝ Թուրքիայի Էրզուրում իլի (վիլայեթ) Փասինլեր շրջան):

Բանասաց՝ անհայտ:

Երբ Նոյ նահապետը դուրս եկավ տապանից, առաջին ամիսը կոչեց Նավասարդ, որ նշանակում է նորոգված աշխարհ: Ջրհեղեղից ազատվելու հիշատակը անմոռաց դարձնելու նպատակով Նոյը առաջարկեց իր տղաներին ջուր լցնել իր վրա: Ահա ջրի այդ պատամունքն է, որ առաջին հերթին աչքի է ընկնում Վարդավառի տունին:

Հակոբյան 1974, 242–243:

Գ. Խաղողօրհներ:

Գրառվել է՝ 20-րդ դ. առաջին կես, Ղարադաղում (պատմական Պարսպատունիք, այժմ՝ Իրանի Արևելյան Ազարբայջան օստանի Արասբարանի շրջ.):
Բանասաց՝ անհայտ:

Երբ Նոյը աղավնուն ուղարկում է տեղեկություն բերելու, աղավնին հանդիպում է Քրիստոսին: Քրիստոսը մի ճութ խաղող է տալիս աղավնուն, օրհնում այն, հետո մի բաժակ գինի է վերցնում, խփում խաղողի ռիսկույզին ու ասում. «Տար, տուր Նոյին, որ գինին իմ արյունն է, խաղողը իմ մարմինը, թող հավատա ու վախի ոչ մի նշույլ չունենա, թող հավատա ու տապանից դուրս գա, իջնի երկիր»:

Դրա համար էլ քրիստոնյա մարդը չպետք է խաղող ուտի մինչև Խաղողօրհների տոնը, որպես Քրիստոսի օրհնած պտուղ: Այդ օրը խաղողը եկեղեցի էին տանում, օրհնում ու պատարագից հետո բաժանում:

Հովսեփյան 2009, 421:

Դ. Չորս ամսանուններ:

Գրառվել է՝ 1975 թ. Մարտունու շրջ. Մարտունի ք. (այժմ՝ Գեղարքունիքի մարզ):
Բանասաց՝ Գեղամ Ավետիսյան («Ավելի Գեղամ», ծնվ. Մարտունի, 1884 թ., ծնդ. Ալաշկերտ):

Ամսանուններից չորսը՝ սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր, ինչպես և մյուսները, հայտնի է, որ հռոմեական ծագում ունեն: Սակայն Մարտունի քաղաքի բնակիչ Ավելի Գեղամը ծիծաղում է այս «միամտության» վրա:

– Տղա, հորի՛ հուսում առած մարդը էդմալ հասարակ բաներ չգինա: Ձեր պրոֆեսորներ լի՛ էդմալ կըսեն: Չէ, բալա, էդմալ բան չկա ու չեղի: Էդոնք հայերեն են, հայերն են էդոնց անուններ դրե: Դե լսա ըսեմ. Սեքտեմ–Բեր, Հեքտեմ–Բեր, Նոյեմ–Բեր, Դեկտեմ–Բեր՝ էդոնք Նոյ նահապետի էրեխեք էգեր են: Որ Աստված կուզա ջրհեղեղ էնել, Նոյ տապան կշինա: Տապան մեծ լողկա ա: Էդ վախտ կսկսա անձրև կաթալ: Էդի ջրհեղեղի նշան կեղի, Նոյ գիմնա: Էրեխեքանց կվռազցնա, կըսա՝ Սեքտո, բեր, Հոկտո, բեր, Նոյեմ, բեր, Դեկտո, բեր, շուտ էրեք՝ բերեք նավ լցեք, հիմի ջուր կբանցրնա: Էդորեն է, որ էդ չորս ամիսներու վերջը «բեր» է: Կբերեն, նավ կլցեն, ջուր կբանցրնա, նավ 40 օր կտանա, Մասիսի վրեն կկայնի: Ջուր աշխար

կծածկա, հմա Մասիս չի կոնա ծածկա, ծեր կերևա, էստեղ կհիճնեն, գիկան ցած: Դու բերե, կըսես Հոռմից են: Էն վախտ Հոռմ չեղե: Էղեր ա իրեք քաղաք՝ Նազարեթ, Սոդոմ ու Գոմոր: Նազարեթ մնացեր ա ջրի տակ, Սոդոմ ու Գոմոր քաղաքներ Աստված քրջութ լցեր ա՝ վաներ ա: Էս քաղաքներ հեղո շիներ են:

Էդորեն հետո ամիսների վրա դրեր են էդոնց անուններ: Բերքը բեր, բաղունը բեր, փեղը բեր՝ բակ դարսա, դարման բեր՝ մարաք լցրու, դու էլ մտի տուն, քո տավար-մալ պահա չուր գարուն: Օջխար կթելու վախտ էլ կըսեն «բեր»՝ բեր կթեն:

Ստեփանյան (դաշտ.) 1975, 13:

ԴՐՎԱԳ VII

ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԷԱԿՆԵՐ

Ա. Փերիներ:

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Ջավախքում:
Բանասաց՝ անհայտ:

Աստու հրամանով օր Նոյը տապանը մտաւ, Աստուած հրամայեց օր տապանի մէջը սուրբ մնան: Էղաւ օր Նոյի Քամ տղան սուրբ չմնաց, ատորէն էղան մէ տղամ՝ ու աղջիկն: Եփ օր ջուրը քաշուաւ, Աստուած տապանի դուռը բացեց, բիտտուն մէկ մէկ դուս էլան, հըմը ատ էրկու տղին ամօթներուն նետը թողին: Աստուած դուռը կայնած էր, հարցուց թը ալ մարդ չմնաց:

– Չիք, – ըսին:

– Թե կան, չիք դառնան, – ըսաց Աստուած:

Ան սհաթին ատ ախպարն ու քուրը աներևութացան: Ատ փերի ղզիներն օր կան հիմի ատոնց տղաքն են: Ատոնք իսկ մարդու պէս էն, հըմը ուզենան կէրենան, ուզենան չեն էրենայ:

Փերի ղզիներն բնակում են գետերի մէջ, որտեղից շատ անգամ դուրս են գալիս նստում գետի ափին, ժայռերի կամ մօտակայ մի աղբիւրի քարի վրայ և ոսկէ սանրով սանրում իրենց շէկիկ, մինչև ոտները հասնող մազերը: Սրանք շատ անգամ երևում են երիտասարդների և նրանց հետ սիրում: Մի քանիսն էլ կանացի հանդերձով գնում են գիւղ և առանց յայտնելու թէ փերի ղզի են, ապրում են մի երիտասարդի հետ, որից և ունենում են որդիներ:

Լալայեան 1896, 338:

Ա₂.

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Բուլանըխում (այժմ՝ Թուրքիայի Մուշի իլի Բուլանիկ շրջան):
Բանասաց՝ անհայտ:

Նոյն օր մտաւ տապան, ջրհեղեղի վախտ, Նոյայ տղէկներուց մէկն չկրցավ օր զինք զաւթէր, ելաւ ուր անկողին, աղջիկ մ'էղաւ ուրին: Ջրերն որ յիջան, Նոյն ու ուր ձժեր դուս պտի ելնեն, էն պս-

տիկ աղջիկ մնաց ներս: Հրեշտակն եկաւ հարցուց թէ. «Նոյ, էլ մարդ չմնաց ի ներս»: «Չէ՛, ըսեց Նոյ»: «Թէ մարդ մանցեր է, եղնի՛ աներևոյթ»: «Թ՛ըղ էղնի», ըսեց Նոյ ուր ահուն: Էն սհաթին աղջիկն եղաւ աներևոյթ փերի, հրնկաւ աշխարհք, քնու մէջ մօտեցաւ մարդկտոց հետ, զուր ցեղ շատցուց: Մարդ օր մկայ երազափորձ կէղնի, սաբարն ինչ է – էդ փերիքն են: Երազափորձ չլինելու համար գիշերը մաշուած աւել կղնեն բարձի տակ:

Բենսէ 1900, 11-12:

Բ. Շվոտ:

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, վայրն անհայտ է:
Բանասաց՝ անհայտ:

Քամ անհաւատարիմ գտնուելով Աստուծոյ կարգադրութեանը, տապանի սրբութիւնը չյարգելով մերձեցաւ իր կնոջ, որմէ ունեցաւ մի որդի: Անցաւ մի տարի, Աստուծոյ հրեշտակն տապանի դուռն բացաւ, ութ հոգին համարելով՝ դուրս հանեց, հարցուց Քամին.

- Ուրիշ մարդ կայ ներսը:
- Չկա, պատասխանեց ամօթահար Քամ:
- Եթէ կայ, չիք դառնայ, – ասաց հրեշտակն:

Նորածին մանուկը աներևոյթ ոգիի մը փոխուեցավ, օրըստօրէ զօրացավ, մարդկային սերունդին հետ ամուսնացավ, ունեցավ զաւակներ, որք ևս աներևոյթ ոգիներ են: Շուտոտներն շատ աճեցան, նոքա ծնունդ ունին, իսկ մահ չունին, վասն որոյ աշխարհի ամեն կողմ բռնածեն: ... Շուտոտ մեղաց պտուղ ա, սուրբ ամուսնութենէ ծնած չեն, որոյ համար ամեն չարութիւն ի գործ կըղնեն:

Հայկունի 1895, Զ, 210:

ԴՐՎԱԳ VIII

ԾԵՍԵՐ ԵՎ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Էջի գյուտը:

Գրառվել է՝ անհայտ:
Բանասաց՝ անհայտ:

Ջրհեղեղից պաշտպանվելու համար, երբ Նոյը Մասիս սարի գագաթից ցած իջավ, Նոյի առաջին գործը այգի տնկելը եղավ, որովհետև Նոյը գինու գործածությունը շատ էր սիրում:

Նոյի կենդանի մնացած էշը, գարնան սկիզբներին մի օր գոմից դուրս գալով, մտնում է այգին և խաղողի մատղաշ որթերի բույր ծայրերը անխնա կրծոտում է: Նոյը, իմանալով էջի վնասարարությունը, նրան խիստ պատժում է և գոմում, ամուր շղթայով կապելով, բանտարկում է:

Այդ տարին աշնանը Նոյի այգին սովորականից շատ առատ բերք է տալիս, Նոյն էլ բանիմաց մարդ լինելով՝ իսկույն գլխի է ընկնում, հասկանում է, որ այդ տարին իրա արտի պտղաբերության առատությունը էջի գարնան արածի հետևանքն էր: Իսկույն վազում է գոմը, համբուրում է էջի ճակատն ու աչքերը, ազատում է կապանքից և իբրև երախտագիտական վարձատրություն, էջին նշանակում է իրա ագարակի գյուղատնտեսական վարիչ:

Այդ դեպքից հետո խաղողի որթերի ծայրահատությունն ու ձկնահատությունը տարածվում է ամբողջ աշխարհում, որի սկզբնական հեղինակը էշն է հանդիսանում:

Այսպես է ասում ժողովրդական ավանդությունը:

Ժամկոչյան 2012, 181:

Բ. Այծերը:

Գրառվել է՝ 1957 թ. Իջևանի շրջ. Աջաջուր գ. (այժմ՝ Տավուշի մարզ):
Բանասաց՝ անհայտ:

Հիշում եմ Նոյի խաղողի վազը: Այծերը կրծեցին վազի բարունակները: Նոյը դառնացավ, անիծեց այծերին: Բայց կրծված բարունակները առատ բերք տվին ու կրկնակի փարթամացան:

Խանգաղյան 1981, 39:

Գ. Հերքես:

Գրառվել է՝ 20-րդ դ. 60-ական թ. Սիվրի-Հիսարում:
Բանասաց՝ Հակոբ Հակոբյան:

Չըրխեղեղէն սօնա Նոյ նահապետը տապանէն ըչած Այրարատին վօրխը: Տէսած քի ժողօվօրթը անօթի է՝ հաս, փէնիր չըքա, հրրաման տուրած մէքատ պարխի զէնէլ: Ատ պարխին զէնէլէն սօնա, էրկ-ըրէք ուլան մէջը, տա էփէն: Միսն ա կըտըխտէլէն վէրչը ըլլէ-ցունէլ կուտա խակկինի մէչը: Ասկըրած էն կըրակը շօղցունէլ: Միսը կօրկօտը առվակ մը էփէլէն սօնա ճահէլէրուն քըսէ.

– Հարէք սա:

Անքուսկնէ սօնա ատ ճաշին քըսէն՝ հէրըսէ:

Մկրտչյան 2006, 273:

Գ. Նորափեսայի օսկապի ծագումը:

Գրառվել է՝ 20-րդ դ. առաջին կես, Ղարադաղում (պատմական Պարսպատունիք, այժմ՝ Իրանի Արևելյան Ազարբայջան օստանի Արասբարանի շրջ.):
Բանասաց՝ անհայտ:

Երբ ջրհեղեղը վերջացալ ա, ջուրը քաշվալն ծովըր, աշխարքեն տափըր (գետինը), սարը բեցն դըռալ, կնէչալ, աստված Նոյեն ասալ ա.

– Նոյ, մհեգ իրավունքմ տալիս, որ քու տապանեն նանե դուս գյոս, ըշխարքեն երե գինս ապրս, ջրհեղեղը պրծած ա:

Նոյը աստուծեն ասալ ա.

– Իս վխիսմ, ալլա ջրհեղեղ կարս, հինչ որ առաջին ջրհեղեղուց փրկածմ, ազատած, կկոտորս, կմնամ մանակ:

Աստուծ ասալ ա.

– Նոյ, ուրթումնը (երդում) ուտիմ, որ ալ ջրհեղեղ արիչմ:

Նոյ ասալ ա.

– Տեր Աստված, քու ասած խոսկեն հի՛նչ նշանավ հվատամ:

Էտ վախտը աստուծ երգընքից ըշխարքեն երե կանէչկարմուր (ծիածան) ա կապալ, Նոյեն ասալ.

– Նոյ էս իմ կապած կնչկարմուրը իմ կերած ուրթումնեն վկա եմ թուղիս: Աշխարքը ջրիլու, ծառ, ծաղեգ, կանէչ պիլու հետե, շատ թոռ կգյոմ, գյուռչաթ (ամպրոպ) կարմ, վերջըր կնչկարմուրը կկապմ, որ դու վախս վէչ, գիտաս, որ իս իմ ուրթումնեն, խոսքես տարնմ: Ալ ոչ մի վախտ ջրհեղեղ արիչմ:

Նոյը հվտացալ ա Աստոծեն, դուս է եկալ իրան տապանիցը ը2-խարքեն իրսը:

Էմ օրից դեչանն աւ օր ալ, աստված տար ա կացած իրան ուրթումնեն: Հինչքան թոռ ա գյոլիս, գյուռչաթ ըրիլիս, սհաթտա նշանաց ա տալիս կնչկարմուրը, որ վախեք վեչ, ջրհեղեղ արիչմ:

Էտ օրեն նհետ, ադաթ ա դըռած, հու որ փսկվիս ա, իրան քավերեն նհետ կնչկարմուր օսկապ կապած, գինիս ա Աստուծեն տոնը, եգեղեցեն՝ սուրփի փասկի: Յանի թե քու ուրթումետ կնաչկարմուր նշանավը, գյոլիսնք քու տոնը՝ եգեղեցեն, ուրթումը ուտիս, որ մընք մըր փասկդիրման օրեն նհետ, դեչանը մըր մահ գիրեզմանը, հավատարիմ կմնանք քու անմեն, հավատքետ, սուրփի օրենքետ, եգեղեցուտ: Դու ար պարի ինս, սուրփի ձեռքտ, պարի ադոթքտ մըզ երե պահս, միշտ պարի աչքավ եշս մըզ, չարից, շառից, փորձանքից ալ հեռը պահս:

Ահա կնչկարմուր օսկապեն նաղլը:

Հովսեփյան (կազմ.) 2009, 318-319:

Ե. Ձիթենի:

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ Չմշկածագ գավառի Պարտիզակ գ. (այժմ՝ Թուրքիայի Թունջելի իլի Չեմիշգեզեկ շրջ.):

Բանասաց՝ անհայտ:

Կը պատմուի իբր թէ Նոյ նահապետէն Ձիթենին անիծուած է Քամայ սիրական պտուղն լինելուն համար, և սեցած է Քամայ պէս: Ըստ այսմ առասպելի Հայք պնդեն թէ Ձիթենի չկրնար բուսնիլ ի Մասիս:

Տէր-Մինաստան 1893, 153:

Զ. Աստծու արածը

Գրառվել է՝ 2017 թ. Գյումրու շրջ. Կապս գ. (Շիրակի մարզ):

Բանասաց՝ Գրիգոր Տեպոյան (ծնվ. Կապս գ., 1929 թ.):

Էն ժամանակ, որ Աստված բարկացալ, հըղեղ հանեց, որի ժամանակ [երկիր] կործանեց: Ըսալ, որ «Ես իմ ստեղծածս ժողովրդին չտեսնիմ»: Տեսալ Նոյին, ըսալ. «Քո հարսներուն, տղոնցդ, անասընթոններին բոլոր, սաղին փարախող սարքէ, լից մեջը»: Գ՛ելնես սաղին կհավաքես, տղոնցը մեկը ձեն հանում, կ'ըսես. «Աստված

ինկըն որ ըստում էր աշել ընձի, խապեց, էս բանը սարքեց, ինկը հեղեղովը ուրիշ բան է ընըմ»:

Պարախողը շատ երկար մնաց, ներես գը, աղչիկ ջան, փարախողի մեջը ժողովուրտը երթում-գալըմ գուգարան են էրթում: Հետև Աստված ժողովուրտին հիվընդություն գցավ՝ բորոտ, ըեպըցավ: Էս մեկը ձեռները – էտում-մտնում է գուգարան, կնում է, նա խաղուկաչում է: Ինչխոր մուդեղ են, կեղտոտել են, ըդման էլ ջուրը լցնում է էդ պարախողը լվանում, տանում քսում մարմնին, սաղ բուժվում են: Տեսմը Աստված ինչ էրավ:

Սիմոնյան և այլք (դաշտ.) 2017:

Է. Երկնքիցը քար ա կախ էլել, ով իրան չհավանի, գլխին կընկնի:

Գրառվել է՝ 20-րդ դ. 50-60-ական թթ., Աշտարակի շրջ. Աշտարակ ք. (այժմ՝ Արագածոտնի մարզ):

Բանասաց՝ անհայտ:

Նոյի որդիքը ջրհեղեղից հետո աճեցին, բազմացան, աշխարհում ինչքան ջին-ջանավար, օց ու կարիճ, դուրդ ու դուշ, գել ու գազան կար՝ Աստված թոփ արեց իր կուշտը, որ ով ինչ պակասություն ունի, ասի, որ ինքը դրստի: Ոչով իրա մեղքը, յա իրա պակասությունը շլինք չառավ. իսանը իրան հավանեց ու ջանավարին չհավանեց, օձն ու կարիճն իրանց հավանեցին, դուրդ ու դշին փնովեցին, քոմ-մեքն էլ իրանց գովացին, կողքինին փնովեցին:

Աստված էլ տեսավ, որ բանը ըսենց ա, երկնքիցը մի եքա քար կախ արեց, ասեց.

– Ով իրան չհավանի, թող էս քարը գլխին ընկնի:

Նազարյան [1950-60-ական թ.] (դաշտ.), 272:

ԴՐՎԱԳ IX ԽՐԱՏԱԿԱՆ

Ա. Արբեցողության վտանգները

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Նոր-Բայազետում (այժմ՝ Գավառ):
Բանասաց՝ անհայտ:

Ջրհեղեղից ազատուել է միայն Նոյը, և երբ տնկել է խաղողի որթը, նրա տակ երեք տեսակ կաթ է լցրել՝ մարդու, առիծի և շան: Այս պատճառով և գինի խմողը այս երեքից միայն առիծի, մարդու կամ շան բնատրություն է ստանում. – կամ կատաղում, կամ լուռ նստում և կամ շարունակ հաչում:

Լալայեան 1908, էջ 92-93:

Ա₂.

Գրառվել է՝ Քղիում, Ժամանակն անհայտ է:
Բանահավաք՝ Գրիգոր Կարախանյան:

Երբ Նոյ նահապետը իր տնկած խաղողի որթից գինի պատրաստելով՝ փորձում է համը, շատ խմելուց սաստիկ հարբում է: Կորցնելով իրեն, Նոյը մերկանդամ պատկում ու քնում է: Սեմն ու Քամը տեսնելով իրենց հորն այդ վիճակում, ծիծաղում և լուր են տալիս Հաբեթին: Սա ծածկում է Նոյի մերկ մարմինը, որպեսզի եղբայրները այլևս չծիծաղեն: Արթնանալուց հետո Նոյը անիծում է Սեմին ու Քամին, և օրհնում է Հաբեթին: Մի քանի օր անց, նա բարձրանում է Մասսի գագաթը և այնտեղից շնորհակալության զոհ մատուցում Աստծուն՝ ի պատիվ խաղողի որթի և գինու: Առաջին անգամ Նոյը զոհում է մի գառ, երկրորդ անգամ՝ մի կապիկ, իսկ երրորդ անգամ՝ մի խոզ: Երբ Հաբեթը հարցնում է հորը հիշյալ կենդանիների զոհաբերության պատճառը, Նոյը պատասխանում է. Առաջին գավաթը խմելիս մարդ գառան նման հանգիստ ու անմեղ վիճակի մեջ է լինում, երկրորդին՝ կապիկի նման զվարճաբան ու ծիծաղելի է դառնում, րրորդին՝ խոզի պես սկսում է թավալել տիղմերի մեջ... Այս ասելուց հետո, Նոյն ավելացնում է. Թող ձեզ խրատ լինի իմ օրինակը:

Ղանալանյան (կազմ.) 1969, № 789, Ժ, 336:

Ա3.

Գրառվել է՝ 1966 թ. Աշտարակի շրջ. Ոսկեվազ գ. (այժմ՝ Արագածոտնի մարզ):
Բանասաց՝ Միքայել Մանուկյան:

Նո՛վը ո՛ւր աղավնին կուղարկի տըսնի յերկիրը չորի թե չէ, էղու-
նիկյը մե կանաչ թուփ վերցնելի էլելի Մասիսի ծերը: Նո՛վը տըս-
նելի, վըեր յերգիրը չորի: Տապանեն տո՛ւսի կյա՛լի իջնելի տա՛ղտեր
տըսնելի մե խաղողի մծ՛վ՝ չխասած խաղողը վրա՛ն: Նո՛վը խաղող
չէր տըսի, մե գյիլա կռավ տրա՛վ պերանը, տըսավ տա՛ռնի, ասաց.
«Աստված, բա՛րտենց պտուղի ստեղծեն, էսպես թթո՛ւ տա՛ռ: Աստված
ասելի. «Մե խատ մատաղ արա՛ կքյաղցրացուցեմ, Նո՛վն էրթա՛լի,
մե բլբո՛ւլի մորթելի, մատաղ անելի: Մի՛նչև դեսուդեն էրթա՛լի ըղ-
կուզի խամը փոխելի, ամա էլի դժգոհելի: Ասելի. «Աստված, էլի լավ
չի»: Աստված ասելի. «Էլ մե պա՛նել մատաղ արա», էս անգամ էլ
էրթա՛լի ասլանի¹ մորթելի՝ մատաղի անելի, մի՛նչև հանգյ-հանգյը ա՛
նդա՛ր² ժամանակի ընցնելի, իկյա՛լի ըղկուզի մե ղոլա՛յ³ քյաղցրացե-
լի, ամա էլի դժգոհելի: Էս անքամ Աստված ասելի. «Մե պա՛նել մա-
տաղ արա»: Էս անքամ էլ մեյմո՛նի մատաղ անելի: Մի՛նչև դեսուդեն
կնգնի էտ էլ կանի կպրծնի, արթեն խաղողը խասնելի: Տա՛ր խամար
էլ կյի՛նու մեջը մնացիրի մատաղի խասյաթներ. եփ օր մարթը մե
երկու ստըքյանի⁴ խմելի ըլելի բլբո՛ւլ, յերքելի: Վեր մեքյիչել կա՛վել-
ցուցի՝ տա՛ռնա՛լի ասլան, վեր շատ կի մի չամի կնցուցի, կլնի մեյմո՛ն՝
կթո՛նի դես, կթո՛նի դեն:

Կարապետյան (ղաշտ.) 1966, 40:

Բ1. Մարթի, իշի ու շան ցեղը:

Գրառվել է՝ 1965 թ., Լոռիում:
Բանասաց՝ Հովհաննես Հակոբյան (ծննդ. տվյալներ չկան):

Մեր ապուպապերը, նրանց էլ պապերի պապերն ինչ որ ասել
են, էտ չիմ դըրուստ են ասել: Էտ ասածնին սերընդեսերունդ պատ-
մել են, պատմելով էլ մեզ ա հասել, հիմի էլ մենք ենք պատմում, տը-
հենց պատմելով կգընա, կը հասնի բոլոր սերունդներին:

¹ Առյուծ:

² Բավականին:

³ Դյուրին, հեշտ: Տվյալ դեպքում՝ թեթև, մի փոքր:

⁴ Բաժակ, գավ:

Նոյը մի շատ խելոք, հրակացող մարթ ա էլել: Որ աշխարը ջրնեղեղ ա էլել, նա իրա տունուտեղով բըցրացել ա Մասըսի գըլուխը, հեղեղը նըրան չի հասել: Եփ որ հեղեղը եղ ա քաշվել, աշխարում որցեղենը շատ ա էլել, քանց թե էքեղենը: Աշխարում իրեք թաքավոր են էլել, նըրանք էլ են հեղեղից ազատված էլել: Հըմի արի տես, որ էտ թաքավորնին ուզըմ են կընիկ ուզեն, հըմա ախչիկ չեն ճարըմ, որ իրանց հըմար կընիկ ուզեն: Էտ ժամանակ մենակ Նոյն ա մի ախչիկ ունենըմ: Էտ թաքավորնին իմանըմ են, որ Նոյն ախչիկ ունի, իրեքն էլ գալիս են, որ ախչիկն ուզեն: Դե մի ախչիկն էլ խու իրեք թաքավորի կընիկ չի կարալ դառնա. ինչ անե խելիչ Նոյը: Թե մընին տա՝ էն էրկուսին մերժե, էն էրկուսն իրար դուշման տին դառնալ: Վերչն իրեքին էլ խոսք ա տալի, կարըմ չի մերժե:

Իրեքն էլ գնըմ են իրանց տըները, որ էս ինչ օրը գուռնով, դըրհով, սագով, սագանդարով գալ տին, որ Նոյի ախչըկան իրանց հըմար կընիկ ուզեն: Հըմա մի թաքավորն էլ ա գիդե ոչ, որ Նոյն իրեք թաքավորին էլ խոսկ ա տըվել:

Նոյը ձեռները դըբա երգինք ա բըցրացնըմ:

– Տեր Աստոծ, – ասըմ ա, – դուն օքնության հասի, էրեսըս ոտիտ տակը. ես մի ախչիկ ունիմ, իրեք թաքավորի խոսկ եմ տըվել: Հըմի իրեքն էլ գալ տին, որ ախչըկանն ուզեն, ես ո՞ր մընին տամ էս մի ախչիկը:

Իրա տան դըռանը որ աղոթելիս ա ըլըմ, էտ ժամանակ էլ իրա դըռանը կաղնած են ըլըմ էշն ու շունը: Մին էլ տենըմ ա՝ իրա աչկի ըղաքին էշն էլ ախչիկ դառավ, շունն էլ: Էրկուսն էլ էնքան նըման են իրա մինուճար ախչըկանը, որ էլ ասելու չի:

Էտ ժամանակ Նոյի ախչիկն էլ ա տանիցը դուրս գալի ու զարմանըմ ա, որ էրկու իրար նըման ախչըկեք դըռանը կաղնած են: Նոյի կընիկն էլ ա տանիցը դուս գալիս ու նա էլ ա տենըմ էտ իրեք իրար նըման ախչըկան, նա էլ ա հուշտ ըլըմ ու կարըմ չի ջոգե, թե որն ա իրանց ախչիկը:

Մի քիչ ժամանակ եղը Նոյն էլ չի կարըմ ջոգե, թե ո՞րն ա իրանց իսկական ախչիկը, ո՞րն ա շունը, ո՞րն ա էշը:

Էտա Նոյն էլ, իրա կընիկն էլ ուրախանըմ են, որ Աստոծն իրանց լըսել ա, իրանց աղոտկը տեղ ա հասել, հըմի ամեն մինը կըտան մի թաքավորի, էլ կըռիվ չի ըլիլ ոնչ թաքավորների, ոնչ էլ ինքը թաքավոր դուշման կունենա:

Էտա ժամանակին գալիս են թաքավորնին: Իրեքին էլ հըրսանիք ա անըմ, ամեն մի ախչըկանը տալիս ա մի թաքավորի, ճամփու

ա դնում լավ բաժինքով, ոնց որ պետկն ա՝ իրեքին էլ հավասար:

Վրոովն անց ա կենում մի տարի: Նոյն ու իրա կրնիկը որոշում են գրնան իրանց ախչըկերանցը տեսության, առանձնապես իրանց հալալ ախչըկան, որ աշխարի չափ կարոտել էին:

– Ա՛յ մարթ, – ասում ա կրնիկը, – բա հըմի ո՞նց տինք ջոգիլ, թե ո՞րն ա մեր հարագատ ախչիկը, ո՞րն ա մեր էշը, ո՞րն ա մեր շունը:

– Ա՛յ կրնիկ, – ասում ա Նոյը, – առաչինը՝ ոնց ըլի, էշն իրա խասիաթը չի թարգը տըված ըլիլ, շունը՝ իրա, մեր ախչըկա խասիաթն էտա գիդենք: Թե որ Աստոծ խասիաթներուն էլ կըլի փոխած, դե փառք Աստու, թող հըմի էլ ջոգենք ոչ, Աստոծ իրեքին էլ ինքն ա մեզ տըվել:

Էտա վեր են կենում, լավ նըվերներով, լավ ուտելիքներով գնում են:

Գնում են աղաք մի թաքավորի տուն: Չիմն էլ գալիս են բարոդութին են անում խընամըքերին, ախչիկն էլ գալիս ա հորնըմոր խրտիտն ա ընգնում: Ուրախանում են, նըրանք խընամըքերին են պատվում, սըրանք էլ իրանց նըվերներն են բաժնում, ուտում են, խմում: Նոյը հարցնում ա վենձ խընամուն.

– Խընամի ջան, – ասում ա, – ո՞նց ա, ո՞նց հարսն ա դատել, գոհ ե՞ք մեր ախչըկանից:

– Շատ գոհ ենք, – ասում ա խընամին, – լավն ա, հընագանդ, հըմա մի թերութին ունի. ասենք՝ էն ո՞վ չի թերութին ունի, էտ էլ բան չի կա. մի քիչ թամբալ ա, մին էլ՝ դըմբո ա, ուշ ա գըլխի ընգնում: Հըմա որ գըլխի ա ընգնում, շըլինքը եդ թեքիլ չըկա, հուջաթ անիլ չըկա, հընագանդ կատարում ա:

Նոյը մտնում ա կընգա անգաձը, ասում ա.

– Կրնիկ ջան, գըլխի ես, որ սա մեր էշն ա: Տեհա՛ր, որ ասի՝ խասիաթներուն մընացած կըլի՞, Աստոծ խասիաթը փոխել չի, սա մեր էշն ա:

– Դրուստ ես ասում, մարթ ջան, – ասում ա կրնիկը, – ես էլ գըլխի ընգա, որ սա անպայման մեր էշը պըտի ըլիլ. դե էշն ա թամբալն ու դըմբոն, էշն ա բանը ուշ գըլխի ընգնում:

Էտա քանի օր են ըտի կենում, քանի օր չեն կենում, հըմի էլ վեր են կենում, որ գընան էն մի ախչըկանը տեսության: Իշի կեսուր–պատրոնը, մարթը, որ թաքավորն ա, իշի մարթը, բերում են էտ խընամըքերին լավ պատիվ են տալիս, իրանք էլ իրանց հերթին ավելի լավ նըվերներով ձամփու են դնում: Թաքավորն էլ անորն ու զանքաչին

տանընմ ա, իրա երգրի սահմանն անց ա կացնըն, դըրգըն ա էն մի բաջանաղի երգիրը: Նոյն ու իրա կընիկը գնըն են հասնըն են մի թաքավորի քաղաքը: Գնըն են թաքավորի պալատը, ըտի եդ խընամըերը գալիս են բարողութին անըն, ուրախնըն են, ախչիկն էլ գալիս ա հորնընոր ճըտովն ա ընգնըն, խտըտըն ա, փըթաթվըն, էլ գիդե ոչ, թե ինչ անե: Տանըն են նըստացնըն խընամըերը, թաքավորը ջոգ են չորսիկուոն անըն իրանց հարսի հորնընորը, ախչիկն էլ խու էլ պատմելու բան չի, ոնց ա ուրխացել:

Սըրանք էլ են լավ պատիվ անըն, ուտացնըն, խմացնըն: Նոյն ասըն ա.

– Խընամի ջան, հարցնիլն ամոթ չըլի, էսա մի տարի ա՝ մեր ախչիկը ձեր տանը հարսն ա. յարաբ ոնց հարսն ա դառել, յարաբ գոհ էք, թե՛ չէ:

– Է, խընամի ջան, – ասըն ա հարսի պատրոնը, – Աստծո ըղորմի ձեր հորնընորը, շատ լավ հարսն ա. հավաղարիմ, դոչաղ, ամեն բանի հասնող: Քըշերներն էլ չի քնըն, էն ծիտն էլ որ դըռնովն անց կենա, սա իմանըն ա: Ես իմ հարսի ցավը տանիմ, բարեգամին ու դուշմանին էլ ա ջգըն, գողին ու հալալին էլ ա ջգըն, ամեքին իրանց արժան պատիվն ա տալի, հընա մի քիչ լիզվանիկ ա, խընամի ջան:

– Ա՛յ կընիկ լավ էն գըլխի, – եդ կընգա անգաձն ա մտնըն Նոյը, – սա էլ մեր շունն ա. տես ինչ հարս ա դառել, է՛:

– Գըլխի եմ, – ասըն ա, – մարթ ջան, գըլխի եմ, որ մեր շունն ա: Մեր դըռանն էլ սա սըհե հավաղարիմ էր, տունուդուռը լավ պահեր, ծիտն էլ չէր կարալ անց կենա մեր դըռնովը, որ սա իմանար ոչ: Մեր դռանն էլ սա դուշմանն ու բարեգամը ջոգեր. տես ինչ հարսն ա դառել, է՛: Մեր դըռանն էլ շատ հաչեր, բան չի կա:

Էտա ըտի էլ մի քանի օր մնըն են, գնըն են էն մի ախչըկան տեսության: Դե արթեն գիդեն, որ էն մի ախչիկն իրանց հարազատն ա:

Գնըն են էն մի թաքավորի երգիրը: Էն մի թաքավորն էլ ա շատ հարգանքով, պատվով ընթունըն: Ախչիկն էլ գալիս ա հորնընոր ճըտովն ընգնըն, կարոտներուն առնըն են: Ըստի էլ ա հարցնըն Նոյը.

– Խընամըեր ջան, – ասըն ա, – իմ ախչիկը ոնց հարսն ա դուս էկել:

– Է, խընամի ջան, – ասըն են հարսի կեսուր-պատրոնը, – էռնակ մեր հարսի մերը սըրա պես օխտն ախչիկ էր բերել, ես էլ օխտը տըղա էի ոնեցել, օխտն էլ դառել էին իմ հարսը: Մե հընար մենակ հարս չի ձեր ախչիկը, սա մեր ախչիկն էլ ա, մեզ օխտն ախչըկա համ ա տալի: Մեր տըղեն ու մեր հարսն էլ թե ինչքան են իրար սի-

որը ու ինչքան են իրար հավադարիմ, էլ ասելու չի: Հալալ կաթնակեր և մեր հարսը, մենք նըրա ցավը տանինք:

Հըմի, ձեզ մատաղ, մարթկության մեջ մարթ էլ կա, շուն էլ կա, էջ էլ կա: Էն որը որ իսկական մարթ և, նա Նոյի ցեղիցն և, որը շուն մարթ և, ուզըմ և տըղամարթ ըլի, ուզըմ և կընիկ, նա շան ցեղիցն և: Էն, որ էջ և, թամբալ, բանն ուշ գըլխի ընգնող, դըմբո, նա էլ իշի ցեղիցն և: Էն, որ ասել են՝ հալալ կաթնակեր, դըրանք Նոյի ու իրա կընգա ցեղիցն են:

Հակոբյան (դաշտ.) 1965, 496–500:

Բ₂.

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, վայրն անհայտ է:
Բանասաց՝ անհայտ:

Արդար ու բարեպաշտ մարդ էր Նոն: Երբ Աստված կամեցավ համատարած ջրհեղեղով ջնջել մարդկային սերունդն աշխարհի երեսից՝ Նոն տապան շինելու պատգամն ստացավ:

Երբ նա վարպետներ էր որոնում, որոնք համաձայն էին հանձն առնել տապան շինելու աշխատանքը՝ շատ նեղությունների հանդիպեցաւ, որովհետև ինքը հօտերի ու ագարակների տէր չը լինելով շատ չնչին առաջարկություն էր առաջարկում ձեռնահաս վարպետներին:

Բայց երբ յայտնի դարձաւ, որ Նոն մի շատ գեղեցիկ ու խելօք աղջիկ ունի՝ ամեն կողմից նրա մօտ սկսեցին վարպետներ թափուել և տապանը հմտութեամբ շինելու առաջարկություններ անել, միայն այն պայմանով, որ նա համաձայնուի աղջիկն իրենց կնութեան տալ:

Առաւօտեան եկաւ մի խարտեաշ քաջագանգուր երիտասարդ և ողջունելով Նոյին ասաց.

– Նահապետ, ինձ կնության տուր քո աննման Դալիլային, և ես մի այնպիսի մակարդակ կպատրաստեմ քո տապանի համար, որ ամենավտանգաւոր ջրապտոյտներն ու ուժեղ հոսանքներն անգամ չկարողանան մի մագաչափ վնասել:

– Լավ, – ասաց Նոն, – գնա հիմա, որդիս, և երբ ժամանակը կը գայ, ես կըկանչեմ քեզ: Երիտասարդը գլուխ տուեց ու գնաց:

Կէսօրին եկաւ մի ուրիշ երիտասարդ թխադէմ, յաղթանդամ հասակով. նա կանգնեց Նոյի առաջ և ասաց.

– Հայր, եթէ դու քո գեղատեսիլ Դալիլային ինձ կնութեան տաս, ես այնպէս ամուր և հաստատուն կշինեմ քո տապանը, որ նա կարողանայ դիմադրել ամենաահռելի փոթորիկներին ու ալիքների ուժգին հարուածներին:

– Համաձայն եմ, – ասաց Նոն, – հիմա գնա, որդիս, և երբ հարկաւոր լինի, կիմացնեմ քեզ:

Խոնարհ գլուխ տուեց երիտասարդն ու հեռացաւ յաղթական դէմքով:

Երեկոյեան, արևը մայր մտնելու ժամանակը, եկաւ երրորդ երիտասարդը և ասաց.

– Հայր նահապետ, եթէ դու ինձ արժան համարես քո հրաշափայլ Դալիլային փեսացու ընտրելու, ես քո նաւին այնպիսի համաչափ, դիւրաթեք ղեկ կըկապեմ, այնպիսի ամրանիւթ առագաստներ կըյարմարեցնեմ, որ ահագին նաւը մանկան պէս հնազանդ կըլինի քեզ, և դու կըքշես նրան հեշտութեամբ դէպի այն կողմը, ուր որ կամենաս:

– Բարի է, – պատասխանեց Նոն, – գնա հիմա, որդիս, ժամանակը գալիս դու կըկանչուիս գործի:

Երիտասարդն ուրախ դէմքով գլուխը խոնարհեց և արագ քայլերով հեռացավ ծերունու մօտից:

Հասաւ որոշեալ ժամանակը: Վարպետները կրկնակի եռանդով ձեռնարկեցին նաւի շինութեանը և կարճ ժամանակից յետոյ աւարտելու վրայ էին:

Նոն մեծ հոգսի մէջ էր. նա սուտ էր խօսել, պէտք է ուխտադրուծ լինէր, որովհետև ինքը միայն մի աղջիկ ունէր, իսկ խոստացել էր նրան երեք մարդու:

Աստված տեսաւ Նոյի վիշտը և երազի մէջ երևալով նրան ասաց.

– Մտահոգութեան մէջ մի տանջուիլ, ով արդար ծերունի. դու ունիս մի էջ և մի հատ շուն. ահաւասիկ ես կըհրամայեմ նրանց աղջիկներ դառնալ, որով դու հնարաւորութիւն կունենաս քո երեք փեսացուների առաջին էլ պարզ երես դուրս գալ:

Կատարուեց. Նոն առաւօտեան վեր կացաւ քնից և իւր տանը մինի փոխարէն տեսաւ երեք աղջիկ. բայց երեքն էլ անքան սիրուն, այնքան իրար նման, որ նա դժուարանում էր իրարից զանազանել և որոշել թէ՛ որն է իւր հարազատը և որոնք՝ խորթը:

Սկսուեցան անձրևները, բարձրացան ջրերը, և Նոն իւր երեք փեսաների ու աղջիկների հետ մտաւ տապանը և այնտեղ հարիւր

հիսուն օր մնալուց յետոյ դուրս եկաւ այնտեղից. գոհաբանական ողջակէզ մատոյց Աստծուն, ապա այգի տնկեց ու գինեգործութեամբ պարապեց:

Ժամանակ անցնելուց յետոյ մի անգամ Նոյի կինն ասաց նրան.

– Ա՛յ մարդ, վեր կաց, գնա մեր աղջիկներին տեսութեան. երկար ժամանակ է տեղեկութիւն չունինք. տէն մին, ի՛նչպէս են ապրում, ողջ են թէ մեռած, ծարաւ են արդեօք, անօթի՞ թէ կուշտ: Տեղեկացիր, մարդիքը գո՛հ են արդեօք իրանց կանանցից թէ ոչ:

Ծերունի նահապետը վեր առաւ ճանապարհորդական ցուպը, կողքից քաշ տուեց ջրի ամանը և ճանապարհ ընկաւ:

Նախ եկաւ փեսաներից մինի մօտ և քաղցրութեամբ բարևելով ասաց.

– Խաղաղություն քեզ, սիրելիս: Դու գո՛հ ես արդեօք քո կնոջից թէ ոչ:

– Շատ գոհ եմ, շատ լաւ կին է, – պատասխանեց փեսան, – բայց մի պակասութիւն ունի. երբեմն չափազանց յամառ է ու կամակոր, դանդաղ և ժամանակ առ ժամանակ այնպիսի յիմարութիւններ է անում, որ մարդ զարմանքից ուղղակի ապշած է մնում: Գործի մասին խօսք չունիմ, որ սարն էլ մէջքին դնես կըտանի անտրտունջ, լուռ է ու հնազանդ:

– Աստուած սրտիտ համբերութիւն տայ, որդի, – հրաժեշտի ողջոյնի հետ միասին ասաց Նոն և ապա մտքում «սա էջն է» աւելացնելով ուղևորուեցաւ միւս փեսի մօտ:

– Բարեւ, որդի, – ասաց նա երկրորդ փեսին – ի՛նչխէս են անցնում փեր օրերը, արդեօք ի՛նչպէս ես ապրում կնոջդ հետ. գո՛հ ես բաղդիցդ, թէ ոչ:

– Ինչո՞ւ չէ, գոհ եմ. շատ լաւ կին է, միայն անտանելի շատախօս, ամեն բանի վրայ տեղի անտեղի դատարկաբանում է, չափազանց աչքածակ է, աչքը տեսածի վրայ է: Գիշեր ցերեկ ինձ հանգստութիւն չի տալիս և այս կուզեմ այն կուզեմ ասլով հոգիս բերանիցս դուրս է բերում:

– Հէ՛ջ, սա էլ շունն է, – փնթթնփաց քթի տակին Նոն և շտապեց երրորդ փեսայի մօտ:

Բայց Նոն դեռ չէր մօտեցել նրա խրճիթին, որ փեսան սկսեց ընդառաջ վազել, աներոջ ոտներն ընկաւ ու համբուրելով ոտների փոշին հազար ու մի գովասանք ու շնորհակալութիւններ սկսեց շռայլել իւր կնոջ մասին, և վերջն աւելացրեց.

– Օրհնուի նրա ծնունդը, նա երկնքից իջած հրեշտակ է, իմ կեանքի վարդն է, իմ մխիթարութիւնն է. նա իմ հոգին է և մեռած մարմնիս շունչ տիրողը...

Եւ այսպէս գովգերը վերջ չունէին:

Նոն համբուրեց փեսին, մօտ կանչեց աղջկանը, գգուեց նրան և բացականչեց. «Ահա՛ իմ հարազատ դուստրը»:

Նոն տուն վերադառնալով պատմեց կնոջը իւր տեսածն ու լսածը աղջիկների մասին:

Պառաւ նանը յօնքերի տակով կասկածոտ հայեացք ձգեց մարդու վրայ և հարցրեց.

– Այդ ամենը շատ գեղեցիկ է, բայց աղջիկներիդ կարծիքն էլ հարցրի՞ր փեսաներիդ մասին թէ ոչ:

Այդ հարցն անպատասխան մնաց մինչև այսօր:

«Ժողովրդական-պատկերազարդ տարեցոյց» 1902, 69–71:

Բ3.

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Զավախքում:

Բանասաց՝ անհայտ:

Զավախքում գրառած տարբերակն ավարտվում է այսպէս. «Այ իրեքին ջինսն ա բազմացան»:

Լալայեան 1892, 46–47:

Բ4. Բիծի ախճկերը

Գրառվել է՝ 1978 թ. Շամշադինի շրջ. Բերդ ք. (այժմ՝ Տավուշի մարզ):

Բանասաց՝ Աբրահամ Գրիգորյան (ծնվ. Նաբային գ., Բուլանըխ, 1900 թ.):

Նոյի ճրրհեղեղից հետո, ջրհեղեղ ա ըլել էլի, մարթիք, ամեն մարթը իրան համար մի տեղ իրան ինչը վեր ա կալել, իր գյանք ազատելու համար:

Մի բիծա մարթ ա ըլել. վեր ա կալել իրան կնիկը, մի ախչիկ ա ունեցել, մի էք շուն, մի էք էլ էշ, մի տեղ տա մնացել ա կենթանի, ճրրհեղեղից հետո էլի: Մի իրեք տղա էլ իրար եկել են հանդիպել, հմի ընտանիքի են ման կյալիս, վըեր սերունդ ստեղծեն էլի: Դե հազար կիլոմետր պետք ա քյսան, վըեր մի մարթ տենաս: Տրա՛նք մա՛նըմ են, վըեր էտ բիծեն մի ախչիկ ունի, վեր են կենըմ քյսըմ էտ բիծին քըթա՛նըմ, ասըմ ա. – Բարի օր քե, հայրիկ ջան:

Թե. – Աստծու բարին:

Ասըմ ա. – Մենք լսել ենք, վրեր քեզ մի ախչիկ ունես, խի՞ չես մեզ տալի:

– Դե, – ասըմ ա, – վրերթի ջան, տուք իրեք եք, իմ ախչիկը մինս ա, վրերթիտ տամ:

Ասըմ ա. – Հայրիկ ջան, մնիս համար նշան կըտնենք, էրկսիս համար էլ կըփնրենք էլի:

Էս բիձեն կյնգա՛նս ասըմ ա. – Ա՛յ ախչի, ախչի՛, մեր ըրելսին ծեն տու թող կյա՛:

Վրեր ախչկան կանչըմ են, իրեք ախչիկ են կյալի, իրեքն էլ վրենց վրեր մի խընձորից տուս էկած: Էս տղեքը ասըմ են. – Հայրիկ ջան, բա խի՞ իր մեզ խափըմ, վրեր ասըմ իր, թե մի ախչիկ ունեմ, էտ ա իրեք ախչիկ ունես, իրեք էլ տղա ենք էլի:

Ասըմ ա. – Վրերթի ջան, ես ձեզ փորցըմ ի:

Էլ իրան դուզ աշկար չի հանըմ: Էտ ըխչըկերանցը տղերանցն ա տալի, իրանց հասցեն վեր ունըմ: Տրանք առան ըխչըկեք քյացին, քյնալուց հետո բիձեն ասըմ ա. – Ա՛յ ախչի, ախչի՛, տես հլա մեր շունս ու մեր էշը կենըմ են:

Քյնըմ ա տենըմ վրե՛չ էշ կա, վրե՛չ շունը:

Էտ սերունդ տա՛ն սհաթիս էլ կա հա՛:

Ասըմ ա. – Ա՛ մարթ, բա վրենց իմանանք մեր ախչիկ վրերն ա:

Ասըմ ա, դե բիձեն գիդուն մարթ ա, ասըմ ա. – Կքյնա՛նք կտե՛նանք էլի:

Քյնըմ են մի փեսի տուն հուր են ըլըմ, ուտըմ են, խմըմ են, առավոտ վոտ վրեր քյնըմ են երգրորթ փեսի տուն, բիձեն փեսին դրաղ ա կանչըմ, ասըմ ա.

– Վրերթի ջան, ընտանիքըտ լա՛՞վն ա, իրար հըսկանըմ եք, հավան ես կենըմ:

Ասըմ ա. Հայրիկ ջան, շատ լա՛վն ա, բայց մինչև բըզես վրեչ, անըմ չի:

Ասըմ ա. – Էտ էշն ա:

Քյնըմ են երգրորթ փեսի տուն, ուտըմ են, խմըմ են, առավոտը քյնալիս տեղը էլետ փեսին դրաղ ա կանչըմ, ասըմ ա.

– Վրերթի ջան, – ասըմ ա, – ընտանիքըտ լա՛՞վն ա, իրար լեզու հըսկանըմ եք, յոլա եք քյնըմ:

Ասըմ ա. – Հայրիկ ջան, շատ լա՛վն ա, բայց վրեր մի պա՛ն անըմ ա՛ տաս անքամ լանթ ա տալի (ընդդիմանալ), նոր ա անըմ, հուջաթ ա անըմ (վիձել, առարկել):

Ասեց. – Էս էլ շունն ա, հմի քյնըմ ենք մեր ախչկա տուն:

Դեռ էտ էսականություն դեռ սհաթիս մեր սերունդի մեջ կա: Տա իրական ա էլի, մտնըմ ես մի ընտանիքի մեջ, ինչ վըեր ասըմ ես անգաճ ա ունըմ էլի, հասկանըմ, բայց ընենց ընտանիք էլ կա, վըեր մի պան բդի անի, հազար անքամ հուջաթ անըմ ա, նոր անըմ:

Խենյան (կազմ.) 2000, 45 (45), 142:

ԴՐՎԱԳ Խ ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆԸ ԵՎ ՄԾԲՆԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱԿՈՒԲԸ

Ա.

Գրառվել է՝ 18-րդ դ., Վաղարշապատում:
Բանասաց՝ անհայտ:

Здесь просил я брата убедительнейшим образом, чтоб поехал со мною еще на Араратскую гору, а если не может решиться удовлетворить моему любопытству, чтоб осмотреть стоящего на южной стороне оной горы монастыря Хор-вираб <...>. то по крайней мере проводил бы меня к ближайшему монастырю, построенному мыщпинским архиепископом св. Иаковом около 1300 лет на самой подошве горы, на западной ее стороне, и на том самом месте, где праведный Ной, сошед с вершин Арарата, посадил первое виноградное дерево и развел виноград, и поэтому называемый Эарк-Уры (первонасажденный виноград, или виноградное дерево); в обоих сих монастырях в тогдашнее время находились еще монашествующие, а теперь запустили. Последний примечателен потому, что означенный мыщпинский архиепископ, святой Иаков, как говорит предание, св. отец, вознамерясь достигнуть вершин Арарата, где остановился Ноев ковчег, принес о том господу богу усердное моление и отправился в свой путь, но когда, быв утружден шествием своим, для подкрепления изнеможенных сил предавался отдохновению, то по пробуждению от сна каждый раз находил себя опять нанизу или не в дальнем расстоянии от того места, от которого начинал свой путь, и таким образом трудился целые семь лет, пока напоследок явился ему во сне ангел, который, дав от ковчега кусок негниющего дерева, сказал, что бог, не хотя презреть вовсе его трудов и моления, послал ему для удовлетворения любопытства его сей кусок дерева; но что ковчег мог бы он видеть только тогда, когда бы возмог возвратиться в недра родившей его матери и там рассматривал внутренние утробы ее. Иаков, восставший от сна своего, нашел подле себя данное ему ангелом в видении дерево. (Дерево сие находится в Ечмиацын-

ском монастыре; но с которого времени, сказать верно не могу, оно сероватого цвета, имеет косяную твердость; запах приятный, но незнакомый; и отличное от всех почти известных дерев, так что ни к какому применить нельзя; а притом обделка его показывает теску обыкновенного топора, вместо которого во всей нашей стороне употребляется орудие, другим совсем образом сделанное наподобие большой кирки).

В засвидетельствование грядущим векам сего происшествия просил он от бога показать и оставить навсегда на сем месте какое-нибудь чудо; и по сему-то прошению открылся на том месте ключ, который и до днесь находится, не более как с одну версту выше от монастыря. Ключ никуда не истекает, и вода его имеет следующую чудесную силу: в окружности тамошнего места находятся небольшие черные птицы. Сии птицы в малом числе, как я видел, следуют в некотором расстоянии за оною водою, когда привозили ее в наше селение, и утверждаю как истину, что кроме того места, где находился ключ, нигде их не видно. Когда на хлебных полях покажется много червей и особенно при нападении саранчи, тотчас берут означенную воду и бросают над полем по воздуху; помянутые птицы вдруг бог знает откуда берутся наподобие густого облака и, бросаясь на то поле, поедают саранчу, всякий вредный червь и тем спасают хлеб. Сию воду берут в Грузию и в окружные области турецкого и персидского владения и употребляют в подобных случаях даже магометане, но отнюдь не должно ставить ее на землю или на пол, но держать всегда висящую, ибо в противном случае она потеряет сказанную силу свою.

Жизнь Артемия Арагатского 1980, 76-77.

Թարգմանություն

Այստեղ ես համոզիչ կերպով խնդրեցի եղբորս, որ նա հետս գա Արարատ լեռան վրա, իսկ եթե չի կարող վճռապես բավարարել իմ հետաքրքրությունը, որպեսզի դիտենք այդ լեռան հարավային լանջին կանգնած Խոր-Վիրապ վանքը, գոնե կուղեկցի ինձ մոտակա վանքը՝ կառուցված Մծբնա արքեպիսկոպոս Հակոբի կողմից մոտ 1300 թ. հենց լեռան ստորոտին, դրա արևմտյան կողմում, և հենց այն տեղում, ուր երանելի Նոյը, իջնելով Արարատի գագաթից, տնկել է առաջին խաղողը և այգի է հիմնել, այդ պատճառով էլ անվանվում է Արկ-ուռի (առաջին խաղող կամ խողողի ծառ): Երկու

վանքերում էլ այն ժամանակ դեռ գտնվում էին վանականներ, իսկ այժմ ամայացել են: Վերջինը նշանակալից է, քանի որ նշված մծր-նեցի արքեպիսկոպոսը, Սուրբ Հակոբը, ինչպես պատմում է ավան-դությունը, սուրբ հայրը, ցանկանալով հասնել Արարատի գագաթին, ուր կանգնել էր Նոյան տապանը, ջանասիրաբար աղոթեց Տիրոջը և ճամփա ընկավ, բայց երբ հոգնատանջ հանգստանում էր, քնից արթնանալով ամեն անգամ հայտնվում էր ներքևում կամ ոչ հեռու այն վայրից, որտեղից սկսել էր իր ճանապարհը: Այսպիսով նա չարչարվեց յոթ տարի, մինչև որ վերջում երագում հայտնվեց հրեշտակը, որ տվեց նրան տապանի անփուտ ծառի մասնիկը և ասաց, որ Աստված, չցանկանալով արհամարհել նրա ջանքերն ու աղոթքները, ուղարկել է նրան ծառի այս մասնիկը՝ բավարարելու նրա հետաքրքրասիրությունը: Սակայն տապանը նա կարող էր տեսնել միայն այն ժամանակ, եթե կարողանար վերադառնալ իրեն ծնող մոր արգանդը և տեսներ նրա ներքին որովայնը: Հակոբը, արթնանալով, իր մոտ գտավ տեսիլքում հրեշտակի տված ծառի մասնիկը: (Այս մասնիկն այժմ գտնվում է Էջմիածնի վանքում, բայց որ ժամանակից, ստույգ չեմ կարող ասել: Այն մոխրագույն է, ոսկրի նման կարծր, բույրը հաճելի է, բայց անծանոթ: Այն տարբրվում է հայտնի բոլոր ծառատեսակներից, այնպես որ ոչ մեկի հետ հնարավոր չէ համեմատել: Դրա մշակումը ցույց է տալիս սովորական կացնի գործ, որի փոխարեն մեր երկրում օգտագործվում է գործիք, որն այլ կերպ է կառուցված): Հետագա դարերի համար այս իրադարձությանը որպես վկայակոչում նա խնդրեց Աստծուց ցույց տալ և այս վայրում թողնել ինչ-որ մի հրաշք և այդ խնդրանքով այստեղ աղբյուր բխեց, որը մինչ օրս այդտեղ է գտնվում, ոչ ավել, քան մի մղոն վանքից վերև: Աղբյուրը ոչ մի տեղ չի թափվում, իսկ դրա ջուրն ունի հետևալ հրաշագործ ուժը. այդտեղ շրջակայքում են գտնվում ոչ մեծ սև թռչուններ: Այս թռչունները, փոքր թվով, ինչպես ինքս եմ տեսել, թռչում են այս ջրից որոշակի հեռավորության վրա, երբ ջուրը բերել էին մեր գյուղ և պնդում էին որպես ճշմարտություն, որ, բացի այդ տեղից, ուր գտնվում է աղբյուրը, այլ վայրերում նրանք չեն երևում: Երբ հացի արտերին հարձակվում են բազում որդեր և հատկապես մորեխի գրոհի ժամանակ, իսկույն վերցնում են այդ ջուրը և ցողում են արտի վրա, ու այն թռչունները հանկարծ, աստված գիտի որտեղից հայտնվում են թանձր ամպի նման և, զգվելով արտի վրա, խժռում են մորեխը, ամենայն վնա-

սատու որդը և այդպիսով փրկում հացը: Այդ ջուրը տանում են նաև Վրաստան և շրջակա թուրքական և պարսկական շրջանները և օգտագործում են նման դեպքերում նույնիսկ մահմեդականները: Այդ ջուրը երբեք չի կարելի դնել գետնին կամ հատակին, այլ պետք է միշտ պահել կախված, հակառակ դեպքում՝ այն կկորցնի իր ուժը:

Ա 2.

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Բուլանըխում (այժմ՝ Թուրքիայի Մուշի իլի Բուլանիկ շրջան):

Բանասաց՝ անհայտ:

Մասիս – Թէ մարդ կրնայ ուր մամու արգանդ մտնայ մէկ լէ, էնպես էլ կրնայ Մասիսու գլուխը բանձրնալ ու զՏապան տեսնել: Մինակ սուրբ Յակոբ ցանկացաւ ելնել Մասիսը, որ մենչև յիրկուն կիտէր ի սարի կող, կպառկէր–քնէր, լուսուն մէկլէ զինք ներքև կտեսնէր, հարի Աստուած խղճաց վրէն, ճամփեց զուր հրեշտակ, կտոր մէ Տապանից տուեց, սուրբ Յակոբ ետ դարձաւ ուր տեղ:

Բենսէ 1900, 36:

Ա 3.

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ, Նախիջևան գավառում:

Բանասաց՝ անհայտ:

Մասիսի հետ շատ հին ժամանակներից կապւած են անթիւ պատմական անցքերի յիշողութիւններ: Նա մի առանձին վեհ պատկառանք է ազդում շրջակայ բնակիչների վրայ, որոնք նրա գագաթը մարդկային ոտքի անկոխելի են համարում. «իրաւունք չըկայ (Աստծուց) նրա գագաթը բարձրանալու», այդպէս է ասում ժողովուրդը և թերահաւատութեամբ ժպտում, երբ ևրոպացի ճանապարհորդներ են գալիս նրա գլուխը բարձրանալու: ...

Այս լեռան վրայ բարձրացաւ Յակոբ Մծբնայ հայրապետը և կէս ճանապարհին հրեշտակի ձեռքով պարգև ստացաւ Նոյեան տապանի մասնիկը: Նրա վանքը այժմ անհետացել է, միայն իբրև ուխտատեղի մնում է նւազ հոսող աղբիւրը, որից շրջակայքի ջերմեռանդ ժողովուրդը երաշտութեան, մորելի ժամանակ թափորով ջուր է բերում պատուհասից ազատելու համար:

Լէօնիդ 1902, 28, 30:

Բ. Սուրբ Ակորա աղբյուրը:

Գրառվել է՝ 20-րդ դ. 50-60-ական թթ., Աշտարակի շրջ. Էջմիածին ք. (այժմ՝ Արմավիրի մարզ):

Բանասաց՝ անհայտ:

Ջրհեղեղից ետը, որ աշխարքի երեսին ջուրը ցամաքեց, մի հալիվոր մարդ մուրազ արեց հասնի Մասսա սուրբ սարի կատարը, Նոյա տապանը տեսնի՝ ետ դառնա:

Մի օր առավոտվա ծեգին վեր կացավ, ճամփի պաշարի խուրջինը գցեց ուսով, գավազանը ձեռն առավ ու ճամփա ընկավ: Գնաց, գնաց, երկու-երեք օրումը անջախ հասավ սարի կեսին: Մութը վրա տվեց: Մութը որ վրա տվեց, շատ էր բեզարել, նստեց հաց կերավ ու պանկեց քնելու: Քնեց մինչև լիս:

Առավոտը աչքը որ բաց արեց, ինչ տեսավ, հրես ինքը սարի փեշին վեր ընկած: Շատ զարմացավ հալիվորը, համա հույսը չկորեց, վեր կացավ երեսին խաչ հանեց, Աստծու անունը տվեց ու էլետ ճամփա ընկավ: Էս անգամ մտքումը դրեց աչքը-աչքի չտա, օխտ օր, օխտը գիշեր գնաց առանց քնելու: Մի օր էլ իրիկվան չդիմացավ, պանկեց քնեց: Ծեգի հետ աչքերը բաց արեց, էլետ ինքը սարի փեշին ընկած ա:

Շատ սրտնեղեց սուրբ սարի ճամփորդը:

– Տեր Աստված, ասեց, չընի՞ շատ մեղավոր եմ, արժան չես տեսնում Մասսա սարի կատարին հասնիլը:

Էս խոսքերը բերնին էր՝ մին էլ մի սպիտակամիրուք մարդ, միրուքն ընչանք ծնկները հասած, գավազանը ձեռին կայնեց հալիվորի գլխին:

– Դու քանի՞ գլխանի ես, հարցրեց գավազանը գետնին խփելով, որ ուզում ես Մասսա սարի կատարին ըլնես, էդ մի բանը մտքիցդ հանի: Թե աշխարհ եկող մանուկը էլետ մոր գավակատունը կտեսնի, աղամորդին էլ՝ Մասսա սուրբ սարի կատարը կհասնի:

Հալիվորը, որ մեղավորի պես լսում էր էս խոսքերը, աչքերը բանցրացրեց, որ տեսնի էս խոսողն ով ա՝ զարմանքիցը սառեց:

Սպիտակամիրուքը չկար:

Գլուխը կախ գցեց մեր ճամբորդը ու մտքի տունն ընկավ...

Մին էլ՝ մի անուշ ջրի քչքչոց լսեց, մտիկ արեց, ինչ տեսավ, էս տեղից, որտեղ սպիտակամիրուքը գավազանով խփում էր՝ մի պարզ ու սառը աղբյուր ա դուս գցում:

Սպիտակամիրություն, դու մի ասի, Սուրբ Ակոբն ա էլել: Էդ օրվա-
նից Մասիսի փեշի աղբյուրի անունը մնաց Ս. Ակոբա աղբյուր:
Նազարյան [1950-60-ական թթ.] (դաշտ.), 246-247:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ա. Նոհա տարանի պատմությունը:

Գրառվել է՝ 19-րդ դ. վերջ – 20-րդ դ. սկիզբ Արթիկում (այժմ՝ Շիրակի մարզ):
Աշուղական, հեղինակ՝ աշուղ Ծաղկալի:

Նոհը ուներ օխտը տղա, օխտը հառս ու թոռներ: Նոհի ամենամենն հառսը 40–50 տարեկան պսակված էր: Մենն, հասակով կնիգ էր, հըլը Նոհի հետ չէր խոսում: Հառսնուտեն էր էնում:

Նոհը գեռդաստանով շատվոր էր: Շատ վար ու ցանք էր էնում: Լավ ռանչպար էր, շատ աստվածավախ ու աստվածասեր մարդ էր: Հալալ դադըմ, հալալ ապրըմ էր:

Մի օրն էլ Աստվածուտենը հրեշտակին դրկեց Նոհին դոնաղ: Ըսավ.

– Գնա շատ մեծամեծ տներ, փորձի, վերձը գնա Նոհի տունը, տես հըլը ո՞րը լավ կընդունէ, ո՞րը Ասու պատվիրանկը լավ է պահում, Աստված է միտք բերըմ: Հալալ քրտնքով ապրում:

Հրեշտակը իջավ երկնքից, ընկավ երկրի երեսը: Ման էկավ, ինչկան օր մեծամեծ տներ կար գեղեր, ման էկավ: Հեչ մեկը Աստծու ըսածով չէին: Վերձը էկավ Նոհի տունը: Նոհը տեսավ, օր հրեծտակը գալըմ է: Հըլը իրան չհասած, վազավ հրեշտակի առաջը: Բարովեց, բերավ տուն: Լավ պատիվ, թադարուկ տեսավ: Հացի նայելուց գլուխը բացեց, երեսը խաչակնքեց, Աստված փառաբանեց, Ասու աղոթքներ ըսավ, նոր հաց կերավ: Հրեշտակը զարմանքով ըսավ. «Մեր Տեր Աստվածը ուրդից գիտեր, օր Նոհը էսքան Ասու հետ դրուստ է, Ասու ճանպուն է, օր վեռձը դրկեց ըստոր քովը»:

Հաց կերավ, պոծավ Նոհը, էլի երեսը խաչ քաշեց, Ասուն փառաբանեց: Հացի սեղանը օռչնեց, նոր ելավ սեղանի աղոտկը ըսավ.

– Տո՛ր, Աստված, սեղանիս լիուտեն, ուտեմ՝ չուրանամ: Տո՛ր սրտիս խիղճ ու խղճմտանք, տեսնիմ՝ չկուրանամ: Քյասիք մառտուն, սաղին, կաղին տեսնիմ՝ խղճամ: Խսմատ ունին իմ սեղանից՝ իրանց տամ: Հալալ դատիմ, հալալ ապրիմ: Քու փառկդ միշտ տամ: Թե մեղավոր եմ քո դեմ, պատիժ տո՛ր՝ կուրախանամ: Քու տված մե պատառ հացով ես կգոհանամ: Թե որ անմեխկ ես ճանճնում, ըսա օրինակ դառնամ, թո՛ղ ամենքն էլ քու օջախից գոյ մնան:

Էսկան բանն օր հրեշտակը տեսավ, զարմացավ: Ըսավ. «Մեր Ասու ծառաներն էլ Էսկան աստվածապաշտ չեն, ինչկան օր էս մառտն է: Ես շատ տեղ ման եկա, հըմը Էսկան աստվածասեր մառտ չտեսա»: Մտածեց հրեշտակն ու էդ մառտուց շնորհակալ եղավ ու նորից համբառծավ երկինք:

Գնաց Տիրոջ քովը: Տիրոջ աջն առավ կայնավ: Տերն ըսավ.

– Հւն, ինչ տեսար, ո՞վ քեզի ինչ սրտով ընդունեց: Ըսա՛, պատմե՛:

Հրեշտակը պատմեց իրան ամեն տեսածը: Վեռձը Նոհի արարմունկը, թե իշկանն աստվածապաշտ է: Հրեշտակը օր պատմեց Նոհի պատմությունը, Աստված չզարմացավ: Չզարմացավ ընդոր հմար, օր իրան այան էր: Հրեշտակին դրկեց, օր տեսնի ո՞վ է Ասու փառկին առժան:

Աստված ըսավ.

– Հրեշտակ, դե օր էդման է, գնա՛ Նոհին ըսա՛, օր թող էսօրվանից իրան թատարուկը տեսնի: Բըդի սասում ջրհեղեղ էղնի: Մի տարիմ սաղ աշխարհը բըդի ծածկվի, մնա ծածկած ջրով: Օր կհառծներ, թե է՛պ բդի էղնի ջրհեղեղը, ըսա՛. եպ օր քո ամենամեծ հառադ հետդ խոսած, էն օրը ջրհեղեղը գելնի:

Հրեշտակը եղ դառավ գնաց Նոհի քովը: Նոհը բերավ էլի պատվեց: Էլի իրա ուսումը (սովորումը) կատարեց: Հացի առաջ ու եղև աղոթյնները կատարեց: Վարձապես իրա սովորուսունները կատարեց:

Հրեշտակը ըսավ.

– Գիդէս, Նոհ, Աստված ընձի դրկեց, օր քեզի հայտնեմ, քո թադարուկդ տեսնիս: Շատ սասում ջրհեղեղ բըդի էղնի: Սար ու քար, ծով ու լեռ բըդի ծածկվի, աշխարհկ բըդի կործանվի: Մի տարին էլ բըդի ջուրը մնա երկրի երեսին: Ըսավ. «Թ՛ող գերդաստանը ազատէ, հետն էլ աշխրկի էղած ամեն անասունից, էրգնուծ թռձուններից վերցնե՛»:

– Լավ, – ըսավ Նոհը, – հըմը չիդեմ երպ բըդի ջրհեղեղ էղնի, օր կրնանամ ազատիմ էտկանին: Եվ կրնանամ կատարեմ Ասու կամկը:

Հրեշտակն ըսավ.

– Մեր Տեր Աստված ըսավ օր որ օրն օր քու մենձ հառադ քու հետ խոսած, էն օրն էլ ջրհեղեղ գելնի:

– Լավ, – ըսավ Նոհը, – ծառայըմ եմ Տիրոջ պատվերը կատարելու:

Ըսավ ու գնաց ուստեք բերավ կայնեցավ մեշի քովը: Ուստեքը որ կտորմ էր փեղերը, որ՝ խզարըմ էր, որն էլ շինըմ էր: Մե սաղ տարին անջաղ տապանը շինին, գլուխ բեին: Մե քաղկի՛մ բարա:

Տաբանը հազր մնաց, օր ո՛ր վախտ ջրհեղեղ եղնի, էն վախտ Նոհը իրան գերդաստանով լծվի տաբանը: Տաբանն օր մնաց ապաննի, ժողովուրդը գնածին կեղտոտեծին տաբանի նեսը: Էն տեսակ կեղտոտեցին, օր էլ ոտ դնելու տեղ չկար: Նոհը տեսավ, շատ զայածավ, ըսավ.

– Ժողովուրտ, ինչ տեսակ օր կելխտոտիկ, կանչեք Աստված, քոտտիք, բորոտիք, ձեր դեղն էդի էղնի:

Ըսավ թե չէ – ժողովուրդը էն տեսակ քոտոդան ու բորոդան, օր էլ երեսները աշել չէր էղնի: Մե օրմ էլ մեկը գնաց էլի դուս ելնեու, էսքան քոտտած ու բորոտած էր, օր չէր կոնըմ ոտի վրա կայներ: Ոտը փխտած, ընկավ կեղտերի մեճը: Օր ընկավ կեղտերի մեճը, թե չէ – վրա կեղտը, բորը իստակ թապավ: Մատը եղավ քարի պես սաղ սալամատ: Գնաց ժողովուրդի մեջը: Հարցրին, ըսին.

– Ա՛յ մառտ, էդ ի՛նչ էրեծիր, որ ըդման լավ լավծար:

Պատմեց եղելուտենը:

Մատտիկ ելավ, վազեցին, գնացին: Չբլղծան ու տաբանի մեջը թափլտան: Էդման մեկը մեկին ըսելով, իմաց տալով, սաղ ժողովուրդը գնածին թափլտան էսկան, օր վեռձի տապանը էդման իստկեծին, օր առաջվանիցը իստակ էղավ:

Նոհը քառսուն կոտ ցորենի առտը գնաց, տեսավ՝ հասել էր: Եկավ 40 իրդատ թթմեց, իրանց տնեծոնծ հետ ելան գնածին առտը քաղելու: Առավոտվա հացը կերան, օր ցերեկվա հաց ու կերակուրը բրդի բերեին, էկավ ցորեկն անցավ, հացը չբերին: Իրդադը անոտցել է, չի կոնըմ քաղ էնե: Հաց չկա:

Մեկ էլ գեթդանգեթ էն կողմից հառը հացը բառնած իշուն առավ, էկավ: Կեսրարը գնաց առաջ ըսավ.

– Ախր, ա՛յ հառս, էսկան էլ ուշանալ էղնի: Էս իրդատը սովամահ էղավ:

Հառը ձեռով–ոտով խոսալով, տեսավ օր կեսրարը բան չի հասկնըմ, խոսած: Ըսավ.

– Ի՛նչ էնեմ, թնդիրը ջուր էր ելնըմ, չէր վառըմ: Մուխ ու ծուխ էր էնըմ: Չուրի վառեծինկ, ուշածավ:

– Հա՛, – ըսավ Նոհը, – Հա՛:

Նոհը դառավ իրդդներին ըսավ.

- Էս հացն էլ ձեզի, էս առտն էլ ձեզի, էս քաղած, անքաղել օրանն էլ ձեզի, մենք էրթըմ էնք:

Ըսավ ու առավ իրան տղերանծն ու եկավ տուն:

Տնեծոնցը ըսավ.

- Էլ մի աշեք, մե տարվա հաց ու ջուր, ուտելիքներ վերծրեք, կրեք լծեք տաբանը: Տնեծիքը ամեկ իրան դռշին կրըմ էին լծըմ էին տաբանը: Նոհը ինկն էլ վերծրավ ամեն երունած, թռճունած, թե գազաններիծ մեկ-մեկ ջուխտ: Վերծրավ ու լծվան տաբանը:

Լծվան, տեղավորվան, [հրեշտակը] էկավ: Ըսավ.

- Նոհ, Տերը ըսըմ է, օր ինչդ օր մտնի, էմալ էղնի:

- Հա՛, - ըսավ Նոհը, - ինչդ օր մտա, էման գելնիմ:

Հրեշտակը նորից համբարծավ երկինք:

Նոհը տեսավ, օր երկինք, գետինք, սար ու քար պատավ, ջուր եկավ, մտնեց աշխարկը: Դուսմանլամիշ եղավ: Ալակոռծումն ընկավ: Ջրհեղեղն քանի գնաց շատծավ, օր ախրը տաբանը բարձրածավ, սկսեց սար ու քար կորել, ծածկվել: Վեռճապես ծածկվան ամենաբարձր սարերը: Իսկ տաբանը պտտվըմ էր ջրի էրեսը:

Պտտվելով էկավ, ըսավ.

- Ալագյա՛գ, ան գիս:

Ալագյազը ըսավ.

- Գնա՛ Հատիս, Հատիս բարձր է, քան գիս:

Տաբանը գնաց Հատիսու գլուխը, ըսավ.

- Հատի՛ս, ան գիս:

Հատիսն ըսավ.

- Գնա՛ Մասիս: Մասիս բարձր է, քան գիս:

Տաբանը գնաց Մասիսու գլուխը.

- Մասի՛ս, ան գիս, - ըսավ:

Տաբանը էլավ Մասիսու գլուխը: Տաբանը դիպավ քարերին, գոռած: Նոհը ըսավ.

-Ըհը՛, էլ տեղ չունինկ էրտլու:

Տաբանը մե տարի պտտելուց եղև, էկավ կայնավ Մասիսու գլուխը: Մասիսու գլուխն է: Հըլը մնում է, հըլը գմնա քանի աշխարկը շեն է:

Տաբանն օր կայնավ Մասիսու գլուխը, Նոհը տեսավ, օր ջուրը մե մազաչափ իջավ:

- Ահա՛, - ըսավ, - հույս Աստված, ջուրը առավ իջնել:

Էսմանով օրեցօր իջնելով, ջուրը իջավ, ցամկավ, իստակ-իստրկվավ: Մե վախտմ էլ մնաց: Սար ու քար չործան:

Նոհր ըսավ.

– Հլը դառդառին դրկեմ, տեսնիմ ինչ խաբար գբերի ախարիի դրուտենից:

Բերավ դառդառին բաց թողեց: Ըսավ.

– Գնա՛ թե՛գ արի, չուշանան: Տես ինչ կա, ինչ չկա: Սաղ խաբարը բերես ընձի:

Ղառղառը գնաց, տեսավ, որ սաղ աշխարկը դուրան դուրնվել է: Սարերի վրա էլ տեղ–տեղ, թակ–թակ ջանդակներ կան: Ղառղառն որ ջանդակները տեսավ, ամեն ինչ մտահան էրավ: Կայնավ ջանդակների վրեն ու կերավ: Նոհր տեսավ, որ դառդառը չեկավ, ըսավ. «Ղառղառն գնաց ընկավ ջանդակով: Ընդուրն որ չկանչենք, չի գա»: Ըսավ ու աղունիկին բաց թողեց: Ըսավ.

– Գնա՛ տես, աշխարկի դրուտենից ընձի խաբար բեր:

Աղունիկը գնաց, ման էկավ էս դին, էն դին: Տեսավ ահա՛ օդոռտ որ, դառդառը կայնած մե ջանդակի վրա, ուտըմ է ջանդակը: Ըսավ.

– Ախր մեր տերը քեզի դրկեց, որ դու խաբար բերես: Դու էկել ես ընկել էս ջանդակով:

Էդ վախտ, ըսըմ են, աղունիկը խոսըմ էր: Ամեն թռչունին համ հասկնըմ էր, համ հասկծնըմ: Ղառղառը տեսավ, որ աղունիկը տեսավ իրան ջանդակ ուտելը, ըսավ. «Էսի կերտա մեր տիրոջը կըսե: Մեր տերը կբարկանա, ինչ էնեմ, ինչ չենեմ: Յավաշ, – ըսավ, – ըստուր լեզուն կտանեմ, որ չկրնանա բան խոսա, որ բան հասկծնե»: Մտածեց Ղառղառն ու ըսավ.

– Արի՛ մե մոտիկ, քու լեզուն պաքեմ, լավ է որ էկար, միտկս գցիր, ես մտահան էի էլե:

Աղունիկը միամիտ էր: Գնաց լեզուն հանեց: Ղառղառն հըմը աղունիկի լեզուն խաձեց ու կտռեց: Էլ աղունիկը չկոծավ խոսար, մե բան ըսեր, հասկածներ: Ըսավ. «Ես ըսման էրտամ, ինչ բըդի հասկծնեմ»: Գնաց, կտծով կանանչը պոկեց: կանանչը կտուծն առած գնաց: Տարավ, տվավ Նոհին: Նոհր հառծրավ ըսավ.

– Ինչ կար, ինչ չկար:

Աղունիկը լեզուն հանեց, նշանց տվավ, որ չեմ կոնա խոսա: Նոհր հասկծավ, որ դառդառը կտռել է աղունիկի լիզուն, որ չկոնա խաբար տա իրան էրածները:

Ըսավ.

– Հա՛, էն անիծածան է կտռե:

Ըսըմ են, էն վախտ Ղառղառի միսը ուտվըմ էր, Նոհն որ ըսավ

«անիծած», էն վախտվանից էլ միսը չի ուտվում: Ու Նոհը հասկծավ, որ աղունիկը խելածութեն է էրե, կանանչը բերել է, ի նշան, որ աշխարհից ջուրը ցամկել է: Կանանչը էլել է:

Նոհը թաղարուկ էր էնրմ իջնելու: Հրեշտակը էկավ, ըսավ.

– Նոհ, Տերն ըսավ. «Ինչպես մտար, էնպես ելար»:

– Հա՛, – ըսավ Նոհը:

Հրեշտակն ըսավ.

–Թող էղնի:

Էդ ըսելուն Նոհի ամենապզդի հառը ջուխտ էրեխա էր բերէ, Նոհը խաբար չէր: Հրեշտակն որ ըսավ «թող էղնի», հառսի քովեն բալույն էլ անհայտաճան.

– Վա՛ – վա՛յ, – խառնվան իրար:

Ըսին.

– Ի՛նչ է էղէ:

Ըսին.

– Ըշտը հառսի քովեն ջուխտ բալույն բեգյում էղան:

Նոհը որ իմծավ հառսի էրեխան ունենալը, շատ բարկածավ.

– Ես սուտ էղա, ամոտով էղա: Ես խոսկ էի տվե, որ ինչպես մոնիմ, էնպես ելնիմ: Իմ ըսածս ստեծիկ: Բալույներն էլ տարը տվեծիք:

Տիրոճը այսան էր, որ Նոհը խաբար չէր:

Ըսրմ են, որ ինչ տեսակ չար օձ էղնի՝ մառտ կփրկվի, հրմը Նոհի թոռներին ռաստ գալողը չի փրկվի, ընդոր հմար որ խաչապաշտի ծնունդ են: Հիվնդի տերն, որ հիվնդի հմար գիր է էնել տալըմ, ընդունք դիա թեզ էն գիրը փոզլմիշ են էնրմ: Հիվնդի տերն որ հիվնդի հմար մատաղ է էնրմ, մոմ է վառըմ, ընդունք (Նոհի թոռները) դիա թեզ են մատաղ էնրմ, մոմ վառըմ: Հիվանդուտենի առաջն առնըմ են, չեն թողըմ որ հիվանդը լավընա: Հիվանդին տանըմ են իրանց դավանանկին: Էս հիվանդը միշտ ընդունց խոսկովն է էղնըմ: Տունտեղ, կնիկ, էրեխա աշկերին չի երևըմ: Չեն ուզըմ հեչ մեկին տեսնին: Տեսնելուց զարկըմ են, ջառդըմ են: Կան չարօձ հիվանդներ, որ գրով, գրբածով լավըմ են: Կան չարօձ հիվանդներ, որ քանի գրի, գրբածի քցըմ են, ջրլխըլ դեղնըմ են, չեն փրկվըմ: Ըսրմ են, որ ընդունք Նոհի թոռների ձեռն են ընկե, ըդունծը փրկվել չկա:

Նոհը, որ իրան գերդաստանով ու վերծրած հետը տարած ամեն տեսակի անասունները ու կենդանիները, դշերն ու դշվորները, նորից առավ իջավ ցած: Տեսավ, որ աշխարկը մինակ իրանցն է մնածե, շատ տխրավ, շատ դառդ էրավ:

- Ժողովուրդը խելխտամայ էն էղե, – մտածեց, օր էս աշխարկը մենք բդի նորից լցնենկ և էդման էլ էղավ:

Նոյը էլի շարունակեց իրան ռանչպարուտենը: Նորից աշխարկը լծվավ ամեն տեսակ բարուտենով ու մատականծով, անասուններով ու կենդանիներով: Էլի աշխարկը շենածավ, էլի մատականծով լծվավ:

Աշուղ Ծաղկալի [19-րդ դ. վերջ – 20-րդ դ. սկիզբ], 881-890:

Բ. Ուլերն ու Նոյը:

Գրառվել է՝ 19-րդ դ. երկրորդ կես, Աշտարակում:

Գեղարվեստական մշակում:

- (Երեխաներ) Դե որ էդպես է, ասա տեսնենք՝ էն ինչ խորդուրորդ տեղ է երկնքում, հենց իմանաս մեր վերի արտի քարքարուտ ճանապարհը լինի, մանր ու մեծ աստղեր անկարգ, անկանոն շաղ են անցած¹:

- (Պապ) Էն մեր ուլերն են կրծոտել:

- Ո՞րտեղից բարձրացան:

- Մի ձմեռ շատ ձյուն էր եկել, խոտ չկար, որ ոչխարն արածի, մեր ուլերը ձյունի վրայով բարձրացան, կրծոտեցին...

- Հապա տատն ասում էր՝ իծանը որ կրծեցին, երկինքը պատտորվեց, ջուր թափվեց, ոչխարի սուրուն խեղդվեց:

- Բաս ինչպես ջրի առաջն առան:

- Աստված կյանք տա փալան կարող Նոյ պապին:

- Ի՞նչ արեց:

- Փալանը դեն ձգեց, մախաթն առավ, Մասիսի գլուխը բարձրացավ ու երկնքի ձղվածքը պինդ կարեց. այ, տեսնո՞ւմ եք, էն մանր աստղերը մախաթի ծակած տեղերն են:

Պոռշյան 1984, 536-537:

¹ Խոսքը Ծիր Կաթինի մասին է:

Գ. Ուղտաքար

Գրառվել է՝ 1963 թ. ԼՂԻՄ Մարտակերտի շրջ. Չլդրան գ. (այժմ՝ Արցախ):
Բանասաց՝ Սուրեն Մուսայեյան (ծննդ. տվյալներ չկան):

Քյոհնամ վրխտեն վար ճիրհեղեղն իլալ ամ, ըտեղետ հողերը, քարերը ճո՛ւրը լոխ քշալ ամ տարալ, իսկ էտ քրերծը պեցո՛ւր ա իլալ, կրեցալ չի քշի: Ճո՛ւրը վար ցմաքել ա, տա մնացալ ա ո՛ւրան տըղըր, անումն էլ տիրալ ըն Ուղտաքար:

Առաքելյան (դաշտ.) 1963, 171:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախերգանք

Թեև բանահավաքը նշել է այս երգը որպես ժողովրդական, սակայն հավանաբար այն աշուղական է: Դատելով ստեղծագործության նախավերջին տողից՝ ստեղծողը Հովհաննեսն է: Երգի վերջում հեղինակի կողմից սեփական անունը նշելը ևս խոսում է դրա աշուղական լինելու օգտին: Առաջին անգամ հրատարակվել է՝ Ժամկոչյան 2012, 161-164:

Դրվագ I

1. Բ. Այս ավանդագրույցը Ա. Ղանալանյանը տպագրել է՝ Արցախի բարբառը փոխելով գրականի: Մեզ չհաջողվեց գտնել այս գրույցի բնօրինակը, ուստի ներկայացնում ենք այն ըստ Ղանալանյանի:

2. Ա. Այս ավանդագրույցում խոսվում է նաև լեռների մասին, որոնց շարքը տե՛ս հաջորդ՝ երկրորդ դրվագում:

Բ. «Վարպետները գիշեր-ցերեկ աշխատում էին: Նրանց գործիքները ձայն էին հանում և մարդոց ապաշխարության հրավիրում: Բայց անօգուտ» – Այս մասը հայտնի է նաև որպես առանձին հավատալիք. «Էն գահ (ժամանակ) օր նաճրներ (հիւսներ) գտապան կը շինեն, նաճարներու հաջաթները (գործիք) ձէն կը հանեն Աստծու հրամանավ – թէ ջրհեղեղ պիտի էղնի, ամա՛ մարդ ականջ չըր էնի» [Բենսէ, 1900, 28]: Առաջին անգամ հրատարակվել է՝ Ժամկոչյան 2012, 164:

Գ. «Ամեն մեկ սուրբ կենդանիներեն յոթ-յոթ ճուվթ...» – հետաքրքիր է, որ սա ուղղակի համընկնում է Ծննդոցի մյուս խմբագրության հատվածի հետ, որտեղ ասվում է, որ Նոյը տապան վերցնի մաքուր կենդանիներից և թռչուններից յոթ զույգ, իսկ անմաքուրներից՝ մեկ զույգ [Ծննդ. Է. 2-4]: Տե՛ս նաև «Աստվածաշնչյան և ժողովրդական պատումների համեմատություն» ենթավերնագրի ներքո:

Փաստորեն Մասիսն ու Արագածը մեկ լեռ է ընկալվում՝ Արագած-Մասիս:

Ե. Առաջին անգամ հրատարակվել է՝ Ժամկոչյան 2012, 175:

Դրվագ II

Մուտք: Այս ավանդագրույցում չափազանց հետաքրքիր է Մասիսը որպես հրեղեն թուր ներկայացնելը, որով հրեշտակը փակում

է դրախտի մուտքը: Սա որոշ առումով համապատասխանում է Ծննդոց գրքի հատվածին. «Եւ արտաքսեց Ադամին. և Եդէմի պարտէզի դիմացի կողմիցը դրաւ Քէրովբէներին և ամեն կողմ դարձող բոցեղէն սուրը՝ կենաց ծառի ձանապարհը պահելու համար» [Ծննդ. Գ., 21]:

Եթէ գերմաներեն բնօրինակում ենթատեքստում է հասկացվում Մասիսի վրա տապանի իջման պատճառը. «...բայց հենց այդ պատճառով է, որ մարդկությունը երկրորդ անգամ պետք է դուրս գար այս կետից...», ապա անգլերեն [von Haxthausen 1854, 283–284] և ռուսերեն [ФОНЪ-Гакстгаузен 1857, ч. II, 1–2] թարգմանություններում ուղղակի նշվում է, որ Մասիսի հրեղեն–թուր լինելն էր պատճառը, որ Նոյը պետք է հանգրվաներ Մասիսի վրա և մարդկությունը երկրորդ անգամ պետք է այդ կետից դուրս գար:

1. Ա-Ե. Միփան լեռը գտնվում է Վանա լճից հյուսիս, Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր գագաթներից է: Հայտնի է նաև Նեխ Մասիք անվամբ: Գրգուռ լեռը գտնվում է Վանա լճից արևմուտք:

Ա և Բ. Կարծես նույն գրույցն են, Գ. Սրվանձոյանի և Բենսեի իրարից մի փոքր տարբերվող հաղորդմամբ:

Ե 2. Գրեթե կրկնում է նախորդը, սակայն ավելի գեղարվեստական–բանաստեղծական է ներկայացված և հետաքրքիր է Գրգուռի մակդիրը՝ «Տիրաշէն»: Զրույցը քաղել ենք Հոլիվուդում 2011 թ. հուլիսի 16-ին Վարդավառի կիրակի օրը Կալիֆորնիայի Տարոնի հայրենակցական միության կազմակերպած «Տարոնի տոհմիկ օր» միջոցառման մասին նյութից: Կարո Հակոբյանը հանդես է եկել ճանով, որտեղ և ներկայացրել է այս տարբերակը:

Զ. Մարաթուկը (Մարութա սար) սրբազան լեռ է Սասունում:

Է. Առնոսը լեռ է Հայկական Տավրոսի արևելյան հատվածում՝ Անձևաց լեռներում՝ Մոկս և Շատախ գավառների սահմանագլխին:

Ը. «Գյամի» թրք. նշանակում է «նավ», այստեղից էլ սարի անունը: Տապանասարը լեռ է Գողթան գավառի Մարվանիս գյուղի մոտ, Կապուտջուղի բարձունքներից է:

2. Ա. Երեմիա Քյոնյուրձեանի կազմած քարտեզում, որտեղ նշված են ամբողջ Հայաստանի սրբավայրերը և ուխտատեղիները՝ թիվ 753 տակ նշված է Արձիեշ լեռը որպես հայտնի սրբավայր (Արգեոս լեռն է, գտնվում է Կեսարիայից հարավ): Սակայն չգիտենք, արդյո՞ք սրբավայրի պատճառն այս ավանդությունն է, ըստ որի ջրհեղեղից հետո Արձեշ լեռան կատարն է առաջինը ցամաքել:

Գ. Գոհանամը Սեպուի լեռան մյուս անվանումն է (տե՛ս Հալաջյան 1973, 21): Գտնվում է Դարանաղի (Կամախ) գավառում, Երզնկայի դաշտի արևմտյան կողմում: Հայաստանի սրբազան լեռներից մեկն է: Սրա հարավային լանջին էր գտնվում Թորդան գյուղը:

Ե. Երկու աղբյուր է նշված, քանի որ երկու հաղորդումն էլ չեն տարբերվում, ռուս հեղինակինը ռուսերենով կրկնում է սույն գրույցը:

Զ 1. Նավս (Նավսալեռ) գտնվում է Կապանի Ծավ գյուղից հարավ-արևելք, Մեղրու լեռնաշղթայում:

Զ 2. Ներսես անունով արհեստավոր, որ Նոյան տապանի կառուցողն է, ոչ մի այլ աղբյուրում մեզ չհաջողվեց գտնել:

Զ 3. Այս ավանդագրույցի վերջին հատվածը՝ «որովհետև ... » բառից սկսած, Խանգաղյանի նշմամբ, Գրիգոր Տաթևացու խոսքերն են: Խանգաղյանի պնդմամբ, նա այդ «առասպելը» լսել է այդ կողմերում (Կապան), ինչպես և Տաթևացին [Խանգաղյան 1980, 218]: Քանի որ Խանգաղյանն այս գրույցը պատմում է Նավս լեռնագագաթի վերաբերյալ, այդ իսկ պատճառով նպատակահարմար գտանք գետեղել այս պատումը վիպաշարի մեջ, այն էլ Նավս լեռնագագաթի անվան ներքո:

Է. Նպատ լեռը գտնվում է Ծաղկանց լեռներում, որի ամենաբարձր գագաթն է Թոնդրակը:

Ը. Սուկավետ լեռը (հայտնի է նաև Քոշադաղ անվամբ) գտնվում է Հայկական պար լեռնաշղթայի արևմուտքում, Ալաշկերտի դաշտում: Ջրաբաշխ լեռների ամենաբարձր գագաթն է:

Հակոբյանը, ում գրքից քաղել ենք այս ավանդությունը, նաև նշում է. «Հրաման չկա, որ հասարակ մահկանացուն ելնի Մասիսի, Սիսի, Սիփանի և Սուկավետի գլուխները [Հակոբյան 1974, 252]: Գուցե՞ պատճառներից մեկը Նոյան տապանի ճամփորդությունն է այս լեռների գագաթներով [տե՛ս Դրվագ II, Ա-Ե]:

Հակոբյանը պատմում է նաև բանասացների մասին, սակայն չի նշում, թե ո՞վ կոնկրետ ինչ է պատմել, այդ իսկ պատճառով դժվար է նշել սույն ավանդության բանասացին:

Դրվագ III

Ա. Արկ ուռի – Ակոռի ստուգաբանությունը հայտնի է Գրիգոր Մագիստրոսից: Իր նամակներից մեկում, խոսելով խաղողի որթի առաջին տնկողի մասին Մագիստրոսն, ի թիվս այլ առասպելների, հիշատակում է. «Բայց առ Հրէից և յաստուածեղէն մատենից նաև

ի Քաղդեաց զՔսիւսութիւնս իմանանք զորթ տնկեալ» (Հետաքրքիր է, որ վկայակոչելով Աստվածաշունչը, նշում է Քսիւսութիւնս, այլ ոչ թէ Նոյ): Շարունակելով. «Եւ ի ծերոց առասպելաբանէն ասել յԱկոռի, և ստուգաբանէն եթէ Արկ ուռի»: Այսինքն նա լսել է *ծերերի կողմից պատմվող առասպելներից* (ժողովրդից), որ Ակոռին ստուգաբանում են որպէս Արկ ուռի – խաղողի որթ տնկել: Հետագա շարադրանքից պարզ է դառնում, որ Մագիստրոսը համաձայն չէ դրա հետ, այլ իր կարծիքով նախապէս եղել է այգին, իսկ Նոյը, ջրհեղեղը նվազելուց հետո, մնացած խաղողի ծառից ծայրը կտրել է և նորից տնկել խաղողի այգին [Գրիգոր Մագիստրոս 1910, 89–90]: Ստացվում է, որ Թաղիադյանը պատմում է Մագիստրոսի՝ XI դ. հիշատակած ավանդությունը:

Ե. Հայերեն թարգմանությամբ այս ավանդագրույցները լույս են տեսել «Արարատ» ամսագրում 1873 թ.: Ներկայացնում ենք տպագրված թարգմանությունը. «Աւանդութիւնն ասէ թէ՛յորժամ Նոյ յետ ջրհեղեղին ի լեռնէն հայեցաւ տեսանել զցամաք, ետես զայս տեղի և աղաղակեաց “Երևի”. և աստի տեղիս էառ զայս անուն: Յամենայն ուրեք յայտոսիկ կողմանս բանք են զՆոյէ. Պարսիկք անուանեն զԱրարատ “Կուզի-Նուհ” (լեառն Նոյի): Հայք, Մասիս, այս ինքն մայր աշխարհի, երկիր, որ առ Արեւելեան ոտիւք լերինն ասի Առ նոյտոն, վասն զի աստ զառաջինն մխեցան յերկիր ոտք նորա. գիւղն, Ակոռի, այս ինքն Արկ-ուռի, ուր տնկեաց զորթ խաղողոյ, զբերեալն ընդ իւր յառաջնոյ աշխարհէն. աւանդի թէ որթք խաղողոյ տեսանին մինչ ցարդ, բայց ոչ բերեն պտուղ սակս անօրէնութեան մարդկան և ի տեղոջ, ուր սեղանն էր Նոյի, հիմնեալ է եկեղեցի. քաղաքն Նախիջևան նշանակէ տեղի առաջին իջևանելոյն Նոյի. ... Մարանդ, մայր-անդ, այս ինքն կին Նոյի» [Ֆոն Հաքսթաուզեն 1873, 93]:

Ինչպէս երևում է, հայերեն թարգմանությունը թերի է, գերմաներեն բնօրինակում ասվում է, որ Նոյը խաղողը բերել էր դրախտից, մինչդեռ հայերենում նշված է «յառաջնոյ աշխարհէն»: Անգլերեն թարգմանության մեջ նույնպէս նշված է Paradise՝ «դրախտ» բառը [von Haxthausen 1854, 193], իսկ ահա ռուսերեն թարգմանության մեջ հայերենի նման գրված է «изъ прежняго міра» [фонъ-Гакстгаузен 1857, ч. 1, 164]: Հավանաբար հայերեն թարգմանությունը կատարվել է ռուսերեն թարգմանությունից:

Խաղողը դրախտից բերելու հանգամանքը կարևոր է Նոյի կողմից խողողուտ տնկելու առումով, մանրամասն տե՛ս ուսումնասիրության հատվածը:

Ը. Տեն նաև Դրվագ III, Ե., Դրվագ IV, Գ₁₋₂:

Թ 2. Նույնը հայտնում են Ի. Շոպենը [Шопен 1852, 318] և Ն. Տեր-Աւետիքեանը [Տեր-Աւետիքեան 1885, 398]՝ մեկ-երկու տողով:

Ժ. Հավանաբար, բանասացը, օգտագործելով «սեպագիր գրերը», կարծում է թե դրանք են ամենահին գրերը և Նոյի ժամանակ միայն դրանցով կարելի էր գրել:

Դրվագ IV

Ա. Չշփոթել Միեթի դուռ – Ագռավու քարի հետ: Դատելով Մ. Թաղիադյանի նշված տվյալներից, այս Ագրավուց քարը պետք է որ լինի Արևելյան Տիգրիսի, Կորդուքի, Ուրմիա լճի և Սալմաստ գավառի միջև ընկած տարածքներում:

Բ 2. Այստեղ՝ Նոյան տապան ասելով՝ հեղինակը նկատի ունի Նոյի գերեզմանը:

Գ. Գտնվում է Քաջարանից ձախ, Ձյունահարս լեռան քարե գուռերի մեջ: Ա. Ղանալանյանն այս ավանդությունը քաղել է Ս. Խանգադյանի «Քաջարան» վեպից [Ս. Խանգադյան 1965, 68], սակայն երկրորդ մասը՝ երաշտի ժամանակ կատարվող ուխտագնացությունը դուրս է թողել տեքստից և տարել է իր «Ավանդապատում» գրքի վերջի ծանոթագրությունների բաժինը [Ղանալանյան (կազմ.) 1969, 428]:

Դրվագ V

Ա. Թեև Վահան վարդապետ Տեր-Մինասյանը հղում է Հաճախապատումներին կամ Ժողովածուներին, նաև շարադրում է իր բառերով, սակայն թվում է, որ ժողովրդական գրույցն էլ է նշմարվում, ուստի նպատակահարմար եղավ այս առասպելը ևս ընդգրկել վիպաշարի մեջ:

Ե. Ունի ենթավերնագիր՝ աւանդավէպ:

Զ 1. Ունի ենթավերնագիր՝ գրոյց:

Զ 4. Լեռների հատվածը տե՛ս նաև Դրվագ I, Գ. և Դ.: Հետքրքիր է, որ Նոյը կոչվում է *նավապետ*, ոչ թե *նահապետ*: Սա կարող է լինել ինչպես նպատակահարմար, քանի որ իրոք Նոյը տապանի յուրօրինակ նավապետն էր, այնպես էլ «նահապետ» բառի մոռացման կամ հնչյունափոխային աղավաղման հետևանքով՝ տրամաբանական հետևությանը «նավապետ» բառի ի հայտ գալուն (տարբերությունը մի հնչյուն է՝ «հ» և «վ»):

Առաջին անգամ հրատարակվել է՝ Վարդանյան 2003, 38:

Է 1-2. Թեև այս գրույցներում մի քանի իմաստային դրվագներ կան, սակայն թվում է թե կենտրոնականն ագռավի և աղավնու հակասությունն է, ուստի նպատակահարմար համարվեց տեղադրել այս դրվագի ներքո:

Դրվագ VI

Գ. Այս գրույցում Քրիստոս ոչ միայն խաղողի որթն է տալիս աղավնուն, այլ նաև գինի է վերցնում և պատարագի բանաձևն է հաղորդում: Եթե հաշվի առնենք, որ աղավնին էլ Սուրբ Հոգին է, ապա այս գրույցը լիովին կհամապատասխանի Ս. Հովհաննես Օձնեցու հետևյալ խոսքերին. «... Հոգին սուրբ մտանելով՝ ոչ սակաւ ի տապանէն հանէ, այլ զբոլոր տիեզերս յերկրէ յերկինս հանէ: Ի ցամաքել ջրոյն՝ մատոյց Նոյ պատարագ Աստուծոյ. և ի ցամաքել մեղացն ի մէնջ՝ լինիմք սեղան Աստուծոյ, և ի սուրբ մտաց պատարագ ընդունելի մատուցանենք Աստուծոյ» [Յովհան Աւձնեցի 1833, 136]:

Դրվագ VII

Ա 2. Այս գրույցը գրական լեզվով և ավելի համառոտ ներկայացնում է Ա. Ահարոնյանը. «Երբ Նոյը տապանում էր, նրա որդիներից մեկը չկարողացավ զգաստ մնալ և իր կնոջ անկողինը մտավ: Այս սիրուց մի աղջիկ ծնվեց: Ջրերն իջնելուց հետո Նոյն իր զավակներով դուրս եկավ տապանից, իսկ փոքրիկ աղջիկը մնաց այնտեղ: Հրեշտակը Նոյին հարցրեց.

- Տապանում էլ մարդ մնաց:
- Ոչ, - պատասխանեց Նոյը:
- Եթե մնաց, թող աներևույթ լինի:

Փոքրիկ աղջիկն անմիջապես աներևույթ եղավ ու դարձավ փերի: Այն ժամանակից նա ընկել է աշխարհ, տղամարդկանց քնած ժամին նրանց սերն է վայելում և իր ցեղը բազմացնում» [Ահարոնյան 1939, № 2, 90]:

Բ. Բնագիրը վերնագրված է՝ «Շուտա և Դովլաթ» և ունի ենթավերնագիր՝ ժողովրդական հավատալիք:

Դրվագ VIII

Ե. Այս գրույցում Քամի և ձիթենու սևությունն ու ամոթը բացատրվում է մեկ այլ ավանդությանը, որը գրառվել է Բիթլիսում. (Իր հորը՝ Նոյին ծաղրելու համար). «Երբ Նոյ անիծեց իր Քամ տղան, անոր երեսը սևցաւ» [Թուխ-Կոպո 1898, № 23, 443]:

Ձ. Տես նաև Դրվագ V, Ձ 1.:

Դրվագ IX

Ա. 1 Այս ավանդագրույցը Ա. Ղանալանյանը տպագրել է Քղիի բարբառը փոխելով գրականի կամ արդեն մշակված են իրեն տրամադրել նյութը: Մեզ չհաջողվեց գտնել այս գրույցի բնօրինակը, ուստի ներկայացնում ենք այն ըստ Ղանալանյանի:

Բ 1-3. Երեք տարբերակներից առավել ամբողջականն առաջինն է, որտեղ բացատրվում են մարդկային տեսակները, «հալալ կաթնակեր» տեսակը ուղիղ սերված է Նոյից:

Բ 2. Ուշագրավ է, որ Նոյը տապան է մտնում ոչ թե երեք որդիների և հարսների, այլ երեք դուստրերի և փեսաների հետ, որոնցից էլ առաջանալու են հետագայում մարդկային երեք տեսակները, այլ ոչ թե ցեղերը:

Բ 4. Այս գրույցի իրադարձությունները նույնն են, ինչ նախորդ երեքինը, դեպքն էլ է տեղի ունենում ջրհեղեղից անմիջապես հետո, սակայն հայրը Նոյը չէ, թեև հիշատակվում է «Նոյի ջրհեղեղը»:

Դրվագ X

Ա 1. Артемий Араратский (Богданов Арутюн Араратский, Араратян Арутюн) (1774–1831) – հիշատակագիր, հասարակական գործիչ, ճանապարհորդ: Ծնվել է Վաղարշապատում:

«... Построенному мыщпинским архиепископом св. Иаковом около 1300 лет на самой подошве горы ...» – Բնականաբար Ս. Հակոբ Մծբնա հայրապետը չէր կարող այդ ժամանակ կառուցել Ակոռիի վանքը:

Հավելված

Ա. Տվյալ պատումի դեպքում կարող է լինել երկու ենթադրություն: Նախ այն բանասաց չէր կարող ունենալ, քանի որ աշուղ Ծաղկալին Նոյի մասին իրեն հայտնի գրույցները միավորել է մեկ այուժեի ներքո: Նա ավելի «համարձակ» է եղել և, ունենալով ստեղծագործելու շնորհ (աշուղի կոչմամբ), բոլոր գրույցները բերել է ընդհանուր բարբառի: Երկրորդ՝ իրականում եղել է Նոյի և համաշխարհային ջրհեղեղի մասին ժողովրդական ընդարձակ վեպ, որն էլ մշակել է աշուղ Ծաղկալին: Տես նաև առաջաբանը: Առաջին անգամ հրատարակվել է՝ Ժամկոչյան 2012, 165–172:

Բ. Թեև առկա են և՛ Նոյը, և՛ Մասիս լեռը, սակայն լրիվ այլ առասպել է, հավանաբար տեղական: Խոսքն էլ կարծես ոչ թե համաշխարհային ջրհեղեղի մասին է, այլ տեղային, քանի որ խեղդվել է

«գուտ» ոչխարի սուրուն, այլ ոչ թե ամբողջ աշխարհն է ջրով լցվել:

Գ. Ուղտաքար՝ լեռ, գտնվում է Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղի մոտ:

**ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ
ՆՈՅ ՆԱՀԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՎԻՊԱՇԱՐԸ
(Հետազոտություն)**

Տապանակիր լեռան հարցը

Նոյան տապանի՝ Արարատյան (Հայաստանի) լեռներում հանգրվանելու աստվածաշնչյան պատմությունը չափազանց սիրված է եղել Արևելքի և Արևմուտքի քրիստոնյա և մուսուլման ժողովուրդների մեջ, անմասն չի մնացել նաև հայ ժողովուրդը:

Հին Կտակարանի Նոյի և ջրհեղեղի պատմությունը միջագետքյան ավանդության մի տարբերակն է¹: Հետաքրքրական է, որ Բերոսոսի պատմած Քսիսուստրոսի մասին ջրհեղեղյան պատմությունը, որը մեջբերում է Մովսես Խորենացին (Պատմութիւն հայոց, Ա., գլ. Դ. և Զ.), Ռ. Գրեյվսը համարում էր հայկական առասպել²:

Նոյ նահապետի և ջրհեղեղի աստվածաշնչյան պատմության ամենավիճելի կետը Արարատի լեռներն են: Շուրջ երկու դար կրքերը չեն հանդարտվում, թե ո՞ր լեռան վրա է իրականում հանգրվանել Նոյան տապանը՝ Կորդվաց լեռներում, թե՞ Մասիսի վրա: Հայկական մի շարք գրավոր աղբյուրների վկայությամբ Նոյան տապանն իջել է Կորդուքի լեռներում՝ Փավստոս Բուզանդ³, Մովսես Խորենացի (ըստ Բերոսոսի), Թովմա Արծրունի⁴ և ուրիշներ: Սակայն հետազոտում որպես Նոյան տապանի հանգրվան սկսում է դիտարկվել Մասիս լեռը, ինչն այսօր գերակայում է⁵:

¹ Միջագետքյան, հինկտակարանյան, առաջավորասիական, աշխարհի հայտնի այլ ջրհեղեղների առասպելական պատմությունների մասին տե՛ս Փրօթեր 1985, 63-159:

² Грейвс 1992, 104.

³ Փաւստոս Բիւզանդ 1987, 36-40:

⁴ Թովմա Արծրունի 1999, 36:

⁵ Առավել մանրամասն այս հարցին անրադարձել են. Шопенъ 1852; Паткановъ 1875; Murad 1901; Ինգլիզեան 1947, 5-175: Մուշեղյան 2003, 3-39: Պետրոսյան

Քանի որ մեր խնդիրը չէ պարզել, թե իրականում ո՞ր լեռն է հանդիսանում Նոյան տապանի հանգրվանը, և ինքնին այդ հարցն այնքան էլ էական չէ՝ գոնե ժողովրդական բանահյուսության դեպքում: Մանավանդ որ ժողովրդական պատումներում՝ այդ լեռը միանշանակ Մասիսն է (ի դեպ, այն երբեք, գոնե ժողովուրդի կողմից, չի անվանվում Արարատ):

Կան որոշակի հիմքեր ենթադրելու, որ Մասիսի գագաթին տապանի հանգրվանելու ավանդությունը գոյություն է ունեցել վաղ ժամանակներից: Հետաքրքիր է, որ Մովսես Խորենացին իր Հայոց Պատմության մեջ հետևողականորեն խուսափում է Նոյան տապանի իջևանելու վայրը նշելուց (Կորդվաց լեռների մասը նա մեջբերում է Բերոսոսից՝ չտալով իր կարծիքը): Կարելի է ենթադրել, որ Խորենացին, լինելով հոգևորական, գիտեր եկեղեցական (Կորդվաց լեռները) և ժողովրդական (Մասիս լեռը) ավանդությունները, այդ իսկ պատճառով չէր ցանկանում առավելություն տալ ավանդություններից որևէ մեկին:

Մասիսի հետ կապված ավանդույթի համատեքստում հետաքրքիր է Փլավիոսի վկայությունը. «...Այնուհետև, երբ տապանը կանգ առավ Հայաստանում գտնվող մի լեռան վրա... Նոքոսն էլ իր գերդաստանով դուրս գալով, աստծուն զոհեր մատուցեց և խնջույք արեց ընտանիքի անդամների համար: Հայերը մինչև օրս այդ վայրը կոչում են իջնելու տեղ, քանի որ այնտեղ է փրկվել տապանը, և մինչև օրս այդ վայրում ցույց են տալիս դրա բեկորները...»: Փլավիոսը վկայակոչում է նաև Նիկողայոս Դամասկացուն, ըստ որի Նոյան տապանը հանգրվանել է Հայաստանի Բարիս լեռան վրա (այս լեռն այդպես էլ հայտնի չէ թե՛ որն է), Բերոսոսին, ըստ որի Կորդուք լեռն է (Բերոսոսը նաև Խորենացու աղբյուրն է), եգիպտացի (Կարդիացի) Հիերոնիմոսին՝ Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակակցի հիշատակությունները¹: Փաստորեն Փլավիոսը նշում է մի վայր, որը հայերն անվանում են «իջնելու տեղ», այսինքն՝ Նախիջևան, բնականաբար լեռն էլ կլինի Մասիսը:

Դ. Սարգսյանը, հիմնվելով Հովսեփոս Փլավիոսի երկում հիշա-

2005, 91-99: Սիրոնյան 2022, 29-42: Նշված աշխատանքներում կարելի է գտնել նաև հարցին վերաբերող մեծածավալ գրականություն:

¹ Иосиф Флавий 1999, т. 1, 17-18 (1900 թ. Գերման Գ. Գենկելի կատարած թարգմանության (համարվում է լավագույն ռուսերեն թարգմանությունը) հրատարակության վերատպություն); Հովսեփոս Փլավիոս 1976, 54-55:

տակվող Նիկողայոս Դամասկացու տեղեկության վրա, կարծում է, թե մ.թ.ա. 1-ին դ. արդեն իսկ կար Նոյան տապանը Մասիսի վրա հանգրվանելու ավանդությունը¹: Որոշ հետազոտողներ կարծում են, թե շատ հավանական է, որ այս պատմությունը հայերին ծանոթ է եղել նախքան Աստվածաշնչին ծանոթանալը՝ հավանաբար դեռևս խուռիական, հետագայում նաև Վանի թագավորության ժամանակաշրջանից²:

Գոյություն է ունեցել արքադական «Գիլգամեշի մասին» էպոսի խուռիական թարգմանությունը (մ.թ.ա. 14-րդ դ.), որը բավականին տարբերվել է արքադականից, կարելի ասել՝ ավելի շուտ եղել է փոխադրություն, Ի. Դյակոնովի բնորոշմամբ՝ նույն թեմայով այլ մի պոեմ³: Մ.թ.ա. 8-րդ դարով է թվագրվում Արգիշտիխինիլիում (Ուրարտու) հայտնաբերված էլամերեն լեզվով գրված երեք կավե տախտակները Գիլգամեշի մասին, որոնք թատերական ներկայացման տեքստեր են՝ սցենար⁴:

4-րդ դ. լատին նշանավոր աստվածաբան և մեկնիչ Հիերոնիմուսը (342-420) գրում էր, որ *«Ադրամեյլեք և Սարասար փախան Արարատ երկիրը, որ հասկացվում է Հայաստան... Արարատը, բացի այդ, դաշտային նահանգ է Հայաստանում, որի միջով հոսում է Արաքսը, անհավասարալի պտղաբերությամբ հայրնի՝ Տավրոսի լեռների ստորոտում, որ մինչև այսօր է ձգվում: Ուրեմն և փապանը, որի մեջ փրկվել է Նոյն իր զավակներով, ջրհեղեղից փարվելով իջել է ոչ թե ընդհանրապես, Արարատ կոչվող Հայաստանի լեռներում, այլ Տավրոսի ամենաբարձր գագաթին, որ վեր է խոյանում Արարատ դաշտերի վրա»*⁵:

Ս. Գրիգոր Տաթևացին «Յճր աշխարհի է տապանն» հարցին արդեն միանշանակ նշում է Մասիս լեռը. *«Ասեն թէ՛ գոն այլ հոմանուն Մասիս և Արարատ. որպէս Կորդոսաց լեռոն և ՚ի Պաղէսարին և ՚ի Գամիրս: Այլ ճշմարտութիւն յայտնապէս ՚ի մերս Մասիս ցոցանէ: Նախ՝ զի սա Արարատ լսի: Երկրորդ՝ զի ոչ ոք կարէ ելանել և փեսանել: Երրորդ՝ նշանն սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետին. և*

¹ Սարգսյան 2001, 274-275:

² Հնայական 1992, 130-131: Մուշեղյան 2003, 3:

³ Дьяконов 1961, 117-118.

⁴ Дьяконов, Янковская 1989, 55-62.

⁵ Մուշեղյան 2003, 31: Այսինքն՝ Մասիսի գագաթին:

գեօղն Արկուռի՝ ուր փնկեաց այգի. և քաղաքն Նախիջեան, ուր ինքն Նոյ հախնլգոցեալ է ՚ի փապանի»¹:

Ս. Գրիգոր Տաթևացու պնդումը, որ տապանն իջել է Մասիսի վրա, հիմնված է, ըստ Լ. Խաչիկյանի՝ Եղիշեի «Արարածացոց մեկնութիւն» երկի վրա, որից նույնպես քաղվածք է արել Վարդան Արևելցին. «Արարապոս լեառն ոմանք զԿորդուացն ասեն, այլ ճշմարտութիւն յայտնի առնէ զնա ի Մասիս գոլ: Գոյ ի Պաղեստինն և ի Գամիրս Արարապ, այլ մերս Արարապ»²:

Իրականում «շփոթը» (Կորդուք թե՛ Մասիս), եթե կարելի է այդպես ասել, տեղի է ունեցել գրեթե միաժամանակ: Գալուստ Տեր-Մկրտչյանը, որը Կորդվաց լեռների կողմնակիցն է՝ որպես ավելի հին ավանդույթի, նշում է, որ Արարադ և Արարատ անվանումների խառնաշփոթը սկսվել է դեռևս Մ. Էմինի կողմից Մովսես Խորենացու Պատմության թարգմանությունից: Տեր-Մկրտչյանը մեջբերում է VII դ. հեղինակ Տիրանուն վարդապետի գրվածքից. «ԼԳ. Տապանն Նոյի ի Կորդուս ի Սարարադ լերինն է, և ո՛չ ի Մասիս. ի Մասեաց զնացք աւորց քսանից, աւելի կամ պակաս. որպէս կայ այդ ոչ ի գրի վասն Թմանուն³ լերինն, որ թարգմանի ութ, որ էին ի փապանին ի ձեռակերպին Նոյի. որում հանդերձաւ Յակոբ յԱսորոց գալ փեսանել»⁴: Այս գրվածքից պարզ է դառնում, որ արդեն VII դ. վիճում էին, թե ո՞ր ավանդույթն է ավելի ճշմարիտ:

Մենք հակված ենք այն մտքին, որ իրականում Նոյան տաապանի և ջրհեղեղի մասին առասպելը վերաբերում է թե՛ Կորդվաց լեռներին, թե՛ Մասիսին, պարզապես խոսքը տարբեր ավանդությունների մասին է: Հայկական գրավոր այն աղբյուրները (Փավստոս Բուզանդ, Թովմա Արծրունի), որոնք Նոյան տապանի հանգրվան էին համարում Կորդվաց լեռները, հետևում էին միջագետքյան-ա-

¹ Գրիգոր Տաթևացի 1729, 294-295:

² Խաչիկյան 1992 245:

³ Կորդուքի Մասիուս լեռան արաբերեն անվանումն է: Այս ավանդությունը հայտնի է Մովսես Խորենացու «Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց» երկից. «Եւ վասն յայտնի անուանն նոքա (Ս. Հռիփսիմեանք – Կ. Հ.) գաղտ գնացեալ ընդ մէջ Կորդուաց ընդ լեառն Սողոմի ի բերկրացոց գաւառին... Բայց այսր լերին ասի յԱսորոց, թէ ի նուագել ջուրցն հեղեղաց, եհաս տապանն ի գլուխ լերինն, որ է Սարարադայ. և ընդ մէջ անցեալ սղոցածուկնն արգելու զնան. և անուն քաղաքագեղջն կոչեցաւ Թըմնիս, այսինքն թէ ութ ոգիք ելին ի տապանէն» [Մովսէս Խորենացի 1865, 300-301]:

⁴ Տեր-Մկրտչյան 1979, 119-120:

սորական–հինկտակարանյան ավանդությանը, իսկ ահա մյուս աղբյուրներն (Եղիշե, Վարդան Արևելցի, Գրիգոր Տաթևացի) արդեն հետևում են տեղական ավանդությանը, որի դեպքում Նոյան տապանի հանգրվան լեռը Մասիսն է¹:

Ուսումնասիրելով հայ ժողովրդի մեջ տարածված՝ համաշխարհային ջրհեղեղի և Նոյ նահապետի հետ կապված ավանդազրույցները՝ կարելի է եզրակացնել, որ դրանք ինչպես առանձին–առանձին, այնպես էլ միասնաբար ավարտուն և տրամաբանական են, ուստի հնարավոր է ենթադրել, որ եղել է ջրհեղեղի մասին տեղական՝ հայկական ավանդություն²:

Լիլիթ Սիմոնյանը, մանրամասն դիտարկելով Նոյան տապանի իջման լեռը՝ Կորդուք թե՛ Մասիս, գալիս է այն եզրակացության, որ Նոյան տապանի և ջրհեղեղի մասին ժողովրդական պատումները տեղական առասպելաբանություն են և կապված են Նախիջևանի ու Գողթնի հետ. «*Այն սերտորեն կապված է Հայաստանի աշխարհագրության և պատմության, ինչպես նաև բազմաթիվ այլ խորհրդանշական ընկալումների, կենցաղի, հավատալիքների, առասպելների, ավանդական պատկերացումների հետ, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ անկախ Աստվածաշնչից, գոնե Նախիջևանի և Գողթնի տարածքում գոյություն է ունեցել ինքնուրույն առասպելաբանություն ջրհեղեղի մասին, որն էլ Հայոց դարձից հետո հարմարեցվել է Աստվածաշնչին և դրանում հիշարակվող հերոսին՝ Նոյին*»³:

Մանուկ Աբեղյանը, սահմանելով և հանգամանալից բացատրելով «վեպ» եզրը, նշում է, որ ժամանակի ընթացքում հնի վրա ավելանում է նորը և հաճախ ամենից ավելի տուժում են հերոսների անունները⁴: Այսինքն՝ հերոսի անվան փոփոխությունը, երբ հին

¹ Նոյան տապանի ավանդության երկու տարբերակները, կապված Կորդվաց լեռների և Մասիսի հետ, կարող են նաև հասցվել երկու բացարձակ հակադրությունների: Ա. Մուշեղյանն իր հոդվածում [Մուշեղյան, 2003, 14–30] ասորիներին ուղղակիորեն մեղադրում է Նոյան տապանի իջման վայրի ավանդության կեղծման մեջ՝ ըստ նրա ասորիներն են Նոյան տապանի ավանդությունը Մասիսից տեղափոխել Կորդվաց լեռներ: Իսկ Ա. Սահակյանն իր հոդվածում [Սահակյան, 2017, 7–15] անում է հակառակը՝ հուդայականներին է վերագրում Մասիսը, հակառակ Կորդվաց լեռների, տապանակիր լեռ դարձնելու ավանդույթը:

² Հմմտ.՝ Աբեղյան 1968, հ. Գ, 107:

³ Սիմոնյան 2022, 37:

⁴ Աբեղյան 1968, հ. Գ, 52:

անունը փոխարինվում է նորով, այնքան էլ հազվադեպ չէ ավանդագրույցների և վեպերի դեպքում: Մեր կարծիքով ջրհեղեղի մասին հայկական ավանդության հերոսի իրական անունն անհայտ է մնացել, հավանաբար քրիստոնեության և աստվածանշյան ազդեցությամբ այն փոխարինվել է Նոյ անվամբ¹:

Վերը բերված իրողությունները հաշվի առնելով, դժվար է արդեն միանշանակորեն համաձայնել այն հետազոտողների հետ, որոնց պնդմամբ միայն ավելի ուշ, կաթոլիկ միսիոներների, Ռուբրուկի (XIII դ.) մոտ և Արարատյան դաշտավայրի ավանդություններում տապանի իջման վայրը նշվում է Մասիս-Արարատը²:

Աստվածաշնչյան և ժողովրդական պատումների համեմատություն

Հայաստանում, ինչպես նաև քրիստոնյա այլ երկրներում հայտնի էր ջրհեղեղի մասին միայն մեկ առասպել՝ Հին Կտակարանի Ծննդոց գլխի Նոյան տապանի պատմությունը: Սակայն Հին Կտակարանում Նոյի և ջրհեղեղի մասին պատմությունը երկու տարբեր խմբագրությունների միացում է. օրինակ՝ մի տեղ ասվում է, որ Նոյը վերցնի բոլոր կենդանիներից մեկ զույգ՝ արու և էգ [Ծննդ. Զ. 19–20], մյուս տեղում՝ մաքուր կենդանիներից և թռչուններից յոթ զույգ, իսկ անմաքուրներից՝ մեկ զույգ [Ծննդ. Է. 2–4]³: Պատմելուց երկրորդ մասը երբեք չի նշվում, և բոլորը մանկուց գիտեն, որ Նոյն իր հետ տապան է վերցրել բոլոր կենդանիներից մեկ զույգ:

Նոյ նահապետի մասին հայկական պատումների և Հին Կտակարանի համապատասխան պատումն ունեն մի շարք համընկնումներ. հերոսների անունները՝ Նոյ, Հաբեթ, Քամ, Սեմ, հրեշտակի միջոցով ջրհեղեղի մասին Նոյի ստացված զգուշացումն ու անելիքը, քառասնօրյա անձրևները, բաց թողնված թռչունները, ծիածա-

¹ Հմմտ. Սիմոնյան 2022, 37: Հեղինակը հավանական է համարում, որ հայոց վիպական ժառանգության մեջ աստվածաշնչյան Նոյը կարող էր փոխարինել Նախիջևանի տեղական ավանդության գուցե այլ անունով հայտնի կան անուն չունեցող հերոսին:

² Հմմտ. Паткановъ 1875, 323–324: Հմայակյան 1992, 131: Պետրոսյան 2005, 95–96 կն:

³ Ավելի մանրամասն այս խնդրի մասին տե՛ս Փրэзэр 1985, 64–69:

նի ուխտը, Քամին անիծելը և այլն: Սակայն տեղական–հայկական պատումներն ունեն այնպիսի մանրամասներ, որոնք չկան ջրհեղեղի հինկտակարանյան պատմության մեջ. տապանի շինարարության ընթացքը, բազմաթիվ իրադարձություններ ջրհեղեղից առաջ, ընթացքում և ավարտից հետո, բազմաթիվ լեռների, տեղանունների և բնակավայրերի հետ կապված ավանդազրույցները, որոշ ավանդությունների, ամսանունների, հավատալիքների և տոների առաջացումն ու բացատրությունը:

Հայկական ավանդազրույցներում նշվում են նաև Նոյի դուստրերը և նրա կինը՝ Նոյեմզարը, ինչը բացակայում է աստվածաշնչյան պատումում: Հայկական ավանդության մեջ նույնիսկ քամու առաջացումն է կապվում Նոյ նահապետի աղջիկների հետ¹:

Նույնիսկ ժողովրդական այն պատումները, որոնք թվում է՝ թե առաջացել են ջրհեղեղի հինկտակարանյան պատմության հիմքով, օրինակ ծիածանով ուխտը կամ Քամի անեծքը, հայկական ժողովրդական պատումներում լրիվ այլ բացատրություն են ստանում:

Այսպես՝ Աստծո և Նոյի միջև պայմանը, որ այլևս ջրհեղեղ չի լինելու, Աստված հաստատում է ծիածանով [Ծննդ. Թ. 11–17]: Հայկական ավանդությունում ծիածանով հաստատվող պայմանն ավելի է ընդարձակվում և ստանում է խորհրդաբանական իմաստավորում: Դրա դրսևորումն է մեր կազմած վիպաշարի ութերորդ դրվագի Դ. ավանդազրույցը՝ վերցված Ղարադաղի հայկական բանահյուսությունից՝ որտեղ բացատրվում է «նորափեսայի օսկապի ծագումը». այս ուխտի օրից ծիածանը դարձավ նորափեսայի կոզբանդը և այն ունի իր հատուկ խորհրդաբանությունը՝ նորափեսային կոզբանդ կապելով հաստատում են, որ մինչև մահ հավատարիմ կմնան Աստծո հետ ուխտին՝ Նրա անվանը, հավատքին, սուրբ օրենքին և եկեղեցուն²:

Քամին անիծելը [Դրվագ IX, Ա ւ.] նույնպես մոտ է աստվածաշնչյան պատումի հատվածին [Ծննդ. Թ. 20–27], սակայն հայկական

¹ Ըստ ժողովրդական հավատալիքների՝ քամին առաջացել է Նոյ նահապետի աղջիկների սրինգից [Լալայեան 1896, 351]: Ցավոք, Լալայանը չի պատմում ավանդությունը (եթե այն կար), այդ իսկ պատճառով այս հավատալիքը հարմար չեղավ ընդգրկել վիպաշարի մեջ: Անուշավան եպս. Ժամկոչյանի ենթադրությամբ՝ այդ հավատալիքը «քամի» բառի և Քամ անվան ժողովրդական ստուգաբանության դրսևորում է [Ժամկոչյան 2012, 71]:

² Հովսեփյան 2009, 318–319:

ավանդության մեջ իրեն հարթած և մերկ քնած վիճակում ծաղրելու համար Նոյն անիծում է ոչ միայն Քամին, այլև Սեմին, և միայն Հաբեթին է օրհնում: Աստվածաշնչում Յահվեն հռչակվում է Սեմի աստված, իսկ Քանանը (Քամի որդին) պետք է նրա ծառան լինի [Ծննդ. Թ. 26–27], ինչն ունի իր պատմական աղերսը, այն է՝ հրեաների (Սեմի ժողովուրդ) և քանանացիների (Քանանի ժողովուրդ) պայքարը և հրեաների հաղթանակն ու քանանացիների բնաջնջումը: Հայկական ավանդության դեպքում օրհնվում է միայն Հաբեթը, քանի որ հայերն իրենց հաբեթական ժողովուրդ էին համարում՝ Հայկ նահապետը Հաբեթի ծոռն էր, ուստի Աստծո օրհնվածն իրենք էին:

Քամին անիծելու դրվագը հայ ավանդույթում նաև մի քանի իրադարձությունների պատճառ է դառնում: Այսպես, օրինակ՝ Քամին անիծելու պատճառով նրա երեսը սևանում է՝ թխանում, այսինքն Քամը դառնում է խափշիկների նախահայրը¹:

Մեկ այլ գրույցում [Դրվագ VIII, Ե.] Քամի անարգության պատճառով Նոյ նահապետն անիծում է ձիթենուն, քանի որ այն Քամի սիրելի պտուղն էր, և այն Քամի պես սևանում է: Այս առասպելի հիման վրա հայերը պնդում էին, թե Մասիսի վրա ձիթենի չի կարող աճել²:

Հայ ժողովրդի մեջ այժմ էլ շատ տարածված են ավանդագրույցներ, որոնք հյուսված են Աստվածաշնչից հայտնի կերպարների շուրջ: Այդ գրույցներում բոլոր կերպարների բնավորության գծերը, նրանց հետ կապված իրադարձությունները, դեպքերը, առարկաները և այլն կարող են ունենալ բացարձակ այլ երանգավորումներ, ստանալ նոր գաղափարական-խորհրդանշական իմաստներ, քան առկա են Աստվածաշնչում: Դա կարող է վերաբերել նույնիսկ Ս. Աստվածածնին կամ Հիսուս Քրիստոսին: Այս ավանդագրույցների ամբողջությունը կարելի է անվանել «Ժողովրդական Աստվածաշունչ», որի մի մասն է կազմում Նոյի մասին վիպական շարքը³:

¹ «Երբ Նոյ անիծեց իր Քամ տղան, անոր երեսը սևցաւ» [Թուխ-Կոպո 1898, 443]:

² Տէր-Մինասեան 1893, 153:

³ Մանրամասն՝ Белова 2004.

Նոյի ջրհեղեղի առասպելի տեղական առանձնահատկությունները

Ջրհեղեղի մասին հայկական պոեմները, ամենայն հավանականությամբ, ծնունդ են առել Մասիսի ստորոտում: Եթե Նոյան տապանի և ջրհեղեղի վիպական շարքը չի ստեղծվել Նախիջևանում և հետագայում տարածվել պատմական Հայաստանով, ապա գոնե կորիզը նախիջևանյան է: Այստեղ են տեղի ունեցել Նոյի առաջին գոհաբերությունը ջրհեղեղից հետո¹, առաջին որթատունկը և առաջին էտը (հին Նախիջևանի ավերակների տարածքում էր գտնվում խաղողի այսպես կոչված Նախնական այգին, որը տնկված էր համարվում Նոյի ձեռքով), առաջին սովորույթները՝ հարիսա, Վարդավառ, Նավասարդ, հարսանիքի սովորույթներ: Շարուրի դաշտում էր ստեղծվել առաջին արհեստական ջրանցքը՝ Մեմի աղբյուրը [Դրվագ IV, Ե.]:

Նախիջևանում պատմվող՝ Նոյան տապանի և ջրհեղեղի վիպական շարքի մասին Կ. Նիկիտինը նշում է. *«Աստվածաշնչյան պատմությունը բավական լիությանը և հստակությանը են փոխանցում պատմությունն իրադարձության մասին, անունով հիշարակելով դրանում մասնակցած անձանց և տեղերը, որտեղ այն տեղի է ունեցել, իսկ տեղական ավանդազրույցները, որոնց սկիզբը վերաբերում է նույն հեռավոր, գուցե նախապատմական ժամանակին, լրացնում են աստվածաշնչյան պատմությունը զանազան մանրամասնություններով. Նոյի կյանքի մասին, ինչպես ջրհեղեղի ընթացքում, այնպես էլ դրա ավարտից հետո: Ընդ որում ժողովրդական երևակայությունը տեղին օգտվել է աստվածաշնչյան պատմությունից, դրանից մշակելով հարուկ լեգենդներ՝ որոշ տեղանքների անուններն ու տեսքը բացառելու համար»²:*

Թեև հիշատակվում են Հայկական լեռնաշխարհի գրեթե բոլոր բարձր և պաշտամունքային տարածաշրջանային լեռները, սակայն ամենաէականը՝ Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռն է՝ Ազատն Մասիսը: Ավանդազրույցների շարքի բոլոր բնակավայրերն ու տեղանունները առաջացել են Արարատյան դաշտավայրում՝ Մասիսի շուրջ և Նախիջևանին մերձ տարածքներում: Եվ, վերջապես,

¹ Parrot 1846, 133:

² Никитинъ 1881, 109:

Նախիջևանում էր գտնվում Նոյի գերեզմանը և նրա տեղում կառուցված սրբավայրը, այսինքն՝ Նոյ նահապետի պաշտամունքային կենտրոնը:

Ջրհեղեղի ընթացքում և հետո առաջացող նոր աշխարհակառույցում իրենց նախնական ձևն ու կեցությունը պետք է փոխելին նաև կենդանիները: Նոյան տապանի շարքը կապված է նաև որոշ կենդանիների հետ. գոմեշի, էշի, այծի, բզեզի, գատիկի, մոծակի, ծիծեռնակի, ագռավի, աղավնիի, կատվի և, իհարկե, օձի հետ՝ բացատրելով բարի ու չար կենդանիների հակադրությունը, նրանց վարքը, խոսելու կարողություն կորցնելը, նրանց օգնությամբ մշակութային գյուտեր անելը ևն:

Օձի կողմից տապանի ճեղքը փակելն ունի տիեզերական-տոմարական բացատրություն, որում օձը հանդես է գալիս նաև որպես փական-կողպեք¹: Ճեղքը փակելու համար օձը օրական մեկ մարդ է պահանջում որպես զոհ, սակայն նրան խաբեությամբ հրկիզում-զոհաբերում է Նոյը, իսկ օձի մարմնի մոխիրից առաջանում են լվերն ու ոջիլները:

Նոյի ջրհեղեղի ավանդագրույցների շարքը բացատրում է որոշ կենդանիների առաջացումը կամ վարքագիծը: Ջրհեղեղի ավարտից հետո, երբ Նոյը բաց է թողնում ագռավին, նա չի վերադառնում, իսկ ետևից բաց թողնված աղավնու լեզուն խորամանկությամբ կտրում է, որպեսզի նա Նոյին չպատմի ագռավի լեշ ուտելը: Այդ պատճառով էլ աղավնին միակ թռչունն է, որ ջուր խմելիս վերև՝ Աստծուն չի նայում՝ խռովել է [Դրվագ V, Զ 2.]: Ծիծեռնակի, բզեզի կամ մոծակի և օձի մասին ավանդությունը բացատրում է ծիծեռնակի պոչի մկրատանման լինելը, մոծակի արնախնությունը, օձի չարությունը ևն²:

Նոյ նահապետը մոռացել էր վերցնել գոմեշին, որը լողալով, կիսախեղդ վիճակում էր կարողացել հասնել տապանին, և Նոյը նրան ներս էր առել, ինչի պատճառով էլ գոմեշը շատ է սիրում լողանալ և նրա բառաչն էլ կարծես կանչում է Նոյին [Դրվագ V, Ա.]: Կամ՝ տապանում առյուծի փոշտոցից է առաջացել կատուն [Դրվագ V, Բ.]:

¹ Սիմոնյան 2011, 62:

² Նման բովանդակությամբ պատմություններ լայնորեն տարածված են սլավոնական, միջինասիական, կովկասյան, մերձբալթյան, չուվաշական և այլ բանահյուսության մեջ, մանրամասն՝ գրականությամբ հանդերձ, տես Кызнецова 2017, 40-43:

Նոյի մասին ավանդագրույցներում որոշակի տեղ է հատկացված ձիթենուն (թե ինչն է այն սև կամ ինչն է կիրառվում ծաղկազարդին), որը թեև տեղական բույս չէր, սակայն կարևոր էր իմաստաբանական-պաշտամունքային առումով, քանի որ քրիստոնեական կարևոր խորհրդանշաններից է՝ ի սկզբանե ծաղկազարդի ծառը ձիթենին է եղել [Դրվագ VI, Ա., Դրվագ VIII, Ե.]:

Որոշ տոներ նույնպես առաջացել են ջրհեղեղից անմիջապես հետո և Նոյի ձեռամբ: Ըստ ժողովրդական ստուգաբանության՝ Նոյն է տապանից ելնելու առաջին ամիսն անվանել Նավասարդ՝ նորոգված աշխարհ: Նաև Նոյի առաջարկով են իր տղաները ջուր ցանել նրա և իրենց վրա ու աղավնիներ թոցրել, ահա թե ինչու են Վարդավառին իրար վրա ջուր ցանում [Դրվագ VI, Բ¹⁻².]:

Հետաքրքիր է Խաղողօրհներ տոնի առաջացման ժողովրդական վարկածը, որտեղ նկատվում է ժողովրդական պատումին բնորոշ անախրոնիզմ: Ըստ այդ ավանդագրույցի (որը դիտարկել ենք նաև վերևում)՝ Նոյի բաց թողած աղավնին հանդիպում է Քրիստոսին, Ով թոչնին խաղող է տալիս և սովորեցնում հաղորդության խորհուրդը: Այդ իսկ պատճառով խաղողը Քրիստոսի օրհնած պտուղն է [Դրվագ VI, Գ.]:

Առհասարակ ուշագրավ է Նոյ նահապետի կողմից խաղողի մշակության առաջացման ավանդությունը: Գրիգոր Մագիստրոսը և ուրիշները խոսում են ջրհեղեղից հետո Նոյի տնկած առաջին որթի մասին (արկ ուռի), սակայն չեն հայտնում, թե որտեղից Նոյին խաղողի որթը: Սակայն նույն Մագիստրոսը կարծում էր, որ իրականում (ի տարբերություն ծերերի պատմածի), ջրհեղեղի նվազելուց հետո, Նոյը կտրել է եղած խաղողի ծառի ծայրից և տնկել է խաղողուտը¹: Ժողովրդական որոշ գրույցներ, օրինակ՝ վերը բերվածը, հայտնում են, որ Քրիստոսն է տվել որթը աղավնուն: Իսկ որոշ դեպքերում ասվում է, որ հրեշտակներն են բերել որթը.

... Անմահութեան պտուղ դու ես,

Որ աշխարհիս մէջն բուսար,

Ջքեզ հրեշտակք երեր Նոյի,

Որ ոք պտղովդ ուրախանայր ...²

Բարոն Ֆոն Հաքսթաուզենի բերված ավանդագրույցի համա-

¹ Գրիգոր Մագիստրոս 1910, 89-90:

² Կոստանեանց 1896, № 18, 67: Օրինակված է 1617 թ. ձեռագրից:

ձայն՝ Նոյը խաղողն իր հետ բերել էր դրախտից, ինչն էլ բավական էր, որ մարդկային մեղքերը կիսվեին: Քանի որ գինին հաղորդության երկրորդ բաղադրիչն է, ապա պարզ է մեղքերի կիսման խորհրդաբանությունը¹: Այդ իսկ պատճառով էլ Ս. Գրիգոր Լուսավորիչը նորակառույց եկեղեցին անվանել է Էջմիածին՝ Փրկչի վայրէջք²: Այսինքն «Էջմիածին» անվան պատճառը ոչ թե այն է, որ Քրիստոս է իջել այդտեղ, այլ քանի որ Նոյն է տնկել դրախտից բերված խաղողի որթը, որից ստացվում է գինին, որն էլ իր հերթին Քրիստոսի խորհրդաբանական արյունն է: Ասպես այս ավանդադրույցը կապվում է Ղարադաղի ավանդության հետ, որտեղ խաղողը համարվում էր Քրիստոսի օրհնած պտուղը, Ով էլ այն փոխանցել էր աղավնի-Սուրբ Հոգուն, որ տանի այն Նոյին [Դրվագ VI, Գ.]:

Հետաքրքիր է խաղողի էտի առաջացման պատմությունը: Մի դեպքում այն վերագրվում է Էշին, մյուս դեպքում՝ այծերին [Դրվագ VIII, Ա., Բ.]: Էշը կամ այծերը կրծոտում են խաղողի բարունակները, Նոյը զայրանում և պատժում է նրանց, սակայն աշնանը խաղողն առատ բերք է տալիս և Նոյը հասկանում է, որ դրա պատճառը էշը կամ այծերն են եղել և այդպես է առաջանում խաղողն էտելու սովորությունը:

Նոյի գերեզմանը հայտնի ուխտատեղի էր նախիջևանցիների և շրջակա բնակչության համար: Այստեղ ուխտ էին գնում Զատկի մեռելոցին և Կանաչ կիրակիին (հավանաբար՝ Զատկին հաջորդող կիրակի օրը):

Ինչպես որոշ տոներ, նաև որոշ ամսանուններ առաջացել են ջրհեղեղից և կապված են Նոյի ու նրա զավակների հետ: Աշնանային երեք ամիսներն ու դեկտեմբերը Մարտունիում ստուգաբանում էին որպես Նոյ նահապետի զավակների անունները, որոնց կցվել է «բեր» բայը, քանի որ տապանը լցվելու ժամանակ Նոյը կարգադրել էր նրանց բերել և լցնել նավը [Դրվագ VI, Դ.]: Եվ այս ամենի բացատրության համար բերվում է ժողովրդական հիանալի բացատրություն. քանի որ ջրհեղեղի ժամանակ Հոռնը դեռ չկար, ապա ամսանուններն էլ չէին կարող լինել հռոմեական:

Որոշ տեղական հավատալիքներ զանազան չար ոգիների մասին նույնպես առաջացել են Նոյի ջրհեղեղից հետո: Ինչպես զանցավոր

¹ von Haxthausen 1856, 171, 225.

² von Haxthausen 1856, 225. Տե՛ս նաև նախորդ ենթավերնագրի ներքո:

այլ դեպքերում, այս պատումներում էլ Քամն է եղել փերիների և շվոտի առաջացման պատճառը: Տապանում կենալու պահանջներից մեկն է եղել սրբություն պահելը՝ չմերձենալը: Քամը խախտել է այդ պահանջը, ինչի պատճառով նրա ծնված երեխան մնացել է տապանում, քանի որ ամաչել են հրեշտակից և հրաժարվել են երեխայից: Եվ հրեշտակի խոսքերի համաձայն՝ «եթե տապանում էակ կա, թող այն չիք դառնա»՝ երեխան աներևույթացել է և փոխակերպվել մի դեպքում փերիի, մյուս դեպքում՝ շվոտի [Դրվագ VII, Ա 1-2., Բ.]:

Համաշխարհային ջրհեղեղի ավարտը քանի որ նոր աշխարհի սկիզբն է, ապա պետք է որ առաջանային մարդկային տեսակի որակները: Եվ Նոյի «թերթն ձեռքով» են առաջացել հալալ կաթնակերները (որոնք Նոյի և նրա կնոջ ցեղից են), շնաբարո և էշաբարո մարդիկ, ինչպես շունն ու էշը, որոնց Նոյը, որպես իր դուստրեր, կնության տվեց թագավորներին [Դրվագ IX, Բ 1-3.]:

Եվ, որպես ապացույց առ այն, որ Նոյան տապանն իջել է Մասիսի վրա, Ս. Հակոբ Մծբնա հայրապետն էլ տապանի մասնիկը պետք է ստանար հրեշտակից Մասիսի լանջին՝ որպես առհավատյա աշխարհի նոր սկզբի մասին, որը սկսվել էր Հայաստանի սրտից:

Այսպիսով, Նոյի մասին վիպական շարքի մեջ գտնում ենք սուկ պատմական Հայաստանի աշխարհագրական անուններ, և այն նոր աշխարհը, որի խորհրդանշական վայրերը՝ սարերը, քաղաքներն ու գյուղերը, նույնիսկ կենդանական, առարկայական և տոմարային խորհրդանիշները (թոնիր, որից սկսվում է ջրհեղեղը, հարսի չխտականություն, հարիսա, խաղողի ու գինու մշակույթ, Վարդավառի սովորույթներ, հարսնառի սովորույթներ, ընտանեկան նորմեր ևն) վերաբերում են բացառապես հայոց մշակույթին, կազմում են ետջրհեղեղյան Հայաստանի ձևավորման առասպելական պատմության հիմքը:

Նոյան տապանը և ջրհեղեղը՝ եկեղեցական խորհրդանիշ

Ջրհեղեղի և Մասիսի մասին առասպելներն այնքան ներծծված են հայկական իրականությանը, այնքանով են հարազատ, որ Մասիսի և Նոյան տապանի հայկական մոտիվները կարող են յուրովի կամուրջ լինել ժողովրդական բանահյուսության և հայ քրիստոնեական դավանաբանական-խորհրդաբանական մեկնության միջև:

Այսպես, ժողովրդական հավատալիքի համաձայն՝ Մասիս լեռը խորհրդանշական մակարդակում հավասարվում է մայրական արգանդին՝ «Թէ մարդ կրնայ ուր մամու արգանդ մընայ մէկ լէ, էնպես էլ կրնայ Մասիսու գլուխը քանձրնայ ու զՏապան տեսնել»¹: Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցի»՝ Նոյան տապանը նույնպես խորհրդանշական մակարդակում հավասարվում է մայրական արգանդին. «Հարց – Կերակուր կերի՞ն ի տապանին, թէ ոչ: Պատասխան – Ո՛չ կերին, զի թէպէտ ժողովեաց, սակայն ո՛չ կերին. այլ շնորհօքն ասարածոյ կացին որպէս մանուկն յարգանդի մօրն ասրի»²:

Համաշխարհային ջրհեղեղը հին աշխարհակառույցը կործանող և նորը ստեղծող տիեզերական մի երևույթ էր, որը անպայմանորեն պետք է զուգորդվեր քրիստոնեության հետ: Քրիստոնեությունն էլ կործանեց հին աշխարհակառույցը (հելլենիզմը) և ստեղծեց քրիստոնյա աշխարհը: Ջրհեղեղից հետո Նոյը զոհաբերություն (հայկական տարբերակում՝ մատաղ) մատուցեց, ինչը զուգորդվում է պատարագի հետ: Հայկական որոշ ավանդագրույցներում շեշտվում է տապանի սրբությունը, այնտեղ չէր կարելի ամուսնական հարաբերություններ ունենալ (պետք է սուրբ մնային), այդ արգելքը խախտելու համար ծնված երեխաները դառնում են չար ոգի՝ փերի կամ շվուտ [Դրվագ VII, Ա., Բ.]:

Նոյը մի քանի անգամ հիշատակվում է Նոր Կտակարանում: Այսպես՝ Քրիստոս, խոսելով Երկրորդ գալստյան և Ահեղ դատաստանի մասին, ասում է, որ ինչպես ոչ ոք չգիտեր ջրհեղեղի սկսվելու պահը, այնպես էլ չգիտի Երկրորդ գալստյան պահը: Ինչպես ջրհեղեղից առաջ մարդիկ անհոգ էին, մինչև Նոյը տապան մտավ, այնպես էլ կլինեն անհոգ, մինչև Մարդու Որդու գալուստը [Մաթ. ԻԴ., 37–39]:

Հիսուսի խոսքերի իմաստային որոշ կողմեր բացատրում է Պողոս առաքյալը, երբ Նոյին դիտարկում է որպես ճշմարիտ հավատացյալի օրինակ [Պօղոս, Եբր. ԺԱ., 7]:

Նույն իմաստն է արտահայտում նաև Պետրոս առաքյալը, ով Նոյին և ջրհեղեղը հիշատակում է որպես ապացույց, որ Աստված օգնում է ու փրկում բարեպաշտներին և անպատիժ չի թողնում մեղսագործներին [Պետր. երկրորդ, Բ., 5, 9]:

¹ Բենսե 1900, 36:

² Գրիգոր Տաթևացի 1729, 294:

Օգոստինոս Երանելիի (354–430) «Աստծո քաղաքի մասին» երկում Նոյան տապանը համեմատվում է եկեղեցու հետ, ըստ նրա՝ տապանն, անշուշտ, Աստծո քաղաքի, այսինքն՝ Եկեղեցու կերպարանքն է: Նոյան տապանը մանրամասնորեն համեմատվում է նաև Քրիստոսի մարմնի հետ՝ տապանի չափսերը մարդու մարմնի կերպարն է: Հետևաբար տապանի դուռն էլ այն վերքն է, որ հասցրել էր նիզակը՝ խոցելով Խաչվածի կողը, քանզի այդ դռնով են մտնում Նրա մոտ եկողները, ինչպես և դրանից են բխում խորհուրդները, որոնցով օծվում են հավատացյալները¹:

Հայ աստվածաբանության մեջ առաջիններից մեկը, ով Նոյան տապանը դիտարկեց որպես քրիստոնեական խորհրդանշան՝ Դավիթ Անհաղթն էր: Սուրբ Խաչին նվիրված իր ներբողում՝ «Ներբողյան ի Սուրբ Խաչն Աստուածընկալ» (առավել հայտնի է ներբողի առաջին բառով՝ «Բարձրացուցէք») նա Նոյի տապանը համարում է խաչի նախօրինակը: Դավիթ փիլիսոփան նկարագրում է, թե ինչպես է խաչը կյանքի խեղդող ալիքներից իրեն ապավինած հոգիներին դեպի երկինք բարձրացնում եկեղեցու դռնով, որը Քրիստոսի խոցված կողն է²:

Նոյան տապանը որպես պատկերավոր օրինակ և խորհրդանշան մեծ դեր ունի հայ աստվածաբանությունում: Որպես օրինակ դիտարկենք Ս. Հովհան Իմաստասեր Օձնեցու եկեղեցու մասին ճաները: Եկեղեցու հիմնարկեքին վերաբերող ճառում նա ասում է, որ եկեղեցու հիմնումը ի թիվս այլ խորհուրդների օրինակն է նաև Նոյան տապանի³: Խոսելով եկեղեցու խորհրդաբանության մասին, Ս. Հովհան Օձնեցին այն ուղիղ համեմատում է նաև Նոյան տապանի հետ: Ինչպես աստվածային հրամանով տապանն ուներ երեք մաս՝ ներքնատուն, միջնատուն և վերնահարկ, այնպես էլ եկեղեցին բաղկացած է երեք մասից. արտաքին գավիթ, տաճար (միջնամաս) և սուրբ խորան⁴: Ինչպես կենդանիները տապանում փրկվեցին ջր-

¹ Августин Блаженный 1998, 102–103.

² Դավիթ Անյաղթ 1833, 112: Տե՛ս նաև Մելքոնյան 2013, 75–76:

³ Յովհան Աձնեցի 1833, 122:

⁴ Ֆրանսիայի Սեն-Շապել եկեղեցու (1243–1248 թ.) հարթաքանդակներում և Սեն-Սավեն (11–12-րդ դդ.) եկեղեցու որմնանկարում պատկերված է Նոյան տապանը՝ վրան եկեղեցի: Ըստ Տիրան Մարությանի այդ եկեղեցին Զվարթնոցի տաճարն է, որը Սեն-Շապել եկեղեցու հարթաքանդակներում պետք է որ քանդակված լինի հայ վարպետ: Մարությանն իրավամբ նշում է, թե տրա-

հեղեղի պատուհասից, այնպես էլ հավատացյալները փրկվեցին աղոթելով առ Աստված: Այնտեղ (տապանում) կենդանիները տապանից ելնելով նույն բնությունը ունեցան՝ ինչ մտնելուց առաջ, իսկ այստեղ (եկեղեցիում) գազանաբարո արձակվածները զգաստացան աստվածային հոգևոր իմաստից: Տապանից արձակվեց ագռավը, իսկ եկեղեցուց Քրիստոս արձակեց սևացած սատանային և լուսավորեց մեղքերը սև: Այն ագռավն ընկղմվեց ջուրը, իսկ սատանան հոգու մեջ մեղավոր բույն դրեց, որի տիղմի մեջ թավալվում են հուսահատ կյանքերը: Եկեղեցու դռան կողմերում առաքյալներն ու մարգարեներն են, որոնք փոխարինում են շյուղաբեր աղավախներին՝ Ս. Հոգին մտնելով եկեղեցի ոչ թե քչերին հանում է տապանից (ագատում է մեղքերից), այլ ամբողջ տիեզերքն է՝ երկնքից երկիր ագատում: Ջուրը ցամաքելուց հետո Նոյը պատարագ մատուցեց Աստծուն (խոսքը Նոյի մատաղի մասին է), իսկ մեղքերը ցամաքեցնելու համար կա սեղանն Աստծո (եկեղեցու զոհասեղանը), որտեղ ընդունելի պատարագ են մատուցում առ Աստված¹:

Ս. Հովհան Օձնեցու տվյալ խոսքերում Նոյան տապանը, Նոյի արձակած ագռավն ու աղավախն և նրա մատուցած մատաղը ստանում են խորհրդանշանային իմաստավորում. տապան-եկեղեցի, ագռավ-սատանա, աղավախ-Սուրբ Հոգի, մատաղ-պատարագ: Այստեղ նաև հետաքրքրական է ագռավի հիշատակումը, որն ակնհայտ ժողովրդական ազդեցություն ունի, քանի որ Ծննդոցի համապատասխան հատվածում ագռավի մասին խոսք չկա:

Մեծ հռչակ ունեցող վարդապետ Վարդան Արևելցին նույնպես Նոյի մատուցած մատաղը (պատարագը) նույնացնում է եկեղեցական պատարագի հետ. «Եւ զի ի ցամաքել ջրոյն մատոյց Նոյ զպատարագն հաճելի Աստուծոյ, այսպէս և աստի ցամաքեալ մեղացն լինինք մէք սեղան Աստուծոյ անուշահոտ առաքինութեամբ, յորում ուխտէ ընդ մեզ Քրիստոս զյաւիտենական խաղաութիւնն»²:

մաքանական է մտածել, որ այդպիսով Նոյն իր տապանով ջրհեղեղից փրկում է «Աստծո տունը», որը ջրհեղեղից հետո պետք է գոյատևեր: Տե՛ս Մարտիրոսեան 2011, 503-505, 523: Զվարթնոցի տաճարն, ինչպես հայտնի է, եռահարկ էր, ինչը, թերևս, կարող է աղերս ունենալ Ս. Հովհան Օձնեցու քրիստոնեական տաճարի եռամասն բաժանման և տապանի եռահարկ լինելու հետ:

¹ Յովհան Աւձնեցի 1833, 135-136:

² Վարդան Արևելցի, ձեռ. 4139, 161ա: Աղբյուրը հայտնելու համար շնորհակալություն են հայտնում պ.գ.թ. Աննա Օհանջանյանին:

Տապանը որպես քրիստոնեական խորհրդանշան բավականին դիտարկել է նաև Ս. Գրիգոր Տաթևացին: Այսպես, իր «Գիրք հարցմանց»-ում՝ «Վասն Նոյան տապանին հարց» ենթագլխում Տաթևացին մանրամասն պատմում է տապանի ձևի մասին՝ համեմատելով այն եկեղեցու կամ կոթողի հետ և բաժանելով երեք հարկերի. ներքևինը չորքոտանիների համար էր, միջինը՝ մարդկանց և վերևինը՝ թռչունների: Հետո տապանի ձևն ու կառուցվածքը համեմատում է մարդու ձևի և կառուցվածքի հետ: Տաթևացին նաև կրկնում է Ս. Հովհան Օձնեցու ասածը տապանի և եկեղեցու երեք մասերի մասին, ավելացնելով նաև, որ տապանի չորս կողմերն և խաչի քառակուսի լինելը նույնիմաստ են: Հետո Տաթևացին մանրամասն պատասխանում է այն հարցերին, թե ինչքան մնացին տապանում, ինչ էին ուտում, ինչն էր լուսավորում տապանը, որտեղ իջավ տապանը: Այն հարցին, թե ինչ եղավ ագռավի հետ, Տաթևացին երեք պատասխան է առաջարկում, որոնցից երրորդը ներառված է վիպաշարի մեջ (դրվագ II, Զ 1.) որպես ժողովրդական գրույց¹:

Տապանի համեմատումը մարդու մարմնի ձևի հետ և տապանի չորս կողմերի դիտարկումը շատ մոտ է Օգոստինոս Երանելու մտքերին: Իսկ ագռավի դեպքում Տաթևացին ոչ միայն օգտվել է ժողովրդական գրույցներից, այլև բերում է տապանի շինարարի անունը՝ Ներսես:

Վերը բերված եկեղեցական հայրերի ներբողներից և մեկնություններից կարելի է եզրակացնել, որ որոշ առումով Նոյը խորհրդանշական մակարդակում նույնանում է Քրիստոսին:

Եկեղեցական խորհրդի համատեքստում կարելի է դիտարկել նաև Ղարադաղում գրանցած ավանդագրույցն այն մասին, որ տապանից բաց թողնված աղավինն հանդիպում է Քրիստոսին, Ով մի ձութ խաղող է տալիս աղավնուն, որ տանի այն Նոյին և հայտնում է հաղորդության բանաձևը ու հորդորում է Նոյին ամուր մնալ հավատի մեջ [Դրվագ VI, Գ.]: Պարզ է, թե ինչու պետք է աղավինն տաներ խաղողը Նոյին և բացատրեր հաղորդության խորհուրդը՝ աղավնին Սուրբ Հոգու մարմնացումն ու խորհրդանշանն է:

Տպավորիչ է «Զատիկ» բառի, որից էլ տոնի, ստուգաբանությունը: Ըստ Վահան վարդապետ Տեր-Մինասյանի հաղորդած առասպելի, դրախտի թռչնի ձվից ծնված միջատը՝ լեզու առնելով, ավե-

¹ Գրիգոր Տաթևացի 1729, 293-295:

տել է. «Քրիստոս հարյավ», որի պատճառով Նոյը նրան անվանել է Զատիկ, այսինքն՝ Աստծո մեկ զատ տուրքը, շնորհքը, զուտ մեկ ավանդն ու հիշատակը¹:

Եկեղեցական հայրերի բուն քրիստոնեական, դավանաբանական մեկնություններից բացի, նրանք Նոյան տապանին անրադարձել են նաև ժողովրդական պատումների տեսանկյունից:

Այսպես, օրինակ՝ Ս. Գրիգոր Տաթևացին մանրամասն անրադարձել է տապանին իր «Գիրք հարցմանց»-ում: Այդտեղ նա մի քանի ժողովրդական մանրամասներ է հաղորդում: Օրինակ՝ այն հարցին, թե ագռավն ինչ եղավ, Տաթևացին պատասխանում է, որ ինչպես ասում են. «... տապանի շինողն էր Ներսես անունով արհեստավորը...»²: Սա մեզ հայտնի միակ ավանդագրույցն է, որում տապանի շինող վարպետը հիշատակվում է անունով: Ուշագրավ է, որ գրող Սերո Խանգաղյանն իր «Հայրենապատում» գրքում բերում է նույն գրույցի առավել գեղարվեստական տարբերակը, նույնպես նշելով վարպետի անունը՝ Ներսես, իսկ վերջին մասը հղում է հենց Տաթևացուն³:

Առասպելական, ժողովրդական, պարականոն և եկեղեցական պատումների միախառնումը, մեկի օգնությամբ մյուսի բացատրելը բնական մի երևույթ է, որի միջոցով ավելի հասկանալի և ամբողջական է դառնում ավանդությունը: Այդ իսկ պատճառով ուսյալ, բանիմաց եկեղեցականները, վարդապետերը երբեք չեն խորշել ժողովրդական ավանդագրույցներից:

¹ Տէր-Մինասեան, 1904, 166:

² Գրիգոր Տաթևացի 1729, 294:

³ Խանգաղյան 1981, 218:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արխիվային և դաշտային նյութեր

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ

ԱՇՈՒՂ ԾԱՂԿԱԼԻ [19-րդ դ. վերջ – 20-րդ դ. սկիզբ]

Աշուղ Ծաղկալի, Նոհա տաբանի պատմությունը մենձերից, Աշուղ Ծաղկալի – Հերիք Հարթենյանի ֆ., ցուցակ 1, թ. 881-890:

ԱՌԱՔԵԼՅԱՆ (դաշտ.) 1963

Միքայել Առաքելյան, Ժողովրդական ավանդություններ. Լեոնային Ղարաբաղ, 1970-1971 թթ., Միքայել Առաքելյանի ֆ., ցուցակ 1, թ. 171:

ԲԵՆՍԵ (դաշտ.) 1935

Բենսեի ֆ., ցուցակ 2, գ. 6, էջ 164-164ա, 1965 թ.:

ԳԱԼՍՏՅԱՆ (դաշտ.) 1978

Մնացական Գալստյան, Ջրիեղեղ, Մնացական Գալստյանի ֆ., ցուցակ 1, էջ 20ա-22ա, 1978 թ.:

ԽԱՉԱՏՐՅԱՆ (դաշտ.) 1980

Ռախսա Խաչատրյանի ֆ., ցուցակ 4, ձայնգր. 6, 1980 թ.:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (դաշտ.) 1966

Արազ Կարապետյան, Նոյը, Արազ Կարապետյանի ֆ., ցուցակ 2, գ. 1, Աշտարակի շրջանի ժող. բանահյուսությունից, 1966:

ՀԱԿՈՒՅԱՆ (դաշտ.) 1965

Մուշեղ Հակոբյան, Մարթի, իշի ու շան ցեղը, Մուշեղ Հակոբյանի ֆ., ցուցակ 16, թ. 17-21, 1965 թ.:

ՆԱԶԱՐՅԱՆ [1950-60-ական թ.] (դաշտ.)

Աստղիկ Նազարյան, Էջմիածնի և Աշտարակի բանահյուսություն, Աստղիկ Նազարյանի ֆ., ցուցակ 1, գործ 2, 3, թ. 246-247, 272, 290:

ՇԱՀԻՆՅԱՆ (դաշտ.) 1974

Շահեն Շահինյան, Դոնի հայերի բանահյուսական նյութեր (Ռոստովի մարզ, Չալթր գ.), Շահեն Շահինյանի ֆ., ցուցակ 2, գործ 1, թ. 292-293, 1974 թ.:

ՍՏԵՓԱՆՅԱՆ (դաշտ.) 1975

Գեղամ Ստեփանյան, Դոնաշենի ազգագրական նյութեր, Գեղամ Ստեփանյանի ֆ., ցուցակ 3, գործ 2, թ. 13, 1965 թ.:

Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի արխիվ

ՉԻԹՈՒՆԻ [1910-ական թ.]

Տիգրան Չիթունիի ֆ., ցուցակ 2, տետր Ե, թ. 106, տետր ԻԲ, էջ 102 (սախաբան), էջ 105-106:

Դաշտային նյութեր

ՄԻՄՈՆՅԱՆ (դաշտ.) 2011

Սիմոնյան Լ., ՀՀ Արարատի մարզ, Ներքին Դվին, 2011, ձայնգր. 1 (1 ժ. 45 ր.):

ՄԻՄՈՆՅԱՆ (դաշտ.) 2012

Սիմոնյան Լ., ՀՀ Կոտայքի մարզ, Մեղրաձոր, 2012, ձայնգր. 2 (1 ժ. 10 ր.):

ՄԻՄՈՆՅԱՆ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (դաշտ.) 2014

Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., ՀՀ Կոտայքի մարզ, Ողջաբերդ, 2014, ձայնագր. 2 (2 ժ. 57 ր.):

ՄԻՄՈՆՅԱՆ և այլք (դաշտ.) 2016

Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., Ավետիսյան Լ., ՀՀ Գեղարքունիքի մարզ, Լիճք, 2016, ձայնգր. 4 (2 ժ. 12 ր.):

ՄԻՄՈՆՅԱՆ և այլք (դաշտ.) 2017

Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., Ավետիսյան Լ., ՀՀ Շիրակի մարզ, Կապս, 2017, ձայնագր. 3 (4 ժ. 44 ր.):

ՄԻՄՈՆՅԱՆ (դաշտ.) 2017

Սիմոնյան Լ., ՀՀ Սյունիքի մարզ, Կապան, 2017, ձայնագր. 2 (1 ժ. 49 ր.):

Սկզբնաղբյուրներ

ԱԹԱՆԱՍԵԱՆՑ 1877

Աթանասեանց Յ., Իմ ճանապարհորդական տպաւորութիւնները Արարատեան դաշտում // «Մշակ» օրաթերթ, 1877, թ. 83:

ԱՐՍԼԱՆ 1900

Արսլան Ի., Օձ, բզէզ ու ծիծեռնակ (աւանդավէպ) // «Բիրակն», 1900, թ. 23:

ԲԵՆՍԷ 1900

Բենսէ, Հարք. Մշո Բուլանըխ // Ազգագրական հանդէս, Զ, Թիֆլիս, տպ. Կ. Մարտիրոսեանցի, 1900:

ԲԵՆՍԷ 1972

Բենսէ, Հարք (Մշո Բուլանըխ) // Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, 182 էջ:

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ 1910

Գրիգոր Մագիստրոսի թղթերը, բնագիրն առաջաբանով և ծանօթագրութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Ալէքսանդրապօլ, տպ. Գէորգ Ս. Սանոյեանցի, 1910, 401 էջ:

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՑԻ 1729

Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, տպ. Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու, Կ.Պօլիս, 1729:

ԴԱԻԻԹ ԱՆՅԱՂԹ 1833

Մատենագրութիւնք նախնեաց. Կորին, Մամբրէ, Դաւիթ // Դաւթի Անյաղթ փիլիսոփայի Ներբողեան ի Սուրբ Խաչն Աստուածընկալ, Վենետիկ, Ս. Ղազար, 1833, էջ 103-119:

ԹԱՂԻԱԴԵԱՆՑ 1847

Ճանապարհորդություն Մեսրոպբայ Դ. Թաղիադեանց Վ. Ա. սարկաւագի սրբոյ էջմիածնի 'ի Հայս, հատ. առաջին, Կալկաթա, Արարատեան ընկերութեան տպ., 1847:

ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ 1999

Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, «Հայաստան», 1999, 328 էջ:

ԹՈՒԻՒ-ԿՌՊՕ 1898

Թուլս-Կոպօ, Աւանդութիւններ Բիթլիսի մէջ // «Բիւրակն», Կ.Պոլիս, 1898, թ. 23:

ՀԱՅԿՈՒՆԻ 1895

Հայկունի Ս., Շուտ և դովաթ. Ժողովրդական հաւատալիք // «Արարատ», 1895, Զ:

ՀԺՀ – 7, 1979

Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VII. Արցախ-Սյունիք (կազմ. Ա. Մ. Նազինյան, Մ. Ն. Առաքելյան), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, 768 էջ:

ԼԱԼԱՅԵԱՆ 1892

Լալայեան Ե., Զավախքի բուրմունք, Թիֆլիս, «Արոր» տպ., 1892:

ԼԱԼԱՅԵԱՆ 1896

Լալայեան Ե., Զավախք // Ազգագրական հանդէս, Ա, Թիֆլիս, տպ. Աւագ Մ. Մահտեսի-Յակոբեանցի, 1896:

ԼԱԼԱՅԵԱՆ 1897

Լալայեան Ե., Վարանդա. Հաւատք // Ազգագրական հանդէս, Բ, Թիֆլիս, տպ. Մ. Դ. Ռօտինեանցի, 1897:

ԼԱԼԱՅԵԱՆ 1900

Լալայեան Ե., Գանձակ գաւառ // Ազգագրական հանդէս, Զ, Թիֆլիս, տպ. Կ. Մարտիրոսեանցի, 1900:

ԼԱԼԱՅԵԱՆ 1903

Լալայեան Ե., Բորչալուի գաւառ // Ազգագրական հանդէս, X, Թիֆլիս, տպ. Մ. Մարտիրոսեանցի, 1903:

ԼԱԼԱՅԵԱՆ 1904

Լալայեան Ե., Գողթն գաւառ // Ազգագրական հանդէս, XI, Թիֆլիս, տպ. Մ. Մարտիրոսեանցի, 1904:

ԼԱԼԱՅԵԱՆ 1906

Լալայեան Ե., Նախիջևանի ոստիկանական շրջան կամ Նախճաւան // Ազգագրական հանդէս, XV, «Հերմէս» տպ., Թիֆլիս, 1906:

ԼԱԼԱՅԵԱՆ 1908

Լալայեան Ե., Նոր-Բայազէտի գաւառ // Ազգագրական հանդէս, XVII, Թիֆլիս, տպ. Օր. Ն. Աղանեանի, 1908:

ԼԱԼԱՅԵԱՆ 1913

Լալայեան Ե., Վասպուրական. Հաւատք // Ազգագրական հանդէս, XXV, Թիֆլիս, «Էսպերանտօ» տպ., 1914:

ԼԱԼԱՅԵԱՆ 1916

Լալայեան Ե., Վասպուրական. Հաւատք // Ազգագրական հանդէս, գ. XXVI, Թիֆլիս, «Սլովո» տպ., 1916:

ԼԷՕՆԻԴ 1902

Լէօնիդ, Արարատեան աշխարհ // «Աղբիւր», 1902, թ. 1:

ԽԵՄՉՅԱՆ 2000

Խեմչյան Է. Հ., Տավուշ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 21, Երևան, «Գիտություն», 2000, 314 էջ:

ԽԵՄՉՅԱՆ 2008

Խեմչյան Է. Հ., Իջևան (Ձորովոր), Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 25, Երևան, «Գիտություն», 2008, 490+12 էջ:

ԿՈՍՏԱՆԵԱՆՑ 1896

Կոստանէնաց Կ., Նոր ժողովածու, Պրակ Գ. Միջնադարեան հայոց տաղեր և ոտանաւորներ, Թիֆլիս, տպ. Մ. Շարաձէի և ընկ., 1896, 70 էջ:

ՖՈՆ ԸԱՔՍԹՇԱՌԻՋԵՆ, 1873

Հաքսթիաուզեն Բարոն ֆոն, Ճանապարհորդություն // «Արարատ», 1873, թ. Գ.:

ՀՈՎՍԵՓՈՍ ՓԼԱՎԻՈՍ 1976

Հովսեփոս Փլավիոս, Հրեական հնախոսություն // Հին հունական աղբյուրներ, Ա, Հովսեփոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, թարգ., առաջաբան և ծանոթգր. Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976, էջ 54-90:

ՄԱՌ 1894

Մառ Ն., ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն 2, Ս. Պետերբուրգ, 1894:

«ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» 1875

Ճանապարհորդութիւն Դավրէժից Նախիջևան // «Մեղու Հայաստանի», 1875, թ. 46:

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ 1865

Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ մատենագրութիւնք, Վենետիկ, Ս. Ղազար, 1865:

ՅԱԿՈՎԲԵԱՆՑ 1873

Յակովբեանց Ն., Հին Նախիջևան // «Մեղու Հայաստանի», 1873, թ. 26:

ՅՈՎՀԱՆ ԱԻՉՆԵՑԻ 1833

Յոհաննու Իմաստասիրի Աձնեցոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, Ս. Ղազար, 1833:

ՆՈՒՐՀԱՆ, 1874

Նուրհան, Ազուլիս // «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1874, թ. 48:

ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՑ 2014

Շահխաթունեանց Յովհաննէս եպս., Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Էջմիածին, Մայր Աթոռ, 2014, 560 էջ:

ՉՄՇԿԵԱՆ 1901

«Ժողովրդական-պատկերազարդ տարեցոյց» 1902 թ. Քրիստոսի, աշխ. Մ. Չմշկեան, Թիֆլիս, 1901:

ՍԵԼՃՈՒԿ 1875

Սելճուկ, Հին Նախիջևան // «Մեղու Հայաստանի», 1875, թ. 39:

ՄԻՆԱՆԵԱՆ, 1899

Մինանեան Յ. Կ. (Վէգիր Քէօփրի), Լվերու և ոջիլներու սկզբնապատճառը // «Բիրակն», № 24, 1899:

ՍՎԱԶԼՅԱՆ 1994

Սվազյան Վ., Կիլիկիա, Երևան, «Գիտություն», 1994, 408 էջ:

ՍՐՎԱՆՁՏՅԱՆՅ, 1978

Սրվանձտյանց Գ., Երկեր, հատ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, 665 էջ:

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՅԻ, Ձեռ. 4139

Վարդան Արևելցի, Տոնապատճառ, ձեռ. 4139, «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ: Տոնապատճառ ժողովածու. Վարդան Հաղպատեցու, Վարդան Արևելցու և Հովհաննես Գանձակեցու խմբագրությունները, Բնագիր, Մաս Բ., կազմ.՝ Աննա Օհանջանյան (անտիպ):

ՎԱՐԴԱՆՅԱՆ 2003

Թագավորի երգերը, կազմ., ծանոթագր. և հրատ. պատրաստ. Սերգեյ Վարդանյանը, Երևան, «Գասպրինտ», 2003, 144 էջ:

ՏԷՐ-ԱԻԵՏԻՔԵԱՆ 1885

Տեր-Ալեքսիքեան Ն., Տեղագրական նամականի. Արաքսի ափերից // «Աղբիր», 1885, թ. 10:

ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆ 1893

Տեր-Մինասեան Վահան վարդ., Անգիր դպրություն և առակք, Կ.Պոլիս, Գ. Պաղտատլեան տպ., 1893:

ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆ 1904

Տեր-Մինասեան Վահան վարդ., Անգիր դպրություն և հին սովորոյթներ, Կ.Պոլիս, 1904:

ՏԷՐ ՍԱՐԳՍԵԱՆ 1873

Տեր Սարգսեան Մ., Հին Նախիջևան // «Մեղու Հայաստանի», 1873, թ. 16:

ՓԱԽՍՏՈՍ ԲԻԻՋԱՆԴ 1987

Փախտոսի Բիւզանդացոյ Պատմութիւն հայոց, բնագիրը՝ Ք. Պատկանյանի, թարգմ. և ծանոթագր.՝ Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, 456 էջ:

ՔԱԶԲԵՐՈՒՆԻ 2003

Քաջբերունի, Ճանապարհորդական նկատողություններ, Երևան, «Մուղնի», 2003, 498 էջ:

АВГУСТИН БЛАЖЕННЫЙ 1998

Блаженный Августин, Творения (в 4 томах): том 4, О граде Божиим (книги XIV–XXII), Санкт-Петербург – Киев, «Алетейя», «УЦИММ-Пресс», 1998, 587 с.

БЕЛОВА 2004

«Народная Библия»: Восточнославянские этимологические легенды, сост. и комм. О. В. Беловой, Москва, «Индрик», 2004, 576 с.

ФОНЪ-ГАКСТГАУЗЕН 1857

Барон Август фонъ-Гакстгаузен, Замѣтки о семейной и общественной жизни и отношеніяхъ народовъ, обитающихъ между Чернымъ и Каспійскимъ морями, часть I и II, СанктПетербургъ, 1857.

ЗЕЛИНСКІЙ 1882

Зелинскій С. П., Этнографическіе очерки изъ быта армянъ-переселенцевъ изъ Персіи, живущихъ въ Нахичеванскомъ уѣздѣ Эриванской губерніи, Сборникъ материаловъ для описанія местностей и племенъ Кавказа, вып. 2, I и II отдѣлъ, Тифлисъ, 1882.

НИКИТИНЪ 1882

Никитинъ К. А., Городъ Нахичевань и Нахичеванскій уѣздъ, СМОМПК, вып. 2, Тифлисъ, 1882.

ЖИЗНЬ АРТЕМИЯ АРАРАТСКОГО 1980

Жизнь Артемия Араратского, изд. подг. К. Н. Григорьян при уч. Р. Р. Орбели, Ленинград, "Наука", 1980, 222 с.

ИОСИФ ФЛАВИЙ 1999

Иосифъ Флавій, Иудейскіе древности. В 2-хъ томахъ. Переводъ Г. Генкеля. Т. 1, Ростов-на-Дону, «Феникс», 1999, 640 с.

VON HAXTHAUSEN 1854

Baron von Haxthausen, Transcaucasia Sketches of the Nations and Races between the Black Sea and the Caspian, London: Chapman and Hall, 193, Piccadilly, 1854.

VON HAXTHAUSEN 1856

August Freiherr von Haxthausen, Transkaukasien. Andeutungen über das Familien- und Gemeindeleben und die socialen Verhältnisse einiger Völker zwischen dem Schwarzen und Kaspischen Meere. Erster Theil, Leipzig, F. U. Brockhaus, 1856.

Ուսումնասիրություններ

ԱԲԵՂՅԱՆ 1966

Աբեղյան Մ., Երկեր, հատ. Ա., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966, 571 էջ:

ԱԲԵՂՅԱՆ 1968

Աբեղյան Մ., Երկեր, հատ. Գ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968, 694 էջ:

ԱԼՊՕՅԱՃԵԱՆ 1961

Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Սալաթիոյ հայոց, Պէյրութ, տպ. Սևան, 1961, 1536 էջ:

ԱՀԱՐՈՆՆԵԱՆ 1939

Ահարոնեան Ա., Հայկական հին հաւատալիքները. Բարի և չար ոգիներ // «Հայրենիք», Բոստոն, 1939, թ. 2, էջ 80-90:

ԱՅՎԱԶՅԱՆ 1995

Այվազյան Ա. Ա., Նախիջևան: Պատկերազարդ բնաշխարհիկ հանրագիտակ, Երևան, «Հուշարձան», 1995, 368 էջ:

ԺԱՄԿՈՉՅԱՆ 2012

Ժամկոչյան Անուշավան եպս., Աստվածաշունչը և հայ բանավոր ավանդույթը, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, 280 էջ:

ԻՆԳԼԻԶԵԱՆ 1947

Ինգլիզեան Վահան Վ. հ., Հայաստան Սուրբ Գրքի մէջ, Վիեննա, Մխիթարեան տպ., 1947, 236 էջ:

ԻՆՃԻՃԵԱՆ 1806

Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից Մասանց աշխարհի, մասն Ա. Ասիա, Վենետիկ, Ս. Ղազար, 1806:

ԽԱՆԶԱԴՅԱՆ 1965

Խանզադյան Ս. Ն., Քաջարան, Երևան, «Հայաստան», 1965, 586 էջ:

ԽԱՆԶԱԴՅԱՆ 1980

Խանզադյան Ս. Ն., Հայրենապատում, գ. Ա., Երևան, «Հայաստան», 1981, 480 էջ:

ԽԱՆԶԱԴՅԱՆ 1984

Խանզադյան Ս. Ն., Հայրենապատում, գ. Գ., Երևան, «Հայաստան», 1984, 664 էջ:

ԽԱՉԻԿՅԱՆ 1992

Խաչիկյան Լ. Ս., Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը», Երևան, «Զվարթնոց», 1992, 328 էջ:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ 1962

Կարապետյան Ե., Սասուն (Ազգագրական նյութեր), Երևան, Հայպետհրատ, 1962, 202 էջ:

ՀԱԿՈՒԲՅԱՆ 1974

Հակոբյան Գ. Ա., Ներքին Բասենի ազգագրությունն ու բանահյուսությունը, Երևան, «Հայաստան», 1974, 458 էջ:

ՀԱԼԱԶՅԱՆ 1973

Հալաջյան Գ., Դերսիմի հայերի ազգագրությունը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 5, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, 303 էջ:

ՀՄԱՅԱԿՅԱՆ 1992

Հմայակյան Ս. Գ., Հայկ նահապետի մասին առասպելն ու Կիրճա քաղաքը Նիբուրի լեռներում // «Պատմա-բանասիրական հանդես», 1992, 1, էջ 125-132:

ՀՈՎՍԵՓՅԱՆ 2009

Հովսեփյան Հ., Ղարաղաղի հայերը, հ. 1, Երևան, «Գիտություն», 2009, 502 էջ:

ՂԱՆԱԼԱՆՅԱՆ 1969

Ղանալանյան Ա. Տ., Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, 530+33 էջ:

ՄԱՐՈՒԹԵԱՆ 2011

Մարութեան Տ., Կրկին Սեն-Շապելի հարթաքանդակների մասին // «Հանդէս ամսօրեայ», ձիւ տարի, թիվ 1-12, 2011, էջ 503-529:

ՄԵԼՔՈՆՅԱՆ 2013

Մելքոնյան Ա. Մ., «Հաւատոյ մանկունք»-ը և «կատարեալ փիլիսոփա»-ն ըստ

- Գավիթ Անհաղթի // «Վէմ» համահայկական հանդես, Ե (ԺԱ) տարի, թիվ 3 (43), 2013, էջ 69-77:
- ՄԻՐԱԽՈՐԵԱՆ 1885
- Միրախորեան Մ., Նկարագրական ուղևորութիւն ի հայաբնակ գաւառս Արևելեան Տաճկաստանի, Գ., Կ. Պօլիս, Ս. Պարտիզպանեանի տպ., 1885:
- ՄԿՐՏՉՅԱՆ 2006
- Մկրտչյան Ն. Ա., Անատոլիայի նորահայտ հայ բարբառները և բանահյուսություններ, Երևան, «Օրենք և իրականություն», 2006, 600 էջ:
- ՄՈՒՇԵՂՅԱՆ 2003
- Մուշեղյան Ա., Ո՞ր լեռան վրա է իջել Նոյան տապանը // «Պատմա-բանասիրական հանդես», 2003, 1, էջ 3-39:
- ՊԵՏՐՈՍՅԱՆ 2005
- Պետրոսյան Հ. Լ., Տապանի իջման հինկտակարանյան դրվագը և Մասիսը Արարատ վերանվանելու պատմական ու առասպելական հանգամանքները // Աստվածաշնչական Հայաստան, Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2005, էջ 91-99:
- ՊՈՒՈՇՅԱՆ 1984
- Պոռոջյան Պ., Բղդե // Պոռոջյան Պ., Երկեր, Երևան, «Սովետական գրող», 1984, 704 էջ:
- ՍԱՀԱԿՅԱՆ 2017
- Սահակյան Ա. Ս., Մի համաշխարհային խորհրդանիշի ձևավորման հուղայական ակունքը. Նոյի տապանով սրբացված լեռան առասպելը // Հայագիտության հարցեր, 1, Երևան, 2017, էջ 3-15:
- ՍԱՐԳՍՅԱՆ 2001
- Սարգսյան Դ., Բիբլիական «Արարատի լեռները» ըստ սեպագիր արձանագրությունների, «Պատմա-բանասիրական հանդես», 2001, 2, էջ 269-276:
- ՍԻՄՈՆՅԱՆ 2011
- Սիմոնյան Լ. Դ., Հավքն իր թևով, օձն իր պորտով, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, 104 էջ:
- ՍԻՄՈՆՅԱՆ 2022
- Սիմոնյան Լ. Դ., Սուրբ Հակոբ Մծբնա հայրապետի հիշատակը հայոց մեջ, Երևան, ՎՄԿ-ՊՐԻՆՏ, 2022, 311+32 էջ:
- ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ 1979
- Տեր-Մկրտչյան Գ., Հայկականք Ա-ԺԲ // Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, գ. Ա., Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1979, 537 էջ:
- ГРЕЙВС 1992
- Грейвс Р., Мифы Древней Греции, Москва, «Прогресс», 1992, 624 с.
- ДЪЯКОНОВ 1961
- Эпос о Гильгамеше («О все видавшем»), пер. И. М. Дьяконова, Москва-Ленинград, Изд-во АН СССР, 1961, 214 с.

ДЪЯКОНОВ, ЯНКОВСКАЯ 1989

Дьяконов И. М., Янковская Н. Б., Эламский диалог Гильгамеша и Сидури и другие эламские тексты из Аргиштихинеле (Армавир) // «Պատմա-բանասիրական հանդես», 1989, թ. 2, էջ 55-62:

КУЗНЕЦОВА 2017

Кузнецова В., Почему у ласточки хвост раздвоенный: о мифологическом сюжете в «Народной Библии» // «Живая старина», Москва, 3, 2017, с. 40-43.

ПАТКАНОВЪ 1875

Паткановъ К., Ванскія надписи и значеніе ихъ для исторіи Передней Азіи, III, Журналъ Министерства Народнаго Просвещенія, июнь, 1875, CLXXX.

ФРЭЗЕР 1985

Фрэзер Дж., Фольклор в Ветхом Завете, Москва, «Политическая литература», 1985, 542 с.

ШОПЕН 1852

Шопен И., Историческій памятникъ состоянія Армянской-области въ эпоху ея присоединения къ Россійской-имперіи, СПб, тип. Императорской Академіи Наукъ, 1852:

MURAD 1901

Murad F., Ararat und Masis, Studien zur Armenischen Altertumskunde und Literatur, Heidelberg, Carl Winter's, 1901.

PARROT 1846

Parrot F. Dr. 1846, Journey to Ararat, transl. W. D. Cooley, N. Y., Harper & brothers, 1846.

ULUHOGIAN 2000

Uluhogian G., Un'antica mappa dell'Armenia: Monasteri e santuari dal I al XVII secolo, Longo editore Ravenna, 2000, 199 p.

Բառարաններ

ԱԻԵՏԻՔԵԱՆ և այլք 1981

Աւետիքեան Գաբրիէլ հ., Սիրմէլեան Խաչատուր հ., Աւգերեան Մկրտիչ հ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատ. 2, Երևանի համալսարանի հրատ, Երևան, 1981:

ՄԱԼԻԱՍՅԱՆ 1945

Մալխասյան Սո., Հայերէն բացատրական բառարան, հատ. 4, ՀՍՍՌ Պետհրատ, Երևան, 1945:

Այլ

ASBAREZ 2012

Տարօնի Տոհմիկ Օր, Asbarez, օգոստոս 16, 2012: <https://asbarez.am/տարօնի-տոհմիկ-օր/>

ՆՈՅ ՆԱՀԱՊԵՏԸ
(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԻՊԱՇԱՐ)
Աշխատասիրությամբ՝
Կարեն Հովհաննիսյանի

Էջադրող՝ Կ. Հովհաննիսյան

Շապիկին գետեղված է Հ. Այվազովսկու «Նոյն իջնում է Արարատից» կտավը
(գտնվում է Հայաստանի ազգային պատկերասրահում)

